

Ս. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ

9(47.925)
4-29

81

23169 Կարապետյան

Առեփարկյան հայաս-
տան

ՆՎԻՐՈՒՄ ԵՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ 20 ԱՄՅԱԿԻՆ
Հ Ե Ղ Ի Ն ա Կ



06 FEB 2009

01 SEP 2011

9(47.925)

4-29
2425 a


Ս. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԵՍՏԱՆ

23/69

(ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ 20-ՐԴ ՏԱՐԵԳԱՐՁԻ ԱՌՅԻՎ)

ՀԻՅ



18 MAY 2013

9309

ՄԻԱՅՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
ԳԱՂԱՓՈՐԳ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԲԵՐԾՑ ԽԱ-
ՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԺՐ-
ՆԸՆԴԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դ. ՍՏԱԼԻՆ

Срп. К. А. ПЕТЯН
СОВЕТСКАЯ АРМЕНИЯ
Армгиз, Ереван
1940

704-2009

Հայ ժողովուրդը Սովետական Միութեան ամենափոքր ժողովուրդներից մեկն է, նրա ծագումը և կազմավորումը կատարվել է VI—IV դարերում մեր թվականությունից առաջ: Այդ հեռավոր անցյալում Հայկական լեռնաշխարհում բնակվում էին տեղական միջաբնուցեցիկ ժողովուրդներ, որոնց մեջ առանձնապես աչքի էին ընկնում արմենները, խայասները, խալդերը և այլն: Այդ ցեղերի միաձուլումից էլ կազմվեց Հայ ժողովուրդը, որն իր երկրի ներսում «Հայասի» ցեղի անունով կոչվում է Հայ, իսկ երկրից դուրս, մյուս ժողովուրդների կողմից՝ արմեններ կամ արմյաններ— «արմեն» ցեղի անունով:

Մեր թվականությունից առաջ երկրորդ դարում կազմակերպվեց Հայկական առաջին պետությունը, որի հիմնադիրն էր Արտաշես I թագավորը: Արտաշեսի գլխատիան, որ հիմնվել էր 189 թվականին, շարունակվեց մինչև 1 թվականը մ. թ. ա.:

Հայկական պետությունը մեծապես բարգավաճում և ամրապնդվում է Տիգրան II (որն անվանվում է նաև Տիգրան Մեծ) թագավորի օրոք, որի տիրապետությունը տևեց 40 տարի,—95 թ. մինչև 55 թ. մ. թ. ա.: Գրեթե կես դար տևող իր թագավորության ընթացքում Տիգրան II-ը խոշոր դործ կատարեց Հայաստանի էկոնոմիկան և կուլտուրան զարգացնելու համար: Հայաստանի հարավում նա հիմնեց նոր մայրաքաղաք— Տիգրանակերտը, Մոփղի թագավորությունը միացրեց Մեծ Հայքի հետ և կազմեց Հայկական մի ամբողջական պետություն: Նրա օրոք Հայաստան է մտնում հելլենական կուլտուրան, ստեղծվում է

հայկական առաջին թատրոնը և այլն: Պոնտոսի թագավոր Միհրդատի հետ դաշնակցած՝ Տիգրան II-ը հերոսական պայքար է մղում անուղիղ հայկական Հռոմի դեմ և քանիցս ծանր պարտություններ է պատճառում հռոմեական լեգեոններին: Տիգրան II-ը հանդիսանում է ամենախոշոր և առաջադեմ թագավորներից մեկը Հայաստանի պատմության մեջ:

Մեր թվականության 66 թվականին Հայաստանում հիմնվեց մի նոր դինաստիա՝ Արշակունիների դինաստիան, որի հիմնադիրն էր Տրդատ I-ը: Նոր դինաստիան Հայաստանի պետական անկախությունը պահպանեց մինչև IV դարի ութսունական թվականները: 387 թվին, երկարատև պատերազմներից հետո, Հայաստանը բաժանվեց երկու կայսրությունների՝ Բյուզանդիայի (Հռոմեական կայսրություն) և Պարսկաստանի միջև: Արևմտյան Հայաստանը միացվեց Բյուզանդիային, իսկ Արևելյան Հայաստանը՝ Պարսկաստանին: Արևելյան Հայաստանում երկիրը կառավարում էին մարզպանները— փոխարքաները, որոնք նշանակվում էին պարսկական արքունիքի կողմից: Կառավարման այդ սխեման, որի կենտրոնը Իվին քաղաքն էր, իր գոյությունը պահեց ավելի քան երկու դար: Հայաստանի պատմության մեջ ընդունված է այդ ժամանակաշրջանն անվանել մարզպանական ժամանակաշրջան: Արևմտյան Հայաստանը, որի կենտրոնը Թեոդոսոպոլիս (Էրզրում) քաղաքն էր, կառավարում էին բյուզանդական կայսրների նշանակած պաշտոնյաները— կուրոպալանները:

Հայաստանի թե՛ արևմտյան և թե՛ արևելյան մասում անառնելի ուժեր էր հաստատվել: Հայ ժողովուրդը դաժան շահագործման, ճնշման և քայքայման էր ենթարկվում: Շահագործումը և ճնշումները ոչ միայն անտեսական, այլև արտատնտեսական, բարոյական ընդյոթ էին կրում: Արևելյան Հայաստանում ժողովրդի կեղեքումն ու քայքայումն ուժեղացան մասնավորապես պարսկական թագավոր Հազկերտ II-ի օրոք, որը 440-ական թվականներին փորձեց իր իշխանության տակ դանդաղ երկրների (Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի) ժողովուրդներին ստիպել, որ հրաժարվեն քրիստոնեական կրոնից, աեղական օրենքներից, և ընդունեն զրադաշտական կրոնը:

Հայ ժողովուրդը, որ մասնատված էր և գտնվում էր եր-

կու հզորագույն տերութայունների իշխանության տակ, այնուամենայնիվ չդադարեց պայքարել իր անկախության համար: Դաժան ճնշմանը և շահագործմանը նա պատասխանում է մասնաշահական ապստամբություններով: Պարսկաստանի դեմ ուղղված խոշոր ապստամբություններից մեկը տեղի ունեցավ 451 թվին: Այդ ապստամբությունը խորապես ժողովրդական-հերոսական ապստամբություն էր, որ զլխավորում էր իշխան Վարդան Մամիկոնյանը: 451 թվի ամսան ապստամբները նրա առաջնորդությամբ Այվարայրի հռչակավոր ճակատամարտն են տալիս պարսկական կանոնավոր զորքերի դեմ, որոնք թվով հինգ անգամ զերազանցում էին հայկական զորքից: Թեև 451 թվի ապստամբությունը մի շարք պատճառներով պարտվեց, բայց և այնպես, խոշոր նշանակություն ունեցավ. այն ստիպեց Պարսկաստանին հրաժարվել Հայաստանը բռնություններով Պարսկաստանին միացնելու և նրա ազգային ինքնությունը ոչնչացնելու պլանից: 451 թվի ապստամբությունն ամրապնդեց հայ ժողովրդի հավատն իր հաղթանակի նկատմամբ, նա դարերի ընթացքում չդադարեցրեց իր պայքարը Պարսկաստանի դեմ: Պարսկաստանի դեմ մի նոր ապստամբություն ծագեց 481—484 թ. թ.: Այդ ապստամբությունը զլխավորում էր Վահան Մամիկոնյանը: Դա երկու եղբայրական ժողովուրդների՝ հայերի և վրացիների միացյալ ապստամբություն էր: Մի շարք վճռական ճակատամարտերում պարսկական զորքերը պարտություն են կրում և նահանջում են Հայաստանից, ինչպես նաև Վրաստանից: 571 թվին բարձրանում է ապստամբության նոր ալիք: Ապստամբները համառ պայքարում մի քանի անգամ Հայաստանի սահմաններից քշում են պարսկական զորքը, զրափում են Իվին քաղաքը: Ժողովրդական այդ ապստամբությունը վերջի վերջո ստիպեց պարսկական կառավարությանը կատարել մի շարք դիմումներ:

Հայ ժողովուրդը բազմիցս ապստամբվել է նաև Արևմտյան Հայաստանում, Բյուզանդիայի դեմ: Ծիշտ է, այդ ապստամբությունները չունենին այնպիսի մեծ ծավալ, ինչպես Արևելյան Հայաստանում, բայց և այնպես գրանց հանդիսացան պանծալի էջեր այն հերոսական պայքարի, որ հայ ժողովուրդը մղում էր իր հափշտակիչների և ճնշողների դեմ:

Հայ ժողովրդի կեղեքումը Բյուզանդիայի և Պարսկաստանի լծի տակ շարունակվեց մինչև VII դարի կեսը: Այդ շրջանում գլուխ է բարձրացնում հարավի մի նոր նվաճող՝ արաբական խալիֆայությունը: Միմյանց դեմ մղած երկարատև պայքարից թուլացած Բյուզանդիան և Պարսկաստանը չկարողացան դիմադրություն ցույց տալ արաբներին, որոնք սկսեցին մեկը մյուսի հետևից գրավել Պարսկաստանի և Բյուզանդիայի իշխանությունների տակ գտնվող երկրները: Ջախջախելով Պարսկաստանը, արաբները 642 թվականից սկսեցին իրենց ավերիչ հարձակումները նաև Հայաստանի վրա: Հայ ժողովուրդը հերոսաբար դիմադրում էր արաբական արշավանքին և իր լավազույն զավակների կյանքի գնով պաշտպանում էր հայրենի երկրի յուրաքանչյուր թիղ հողը: Այդ հերոսական պայքարում փառքով պսակեց իրեն քաջարի իշխան Թեոդորոս Ռչտունին: 652 թվին Մուավիա խալիֆը ռազմական մեծ ուժերով ներխուժում է Հայաստան և սկսում զաղանաբար ավերել երկիրը: Հայաստանի այն ժամանակվա կառավարիչը՝ Համազասպը, համոզվելով, որ անհնարին է դիմադրել բազմապատիկ անդամ գերազանցող արաբական ուժերին, վերջնականապես ճանաչում է արաբական խալիֆայության իշխանությունը Հայաստանի վրա: Այդ ժամանակից սկսած պարսկա-բյուզանդական լծին փոխարինում է արաբական լուծը, որը շարունակվում է ավելի քան երկու հարյուր տարի (652—885):

Արաբների տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանը դարձավ արաբական պետության պրովինցիաներից մեկը և մտցվում է Ստրապատականի փոխարքայության կազմի մեջ: Արաբական բռնակալությունը ևս հայ ժողովրդի համար ստեղծեց ծանր, դաժան լուծ:

Հայ ժողովուրդը հերոսական պայքար մղեց նաև այդ նոր՝ արաբական նվաճողների և կեղեքիչների դեմ: Քանի՞, քանի՞ անգամ նա աղափուլության դրոշ է բարձրացնում և կռվի նետվում իր անկախության համար, այդ մարտերում ցուցաբերելով իսկական հերոսություն: 703 թվին ապստամբած հայերի երկու հազարանոց մի բանակ Արաքս գետի մոտ ճակատամարտի է բռնվում արաբների հինգ հազարանոց բանակի դեմ և, չնայած արաբների թվական գերազանցությանը, նրանց հինգ

հազարանոց ջոկատն ամբողջովին ջարդվում է: Թոշար էր 772—775 թ. թ. ապստամբությունը, որը Եփրատ գետի արևելյան ափում վերջացավ արյունահեղ ճակատամարտով: Ապստամբությունը դեկավարում էին՝ քաջարի առաջնորդ Մուշեղ Մամիկոնյանը և հայկական զորքի հրամանատար Սմբատ Բագրատունին: Այդ ճակատամարտում ապստամբած հայերի հինգ հազարանոց բանակը դուրս եկավ երեսուն հազար արաբների դեմ: VIII դարի պատմագիր Աեփոնդը այդ կառակցությունը դրում է, որ հայերը «դայրացած սրտով պատրաստվեցին դիմադրել թշնամուն» և երգվեցին՝ «Քաջաբար մեռնենք մեր երկրի և ժողովրդի համար»:

Արաբների դեմ ապստամբում է նաև հյուսիսային Պարսկաստանը: Խալիֆաթը զորավար Աֆշինի գլխավորությամբ մի մեծ բանակ է ուղարկում ապստամբների դեմ: Ծնչելով Պարսկաստանում եղած ապստամբությունը, Աֆշինն ավերում է նաև Հայաստանը: Բայց երկրի ավերումը և գյուղացիության ստրկացումն իր դադաթնակետին է հասնում 850-ական թվականներին, արաբական ուստիկան Յուսուֆի օրոք, որն ավերում աւ թալանում է մասնավորապես Սասունը և նրան կից մարզերը: Բազմաթիվ հայ դերիններին նա մասամբ ծախում, մասամբ էլ ստրուկներ է դարձնում: Սասունի մարզի միայն մի փոքր, լեռնային մասն է փրկվում արաբական հարձակումների սարսափներից, շնորհիվ այն հանդամանքի, որ այդ շրջանի բնակչությունն իր անկախությունը պաշտպանելու գործում բացառիկ հաստատակամություն և մարտական ոգի է ցուցաբերում: Դրան որոշ ջափով նպաստում էին շրջանի աշխարհազրական բարենպաստ դերքը, անմատչելի լեռները և այլն:

850 թվին Սասունում արաբների դեմ բռնկվեց մի խոշոր ապստամբություն, որի ալիքները տարածվեցին ամբողջ երկրում և արձագանք գտան Վրաստանում և Ադվանքում: Ապրատամբներն իջնում են լեռներից, դաշտային մասի բնակչությանը միացնում են իրենց և կռվի են բռնվում Յուսուֆի զորքերի հետ: Մուշ քաղաքում ապստամբները գլխովին ջարդում են արաբական արյունաբերու նվաճողի զորքը: Սարսափելով սասունցիների գրոհից՝ Յուսուֆը թագնվում է Մուշի կեղեքեցու գրմբեթի տակ, հուսալով, որ այնտեղ կխնայեն իրեն: Բայց մեծ

էր ժողովրդի ցասումը: Ապստամբած գյուղացիները ոչնչացնում են դահճին:

Ժողովրդական պայքարի այդ հերոսական էստրադան հետագայում հայ ժողովրդի նշանավոր էստրադի «Սասունցի Դավթի» ստեղծման հիմքը դարձավ: Էստրադի գլխավոր հերոսի՝ Դավթի կերպարում մարմնավորված է հերոսական հայ ժողովուրդը, որը շատ դարերի ընթացքում, անհավասար պայքարում պաշտպանում էր իր ազատութունն ու անկախութունը: Դավթի կերպարը հավաքական է, նրա մեջ արտացոլված են հայ ժողովրդի բոլոր լավագույն դժերն ու իղձերը, սերը դեպի ազատութունը, դեպի աշխատանքը, նվիրվածութունը հայրենիքին և այլն:

Մի կողմից ժողովրդական ապստամբությունը Հայաստանում, մյուս կողմից արաբական տերության ներքին թուլացումը արդեն IX դարի կեսից խալիֆայի ստիպեցին գիշումներ անել և Հայաստանի նկատմամբ փոխել իր քաղաքականությունը: Մուսուլմանները խալիֆը 859 թվին Հայաստանի կառավարիչ է նշանակում հայ իշխան Աշոտ Բագրատունու, «Իշխանաց իշխան» տիտղոսով: Օգտվելով գրանից և մի շարք բարենպաստ այլ պայմաններից, Աշոտ Բագրատունին ուժեղացնում է իր իշխանությունը և 885 թվին ստանալով թագավորի տիտղոս, արքայական դահ է բարձրանում: Հիմնվում է մի նոր պինաստիա — Բագրատունիների դինաստիան, որի տիրապետությունը Հայաստանում շարունակվում է մինչև 1045 թվականը: Բագրատունիների ժամանակաշրջանում վերածնվեց Հայաստանի պետական-քաղաքական անկախությունը: Արագությունը դարգացավ երկրի էկոնոմիկան և կուլտուրան: Բագրատունիների թագավորության մայրաքաղաքը՝ Անին դարձավ իր ժամանակի հարուստ և գեղեցիկ քաղաքներից մեկը: Բագրատունիների թագավորության հետ միաժամանակ մի շարք անկախ իշխանություններ առաջացան Վասպուրականում, Սյունիքում և Հայաստանի այլ մասերում: Այդ ժամանակաշրջանում, X և XI դ. դ. սկզբում, Հայաստանում գյուղացիական ապստամբություն բռնկվեց կալվածատեր-Ֆեոդալների և Ֆեոդալականացած եկեղեցու դեմ: Այդ հզոր շարժումը Հայաստանի պաամության մեջ կոչվում է թոնդրակեցիների շարժում:

XI դարի սկզբում Բյուզանդիան վերսկսում է իր նվաճողական քաղաքականությունը: Բյուզանդիան բռնություններ և կաշառքով գրավում է Հայաստանը: 1045 թվին բյուզանդացիները խարդախությամբ և խաբեբայությամբ միջոցով գրավեցին Անին: Բագրատունիների թագավորության անկումով Հայաստանը կորցրեց իր անկախությունը և ընկավ Բյուզանդիայի լծի տակ: Սակայն Բյուզանդիան երկար չտիրեց Հայաստանին: 1049 թվից թուրք-սելջուկներն սկսեցին արշավել Հայաստանի վրա: Մի շարք ճակատամարտերից հետո Բյուզանդիան պարտություն կրեց և նահանջեց, Հայաստանը 1071 թվից ընկավ թուրք-սելջուկների կիսամայրենի ցեղերի լծի տակ: Վերջինների տիրապետությունը շարունակվեց մինչև XII դարի կեսը: XII դարի երկրորդ կեսում և XIII դարի առաջին տասնամյակներում վրաստանի եղբայրական օգնությամբ Հայաստանի մեծ մասն ազատվեց թշնամու հորդաններից և մասամբ վերականգնեց իր անկախությունը՝ Չաքարյան հայ իշխանների գլխավորությամբ: Այդ ժամանակաշրջանում Միջերկրական ծովի հյուսիս-արևելյան ափերում — Կիլիկիայում կազմակերպվում է հայկական ինքնուրույն և անկախ պետություն: Դեռ XI դարի վերջում (1095 թ.) Հայաստանից դաղթած բնակչությունը Ռուբեն իշխանի գլխավորությամբ Կիլիկիայի լեռներում կազմակերպել էր հայկական ինքնուրույն իշխանություն: Հետզհետե ամրապնդվելով և ուժեղացնելով՝ Կիլիկիայի իշխանությունը XII դարի վերջում վերածվում է անկախ թագավորության: 1198 թվականին իշխան Լևոն II-ը թագավորական տիտղոս ընդունեց և հանդիսավոր կերպով թագավոր օժիպեց: Կիլիկիայի հայկական պետությունն ուներ տնտեսական զարգացած հարաբերություններ և բարձր կուլտուրա: Այդ թագավորությունը Չախլախեց Եգիպտոսի սուլթանը 1375 թվին:

XIII դարի 30-ական թվականներից Հայաստանն ընկավ մոնղոլների ծանր լծի տակ: Մի շարք ավերիչ հարձակումներից հետո մոնղոլական բանակները հաստատվեցին Հայաստանում, ստեղծելով վայրենի, անտանելի մի ուժիմ: Իրենց քաղաքի վրա արշավանքների ժամանակ մոնղոլական խաները հրդեհում էին գյուղերը, բնակչությունը սրի էին քաշում և ամբողջ մարդեր ուղղակի ավերակների էին վերածում: Մոն-

ղոյների տիրապետութեան ժամանակ երկրի տնտեսական կյանքը չտեսնված անկման է հասնում: Հայերը և վրացիները բազմիցս միատեղ ապստամբում են մոնղոլական լծի դեմ: Բայց նրանց չի հաջողվում իրենց երկրից դուրս քշել մոնղոլական նվաճողներին: XV դարի սկզբում (1405 թ.) Լենկ-Թեմուրի մահից հետո մոնղոլական լայնածավալ պետութունն անկման է հասնում: Բայց մոնղոլներին փոխարինում են Կարա-Գոյուն և Աղ-Գոյուն կոչված թուրքմենական ցեղերը, այնուհետև Պարսկաստանը և Թուրքիան: Հայաստանը շարունակում է ուժասպառ լինել այդ նոր նվաճողների և կողոպտիչների լծի տակ:

Հայաստանի պատմութեան մեջ XV և XVI դարերը կազմում են ամենամուսուլ էպոխան: Թուրքմենական Կարա-Գոյուն և Աղ-Գոյուն ցեղերի անվերջ արշավանքները մի կողմից, Հայաստանի տերիտորիայում թուրք-պարսկական պատերազմները մյուս կողմից՝ երկիրը հասցրին չտեսնված քայքայման, դյուրերի և քաղաքների ավերածութեան, առևտրական ճանապարհների փակման: Տնտեսական և քաղաքական անտանելի պայմանները, բարբարոսական շահագործումը և անվերջ արան-թալանը հայ բնակչութեանը ստիպում են դաղթել ուրիշ երկրներ— Հյուսիսային Կովկաս, Լեհաստան, Ղրիմ, Եգիպտոս և այլն: Վաճառականները դաղթում են նաև Ամստերդամ, Վենետիկ, Լիով, Կոստանդինուպոլիս և եվրոպական ուրիշ առևտրական քաղաքներ: Նոր բնակավայրերում ստեղծվում են հայկական դաղութներ, որոնց մի մասը հետագայում խոշոր դեր խաղաց հայկական կոլոնուրալի զարգացման գործում (օրինակ՝ Մադրասը, Վենետիկը):

XVII դարի սկզբում սկսվեց թուրք-պարսկական մի նոր պատերազմ: Պարսից շահ Աբաս I-ը պատերազմ է հայտարարում Թուրքիային և 1603 թվականին հարձակվում է Հայաստանի վրա, որն այն ժամանակ դեռ գտնվում էր Թուրքիայի տիրապետութեան տակ: Թուրք-պարսկական այդ նոր պատերազմը փոքր ընդմիջումներով շարունակվում է ավելի քան 35 տարի: Պատերազմը զարհուրելի հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար, որի մի զգալի մասը փաստորեն ոչնչացվեց, մանավանդ այն ժամանակ, երբ Արարատյան դաշտի և հարևան չրջանների բնակչութունը հարկադրաբար դաղթեցվեց Պարսկաստան:

Բաղմաթիվ ճակատամարտերից հետո, 1639 թվի վերջում, պարսից շահ Սոֆի I-ը և թուրքաց սուլթան Մուրադ IV-ը հաշտութուն են կնքում և Հայաստանը բաժանում են միմյանց մեջ, ըստ որում նրա ամենամեծ— արևմտյան մասն անցնում է Թուրքիային, իսկ փոքրը— արևելյան մասը՝ Պարսկաստանին: Այդ ժամանակից սկսած մինչև XIX դարը, այսինքն մոտ երկու դար, Հայաստանը մնում էր Թուրքիայի և Պարսկաստանի միջև բաժանված:

1639 թվին Պարսկաստանի և Թուրքիայի միջև կնքված հաշտութունը շարունակվեց դրեթե մի ամբողջ հարյուրամյակ: Այդ հանգամանքը նպաստեց Հայաստանի տնտեսական կյանքի աշխուժացմանը և որոշ զարգացմանը, մանավանդ Պարսկաստանին անցած մարդերում: Սակայն այդ ժամանակաշրջանը միաժամանակ նաև ամենադաժան շահագործման ժամանակաշրջան էր, և այդ շահագործումն էլ ավելի ուժեղացավ XVII դարի վերջում Պարսկաստանի և սուլթանական Թուրքիայի քաղաքական ու պետական քայքայման հետեմանքով: Ժողովրդի ճնշումն ու ստրկացումը բարբարոսական ձևեր է ընդունում: Աշխատավորների դեմ ուղղակի բռնութուն գործադրելը, բացահայտ կողոպուտը, ազգային հալածանքները մասսայական կերպարանք են ստանում: Հազարավոր հարկահատվածներ վրիստում են երկրում, անվճարունակ դյուրացիներին խոչտանգումների և դանակոծութեան են ենթարկում, հաիշտակում նրանց վերջին ունեցվածքը, շատ դեպքերում տանում են երեխաներին, բռնութունների են ենթարկում կանանց: Բնակչութեան դժգոհութունն ավելի և ավելի է աճում, ուժեղանում է ժողովրդի ձգտումը՝ ազատվել ճնշողներից: Հենց այդ ժամանակից հայերն իրենց հայացքը դարձնում են դեպի ոռոս մեծ ժողովուրդը: XVII դարի վերջում և XVIII դարի սկզբում Իսրայել Օրին, հայ ազգային-ազատագրական շարժման ակնավոր գործիչներից մեկը, փորձեր է անում Ռուսաստանի օգնութեամբ ազատագրել հայ ժողովուրդը: Այդ նպատակով նա դիմում է Պետրոս I-ին: Բայց Օրիի փորձերը հաջողութեամբ չստանալիս:

XVIII դարի 20-ական թվականներին օտարերկրյա նվաճողների դեմ բարձրանում է հայ-վրացական միացյալ ապստամ-

բության ալիքը: Մի շարք կետերում ղինված շոկատներ են կազմակերպվում: Ձինված ուժերի կազմակերպման գործում հայերին մեծ օգնություն է ցույց տալիս վրաց թագավոր Վախթանգը: Ապստամբության կազմակերպիչները հույս էին դրել ուսական բանակի օգնության վրա: 1722 թվին հայ-վրացական փոխադարձ օգնության համաձայնություն է կնքվում: Ապստամբած հայերի ղինված ուժերի կենտրոններից մեկը ստեղծվում է հարավային Հայաստանում՝ Չանգեղուրում (Ղափան): Այստեղ ապստամբների ութ հազարանոց բանակի գլուխըն է անցնում հայ քաջարի զորավար Դավիթ-բեկը, որի առաջնորդությամբ Չանգեղուրի ամբողջ բնակչությունը դուրս է գալիս պարսկական տիրապետության դեմ: Օտարերկրյա ըստըրկացնողի դեմ ուղղված հերոսական պայքարում ապստամբներին հաջողվեց ընկճել դարավոր թշնամուն, երկրից դուրս քշել պարսկական խաներին, ամբողջ Չանգեղուրը մաքրել պարսկական տիրապետությունից և սեփական իշխանություն հաստատել ամբողջ Ղարաբաղում: Բայց պայքարը երկար է տևում: Այվելի քան յոթը տարվա ընթացքում հայերը շարունակում են պայքարել մի կողմից պարսկական խաների դեմ, որոնք փորձում էին վերստին տիրանալ Չանգեղուրին, մյուս կողմից սուլթանական Թուրքիայի դեմ, որը նույնպես ձգտում էր նվաճել Ղարաբաղը և տիրապետել ամբողջ երկրին: Բայց Դավիթ-բեկի հերոսական բանակը վճռական դատեմարտերում լիակատար հաղթանակ է տանում թե՛ պարսիկների և թե՛ թուրքերի դեմ: Եվ միայն Դավիթ-բեկի մահից (1728) և Չանգեղուրի բանակի քայքայումից հետո պարսիկներին հաջողվում է վերականգնել իրենց տիրապետությունը:

XVIII դարի երկրորդ կեսին նոր փորձեր են արվում Ռուսաստանի օգնությամբ ազատագրել հայ ժողովուրդին: Այդ նպատակով աշխույժ գործունեություն է սկսվում, որի գաղափարական ներշնչողներն էին Հովսեփ Էմինը, Շահամիր Շահամիրյանը և այլն: Նրանք վրաց թագավոր Չերակլի հետ բանակցություններ են վարում փոխադարձ օգնության մասին, ղևում են ցարական կառավարության օգնությանը, ազատագրական գաղափարների պրոպագանդա էին անում և այլն: Բայց այդ բո-

չոր փորձերը նույնպես ձախողվեցին և հայ ժողովուրդի տառապանքը շարունակվեց թուրքական և պարսկական լծի տակ:

Հայ ժողովուրդի պատմության մեջ նոր էջ է բացվում XIX դարի սկզբից, այն մոմենտից, երբ ցարական Ռուսաստանը նվաճում է Արևելյան Հայաստանը: 1801 թվին Վրաստանը միացվեց Ռուսաստանին: Այդ ակտով Ռուսաստանին է միացվում նաև Հայաստանի մի մասը — Լոռու և Դիլիջանի շրջանները: Հետագա տարիներին ցարիզմը հետզհետե նվաճում է Անդրկովկասի նաև մյուս մասերը, իսկ 1827 թվին ուսական զորքերը ղեներալ Պասկևիչի (որը հետագայում կոչվեց Գրաֆ Երեվանսկիյ) հրամանատարությամբ գրավում են Երեվանը: Վերջնականապես պարտված Պարսկաստանն ստիպված էր 1828 թվին Ռուսաստանի հետ պայմանագիր (Թուրքմենչայի) կնքել, որի համաձայն ամբողջ արևելյան Հայաստանն անցնում էր Ռուսաստանին: 1828 թվին սկսվում է ուս-թուրքական պատերազմ: Նույն Պասկևիչին հաջողվում է գրավել Ղարաբ, էրզրումը և այլ շրջաններ:

Պարսկաստանի և Թուրքիայի դեմ մղված պատերազմներում հայերն ամեն տեսակ թշակցություն էին ցույց տալիս ուսական զորքերին: Հայ բնակչությունն ամենուրեք միանում էր ուսական զորքերին և կռվում իր դարավոր ստրկացնողների՝ պարսիկների և թուրքերի դեմ: Հայ ժողովուրդը պարսկաթուրքական դարավոր դաժան լծից իր ազատագրությունը տեսնում էր ուս բանակի հաղթանակի մեջ և նա իրավացի էր: Հայաստանի միացումը ցարական Ռուսաստանին, պարսկաթուրքական տիրապետության համեմատությամբ պրոգրեստիվ մի քայլ էր, չարիքները փոքրադույնը: Կովկասյան երկրները, դրանց թվում նաև Հայաստանը, միացնելով իրեն, ցարական կառավարությունն, իհարկե, բոլորովին այլ նպատակներ ունեցրեց և առաջին հերթին նա ցանկանում էր այդ երկրները դարձնել իր գաղութը և իր նվաճողական գաղութային քաղաքական պրացդարմն արևելքում: Հայաստանի միացումը Ռուսաստանին՝ բնավ չէր նշանակում, թե հայ ժողովուրդն ազատագրվում է շահագործումից և ազգային ճնշումից: Ֆարսկան ստրուկները մոտ մեկ դարի ընթացքում քիչ չէին շահանում իրենց ազատության արյունների արյունը, հայ ժողովուրդը ընդհանուրապես նոր լծի տակ:

23169

755

704 - 2009



Սակայն ցարիզմի կողմից Հայաստանի նվաճումը գրական, պրոզերեստիվ երևույթ էր: Դրա շնորհիվ հայ ժողովուրդը ոչ միայն նոր հնարավորություններ էր ստանում տնտեսական և կուլտուրական զարգացման համար, այլև, որ գլխավորն է, նա մերձենում էր ուսման մեծ ժողովրդին, և իր բախտը կապում նրա հետ: Միայն ուսման մեծ ժողովրդի եղբայրական օգնությունը, լենինի-Ստալինի բոլշևիկյան փառապանծ պարտիայի ղեկավարությունում հայ ժողովուրդը վերջնականապես փրկվեց դարավոր ճնշումից և իսկական ազատություն ստացավ:

Այլ վիճակ ունեցավ արևմտյան Հայաստանը, կամ ինչպես նրան անվանում են՝ Թուրքահայաստանը: Դեռ երկար ժամանակ նա տնջում էր սուլթանական Թուրքիայի դատան լծի տակ: Հայ ժողովրդի բարբարոսական շահագործումը և ծայրահեղ ճնշումը շարունակվում էին նոր ուժով: Ի պատասխան այդ ճնշման, ծանր հարկերի և աղբյային հալածանքի՝ ժողովուրդը նորից գեներ վերցրեց: 1862 թվին ժողովրդական ապստամբություն բռնկվեց Զեյթունում, 1894 և 1903 թվականներին՝ Սասունում և այլ վայրերում: Բայց այդ ապստամբությունները, որ ժողովրդական, ազգային-ազատագրական բնույթ ունեին, դատանորեն ճնշվեցին: Արյունարբությունից Աբդուլ Համիդը սխտեմատիկորեն հայկական ջարդեր էր կազմակերպում: Թուրքական այդ սուլթանը 1894—96 թվականներին ավերեց հարյուրավոր գյուղեր, սպանեց և ոչնչացրեց ավելի քան հարյուր հազար հայ: Հայերի կոտորածը զարհուրելի չափերի հասավ մասնավորապես առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին: 1915 և 1916 թվականներին Թուրքական կառավարությունը Փիլիքապես ոչնչացրեց մոտ մեկ միլիոն հայ և բառիս բուն իմաստով ավերեց, քարուքանդ արեց ամբողջ Արևելմտյան Հայաստանը: Եվ բնորոշ է, որ եվրոպական տերությունները, որոնք չարաչափում էին «հայկական հարցը» և շահերատու փոքր ժողովուրդների իրավունքի մասին, ոչ մի բան չէին արած: Ընդհանրապես, երկրով իրենց նվաճողական պլաններին, նրանք խրախուսում էին Թուրքական կառավարությանը՝ հայկական ջարդեր կազմակերպելու գործում:

Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ ռեվոլյուցիան, որ

համաշխարհային պատմություն մեջ սոցիալիստական դարաշրջանի սկիզբ դրեց, մի նոր էպոխա բացեց ճնշված ժողովուրդների համար: Ժողովուրդները, մասնավորապես հայ ժողովրդի ազատագրությունը կապվեց Սոցիալիստական մեծ ռեվոլյուցիայի հաղթանակի հետ: «...Ռուսաստանի ժողովուրդների բախտը,— գրում էր ընկեր Ստալինը 1917 թվի դեկտեմբերին,— մանավանդ հայ ժողովրդի բախտը սերտորեն կապված է Հոկտեմբերյան ռեվոլյուցիայի բախտի հետ»:

Հոկտեմբերյան ռեվոլյուցիան ջերմ արձագանք դատավ Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաների մեջ: Սկսվեց լայն և հզոր պայքար Հայաստանում Սովետական իշխանություն հաստատելու համար: Բայց կոնտրռեվոլյուցիան իմպերիալիստական պետությունների օգնությունը ժամանակավոր հաղթանակ տարավ: Հայաստանում հաստատվեց դաշնակիցների բուրժուա-կոնտրռեվոլյուցիոն իշխանությունը, որը դոյություն ունեցավ մինչև 1920 թվի նոյեմբերի 29-ը:

Դաշնակիցների այդ հակաժողովրդական, կոնտրռեվոլյուցիոն կառավարությունն իր տիրապետություն կարճ ժամանակամիջոցում հայ ժողովրդին հասցրեց Փիլիքական ոչնչացման աստիճանին: Թեև դաշնակիցներն իրենց կառավարությունն «անկախ» և ինքնուրույն էին հայտարարում, բայց ըստ էության այն կառավարության մի խրոմիլիակ, խաղալիք էր իմպերիալիստական պետությունների — մերթ դերման-Թուրքական, մերթ անդր-Փրանսիական և ամերիկական պետությունների ձեռքին: 1920 թվին դաշնակցական կառավարությունն իր կամքն էր թելադրում ամերիկական գնդապետ Հասկելը: 1919 թվին, Փրանսիական զինվորականության ներկայացուցիչները դաշնակցական կառավարությունից բռնություններ գրավեցին Հայաստանի ամբողջ բամբակը: Այդ օտարերկրյա տերերը Հայաստանում ունեին նույնիսկ իրենց սեփական բանտերը, որոնք լցնում էին իրենց կամքին չհնազանդվող մարդկանցով: Դաշնակցական կառավարությունն ըստ էության դարձավ իմպերիալիստական պետությունների ողորմելի կցորդը: Դաշնակիցները — հայ ժողովրդի այդ ստոր դավաճանները — իրենց ծառայությունն առաջարկեցին իմպերիալիստներին՝ Սովետական Ռուսաստանի դեմ ինտերվենցիա կազմակերպելու գործում,

նրանք բարեկամական կապեր հաստատեցին Դենիկինի, Վրանզելի և սոցիալիստական ռեվոլյուցիայի մյուս թշնամիները հետ և սերով աշխատում էին Հայաստանը դարձնել իմպերիալիստական պետութունների պլացդարմ ընդդեմ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեվոլյուցիայի:

Դաշնակիների տիրապետության ամբողջ ժամանակվա ընթացքում Հայաստանն իրենից ներկայացնում էր անվերջ պատերազմների, սղզամիջյան կոտորածների, ջարդերի մի երկիր: Այդ բոլորը կատաստրոֆիկ հետևանքներ ունեցան երկրի տնտեսական կյանքում: Տնտեսական քայքայումը չտեսնված չափեր ընդունեց: Առանց այն էլ աննշան արդյունաբերութունը գրեթե ամբողջովին քայքայվեց: Գյուղատնտեսութունը ... ծանր ճգնաժամ ապրեց:

1919 թվին Հայաստանում ցանքերի ամբողջ տարածութունը կազմում էր 82,7 հազար դեսյատին, այսինքն 1914 թվի ցանքատարածության գրեթե քառորդ մասը: Տեխնիկական և այլ արժեքավոր կուրսուրաները—բամբակը, ծխախոտը և այլն—համարյա չքացան: Բոլոր տեսակների անասունների թիվը կազմում էր 743·643 գլուխ, այսինքն 1914 թվին եղածի միայն մի երրորդ մասը: Երկրի տնտեսութան այդպիսի քայքայման հետևանքով աշխատավորների դրությունն անտանելի դարձավ: Ամբողջ Հայաստանում համաճարակներ էին տարածված: Ամենուրեք սարսափելի սով սկսվեց: Աշխատավոր մասսաները մեռնում էին հարյուրներով և հազարներով: Հայ ժողովուրդը կանգնեց մահացման և ֆիզիքական ոչնչացման սպառնալիքի առաջ: Ահա մի պատմական տեղեկանք:

1919 թ. մայիսի 17-ին դաշնակցական «Աշխատանք» լրագրի թղթակիցը Ջաֆարբաատ գյուղից գրում էր հետևյալը.

«Ժողովուրդը կմեռնի. ոչ մի տեղին հուսո նշույլներ կերևին: Երեք օրվա թաղված մեռելներու միա, փողոցներու վրա վաղօրոք ձգած կոշիկներու և տրեխներու կտորներ, մուկ, կատու, շո՛ւն, արագիլ, սովորական կերակուր են դարձած ժողովրդին համար: Բայց ասոնք ալ սպառեր են և ամենքը դաշտ ելեր և բառիս բուն նշանակությամբ անասունի նման կարածան: Երեկ հանդիպե-

ցանք Այնթափ—Քոչկեցի Մարզիս Մանուկյանին, որը յուր հինգ տարեկան մեռած երեխայի փորը դատարկած և հեռադրալարը պարանոցին անցուցած թեթ թոնրի մեջ կըխորովեր և կուտեր: Նման իրողություններ նոր չեն, և պատահած են Գիլադարիս և Մոլլա-Բայազետ*) գյուղերու մեջ ալ: Բայց դաժան սովը ամենն շատ արեմտահայ փախստականներու մեջ նվաճումներ ըրեր է, և թե օգնության միջոցներ չստեղծվեն՝ միջավայրնիս դարհուրելի դերեզմանոց մը պիտի դառնա շուտով»:

Ըստ պաշտոնական տվյալների, 1919 թվին միայն Երևանում մեռել են 14000 մարդ, այսինքն ամբողջ բնակչության համարյա կեսը: Վաղարշապատում 1919 թվի վեց ամսվա ընթացքում սովից մեռան 4000 հոգի:

Բայց հայ ժողովուրդը, որ իր դրության և անկախության համար մղած հերոսական պայքարի դարավոր պատմութուն ուներ, այս անգամ ևս չվհատվեց և չկորցրեց իր ազատագրության հայատը: Հայաստանում դաշնակիների տիրապետության հաստատման առաջին լակ օրերից սկսում են բռնկվել բողոքաթիվ ռեվոլյուցիոն ելույթներ: 1919—20 թ. թ. Նոր-Բայազետում, Շամշադինում, Դարալագյազում և այլ շրջաններում ուժեղանում են դյուղացիների ելույթները դաշնակիների կամայականության դեմ, երկաթուղային և այլ բանավորների մի շարք գործադուլներ են ծագում, մանավանդ Այեքսանդրապոլում (այժմ Լենինական): Բանավորների և դյուղացիների այդ ռեվոլյուցիոն ելույթները ղեկավարում են բոլշևիկները Անդրկովկասյան Երկրային Կոմիտեն, բոլշևիկյան պարտիայի՝ Հայաստանի կազմակերպությունները և Հայաստանի կոմունիստական երիտասարդության Միությունը— «Սպարտակ»-ը: 1920 թվի մայիսին Հայաստանում տեղի ունեցավ մասսայական գինիված սպստամբութուն, որը գլխավորում էին պանծայի բոլշևիկներ Ստեփան Ալլահվերդյանը, Մարզիս Մուսաելյանը, Բազբաատ Ղարիբջանյանը և Սեփոյանը: Ղարսում, բանավորների, ղինվորների և դյուղացիների ապստամբությունը գլխավորեց անվահեր Ղու-

*) Հայկական ՍՍՌ այժմյան Հոկտեմբերյան շրջանի գյուղեր: Մոլլա-Բայազետն այժմ վերանվանված և Վրամբակաշատ:

կատ Ղուկասյանը, Նոր-Բայազետում՝ Հովհաննես Սարուխանյանը և հայ ժողովրդի մյուս հավատարիմ ղափակները: Լենինի և Ստալինի ցուցումով 11-րդ Կարմիր բանակի ղորմասերն օգնություն ցույց տվեցին ապստամբներին: Մայիսյան ապստամբությունն ընդգրկեց համարյա ամբողջ երկիրը, նրան մասնակցում էին Հայաստանի աշխատավոր մասսաների լայն խավերը:

Թեպետ Մայիսյան ապստամբությունը դաժանորեն ճնշվեց, բայց նա ժողովրդական մասսաներին նախապատրաստեց նոր, վճռական ելույթի համար: Ապստամբությունը սաստիկ ցնցեց դաշնակցական կառավարությունը և նրանց այն էլ խախտու հիմքերը: Հայաստանի աշխատավորները Հայաստանի կոմպարտիայի և բոլշևիկների Անդրկովկասյան Ներկային Կոմիտեի ղեկավարությամբ մայիսյան ապստամբության պարտությունից հետո էլ չթուլացրին իրենց պայքարը, պատրաստվեցին նոր ուժերով վերջնականապես տապալելու դաշնակցների լուծը և Հայաստանում Սովետական իշխանություն հաստատելու:

1920 թվի աշնանը բացառիկ ծանր դրություն ստեղծվեց Հայաստանի աշխատավորների համար: Մի կողմից իրենց կոտորածներն էին կատարում սովյն ու մահը, մյուս կողմից վերսկսվեցին թուրքական զորքերի ավերիչ արշավանքները: Հայ ժողովուրդը հասել էր կործանման անդունդին: Ամբողջ հայ ժողովուրդի լիակատար Ֆիդիքական ոչնչացման վտանգն անհերքելի կախված էր նրա դիմելիքից: Հարկավոր էր օգնել նրան, փրկել նրան, փրկել արագ, անհապաղ: Եվ հայ ժողովուրդն իր այդ ճակատագրական օրերին այդ օգնությունն ստացավ Սովետական Ռուսաստանից, հայ ժողովուրդի մեծ բարեկամ ՄՍՍԼԻՆԻՑ:

1920 թվի նոյեմբերի 4-ին ընկեր Ստալինը ժամանեց Բաղու: Ծանոթանալով Հայաստանի դրությունը հետ, նա Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի բոլշևիկյան կադակերությունների առաջ վճռականապես դրեց հայ ժողովուրդին փրկելու հարցը: Անդրկովկասի պարտիական և սովետական աշխատողների հասուկ խորհրդակցությունում ընկեր Ստալինը պահանջեց, ինչ կերպ էլ լինի, ազատել, կործանումից փրկել բազմաչարչար հայ ժողովուրդին:

Ղեկավարվելով ընկեր Ստալինի ցուցումներով՝ Հայաստանի և Անդրկովկասի բոլշևիկյան կադակերություններն ըն-

կերներ Օրջոնիկիձէի, Կիրովի և Միկոյանի գլխավորությամբ հակադական օդնություն ցույց տվին Հայաստանի աշխատավոր մասսաներին, դաշնակցական ատելի կառավարության դեմ ապստամբություն կադակերակելու համար: 1920 թվի նոյեմբեր ամսի վերջերին Հայաստանում բարձրացավ նոր ռեվոլյուցիոն ալիքը: Այս անգամ արդեն ապստամբության կենտրոնը Քարվանսարայի (այժմ Իջևանի) շրջանն էր: Լենինի և Ստալինի ցուցումով, ընկերներ Օրջոնիկիձէի, Կիրովի և Միկոյանի անմիջական ղեկավարությամբ 11-րդ պանծալի Կարմիր բանակի ղորմասերն ուղարկվում են ապստամբներին օգնելու: 1920 թվի նոյեմբերի 29-ին դաշնակցների իշխանությունը տապալվեց և Հայաստանը Սովետական հայտարարվեց: Բացվեց հայ ժողովրդի պատմության նոր և ամենապայծառ էջը: Ընկեր Ստալինը, ողջունելով Հայաստանում Սովետական իշխանության հաստատվելը, գրեց է.

«Տանջված և բազմաչարչար Հայաստանը, որ Անտանտայի և դաշնակցների ողորմածությամբ մատնված էր սովի, ավերածության և գաղթի,— բոլոր «բարեկամների» Կոզմից խաբված այդ Հայաստանն այժմ իր փրկությունը գտավ նրանով, որ իրեն հայտարարեց Սովետական երկիր: Ոչ Անգլիայի՝ հայկական շահերի այդ «դարավոր պաշտպանի» կեղծ հավաստիացումները, ոչ վիստնի տխրահռչակ 14 կետերը, ոչ էլ Ազգերի Լիգայի մեծադիր խոստումները՝ Հայաստանի կառավարման նրա «մանդատով» հանդերձ՝ չկարողացան (և չէին կարող) Հայաստանը փրկել կոտորածից ու ֆիզիկական բնաջրջումից: Միայն Սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն... Թող իմանան բոլորը, ում հարկ է գիտնալ, որ այսպես կոչված հայկական «պրոլետար», որի վրա ապարդյուն կերպով գլուխ էին ջարդում իմպերիալիստական դիպլոմատիայի հին գայլերը, ի վիճակի եղավ լուծելու միայն սովետական իշխանությունը: Կեցցե Սովետական Հայաստանը»:


Մեծ առաջնորդի խոսքերը մարդարեական էին: Միայն Սո-

վեսական իշխանութիւնը խաղաղութիւն և չտեսնված բար-
դավաճում բերեց բազմաչարչար հայ ժողովրդին: Միայն Սո-
վետական իշխանութան շնորհիվ հայ ժողովուրդը եղբայրակից
ժողովուրդների հետ միասին բռնեց իր իսկական ազատագրու-
թյան և երջանիկ ապագայի ուղին— սոցիալիզմի ուղին: «Մի-
այն Սովետական իշխանութիւնը լեհիկան-ստալինյան ազգա-
յին քաղաքականութեան շնորհիվ բնդունակ եղավ փրկելու
հայ ժողովուրդը և նրան դուրս բերելու բարգաւաճման լայն
նամապարհը» (Ա. Ի. Միկոյան):

II

Դառն է եղել հայ ժողովրդի պատմական բախտը, անասելի
ծանր է եղել նրա բազմադարյան ուղին: Բազմաչարչար ժողո-
վուրդն անթիվ ու անհամար դժբախտութիւններ է ապրել:
Նրա հայրենի երկիրը գրեթե շարունակ արչավանքների և ա-
վերածութիւնների է ենթարկվել: Բայց ոչ պարսկական սատ-
րապները և հռոմեական լեգեոնները, ոչ նենգ բուլղանդացիներն
ու դաժան արաբները, ոչ մոնղոլները, սելջուկները և թուր-
քերի վայրենի հրատապները,— որոնք մրրկի նման անցնում
էին երկրովը մեկ և ավերում այն,— չկարողացան ընկճել հայ
ժողովրդի կամքը և ստեղծագործ ուղին: Չնայելով այդ բոլոր
ձախորդութիւններին և ամենածանր փորձութիւններին, հայ
ժողովուրդը, հերոսական պայքարում պաշտպանելով իր հայրե-
նիքը և ազգային դոյութիւնը, համառ և ստեղծագործ աշխա-
տանքով ստեղծում էր իր ինքնուրույն և բարձր կուլտուրան:
«Հայերը,— դրել է ռուս հայտնի բանաստեղծ և գիտնական Վ.
Յա. Բրյուսովը,— իրենց պատմական կյանքի հալարավոր տա-
րիները ընթացքում ստեղծել են ինքնուրույն կուլտուրա, իրենց
լուծման են մտցրել դիտութեան մեջ և աշխարհին թողել են ա-
մենահարուստ դրահանութիւն»:

Հայ ժողովրդի կուլտուրան նույնքան հին է, որքան և ին-
քը, հայ ժողովուրդը: Դեռ Արչակունիների դինաստիայի թա-
գաւորութեան ժամանակաշրջանում Հայաստանը բավական բար-
ձր կուլտուրա ուներ: Տիգրան II-ն իր պալատում ուներ թատ-
րոն և շրջապատված էր հույն արտիստներով, գիտնականներով



Չվաքքնոցի մակեդոն (VII դար)

աւ փիլիսոփաներով: Նրա որդին, Արտավազըը պոեական և գրամատիկական երկեր էր գրում: Հայաստանի հնադարյան քաղաքները— Արտաշատը և Տիգրանակերտը, հայկական հեթանոսական տաճարները, բերդերը և այլն— աչքի էին ընկնում հոյակապ կառուցվածքներով, ճարտարապետութեամբ և քանդակագործական կերտվածքներով: Մնցյալի բարձր կուլտուրայի մասին վկայում է Գառնիի տաճարը, որի ավերակները պահպանվել են մինչև մեր օրերը: Այդ հեռավոր անցյալում բարձր աստիճանի վրա է դանդաղ փողովրդական ստեղծագործութեանը— Ֆոնիլորը, որի հատվածները պահպանվել են շնորհիվ հայոց պատմութեան հայր Մովսէս Խորենացու: Ահա ամենահին փողովրդական պոեզիայի հատվածներից մեկը, որը նկարագրում է առասպելական Վահագնի ծնունդը:

Երկներ երկին, երկներ երկիր,
Երկներ և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ուներ և զկարմրիկ եղեգնիկն—
Ընդ եղեգան փող ծուխ ելաներ,
Ընդ եղեգան փող բոց ելաներ.
Եվ ի բոցուն վազեր պատանեկիկ խարտաչ.
Նա հուր հեր ուներ,
Ապա թե բոց ուներ մորուս,
Եվ աչկունքն էին արեղակունք:

Հայ փողովրդի կուլտուրական զարգացման նոր ժամանակաշրջանը սկսվում է IV դարից: Մոտափորապես 301—303 թվերին Տրդատ III թագաւորը Հայաստանում քրիստոնեութուն է մտցնում, որն առաջադիմական գործոն էր հայկական կուլտուրայի զարգացման գործում: Քրիստոնեութեան շնորհիվ էր, որ Հայաստանը հաղորդակից դարձավ Արեւմուտքի կուլտուրային, որն այդ ժամանակաշրջանում համեմատաբար բարձր էր: Արդեն V դարի սկզբներում Հայաստանը ամբողջ աշխարհում պատմաբան-գրողներ, ինչպես Աղաթանգեղոսը, որը նկարագրել է քրիստոնեութեան մուտքը Հայաստան, և Փալատոս Բյուզանդացին, որը գրել է Հայաստանի IV դարի պատմութեանը:


V դարի սկզբում, 406—412 թվականներին հռչակավոր հայ գիտնական Մեսրոպ Մաշտոցը հնարում է հայկական գրերը, որ

մի ամբողջ հեղաշրջում առաջացրեց փողովրդի հոգևոր կյանքում: Այբուբենի գյուտից հետո սկսվեց հայ կուլտուրայի և մասնավորապես գրականութեան ծաղկումը: V դարում երևան են դալիս մի շարք խոշոր փիլիսոփաներ և պատմաբան-գրողներ, որոնց մեջ առանձնապես կարևոր տեղ են բռնում փիլիսոփա Եղնիկ Կոխլացին, պատմաբան-գրողներ Ղազար Փարպեցին, Եղիշեն և հայ պատմագրութեան խոշորագույն գեմբը՝ Մովսէս Խորենացին: VI դարում և VII դարի առաջին կեսում ասպարեզ են դալիս մի շարք նոր աշխարհային գիտնականներ,— փիլիսոփա Դավիթ Անհաղթը, «Սահմանք իմաստասիրութեանց» փիլիսոփայական շարադրութեան հեղինակը, խոշոր գիտնական Անանիա Շիրակացին— մատթեմատիկայի, տիեզերագիտութեան և աշխարհագրութեան վերաբերյալ մի շարք երկերի հեղինակը, պատմադիր Սերեոսը և այլն:

V—VII դ. դ. ժամանակաշրջանում ինքնուրույն գրականութեան հետ միասին լայն զարգացման հասավ թարգմանական գրականութունը: Առավելապես հունարենից հայերեն լեզվով թարգմանվեցին փիլիսոփայութեան, աստվածաբանութեան, պատմութեան, աստղաբանութեան վերաբերյալ շատ գրքեր, որոնց թվում Հովհան Ոսկերեբանի, Արիստոտելի, Պորֆիրիոսի, Սոկրատեսի, Դիոնիսիոս Թրակիացու և այլոց երկերը: Այդ երկերի հայերեն թարգմանութունները համալսարհային նշանակութուն ունեն, որովհետև նրանցից մի քանիսի տեքստերը կորած են և մնում են դրանց միայն հայերեն թարգմանութունները:

Հայկական կուլտուրայի ընդհանուր զարգացմանը զուգընթաց զարգանում և բարդավաճում էին հայկական ճարտարապետութեանը և քանդակագործութեանը: V դարում կառուցվեցին՝ Տեկորի հռչակավոր տաճարը, Երեւոքի եկեղեցին և այլն: Ճարտարապետական բարձր արժեք է ներկայացնում նաև Հոփ-սիմեի վանքը, որ կառուցվել է VII դարում, Վաղարշապատում: Բայց VII դարի հայկական ճարտարապետութեան գլուխգործոցն է հանդիսանում Զվարթնոց եկեղեցին (Վաղարշապատի մոտ)․ այդ մի եռահարկ, կլորաձև եկեղեցի է, զարգարված հիտնալի քանդակներով:

VII դարի վերջից մինչև IX դարը, արարական ավերիչ




Ֆրագմենտ Զվարթնոցից (VII դար)

արչավանքների ժամանակաշրջանում, հայկական կուլտուրան որոշ ասիում ապրեց: Կուլտուրայի նոր բարդավածում սկսվեց Բագրատունիների օրոք, Հայաստանի նոր անկախութեան շրջանում (IX—XI դ. դ.): Ամենարարձր բարդավածման հասավ հայկական ճարտարապետութունը: Այդ բարդավածման օջախներն էին Բագրատունիների մայրաքաղաքը՝ Անին և Արժրունիների կենտրոնը՝ Ախթամարը: Բագմաթիվ հոյակապ շենքերը Անին դարձրել էին աշխարհի ամենագեղեցիկ քաղաքներից մեկը և նոր ոճ էին մտցրել հայկական ճարտարապետութեան մեջ: Անիի ամենանշանավոր հուշարձանը Գագիկ I-ի կառուցած եկեղեցին է: Ժամանակակիցներից մեկն այդ եկեղեցու մասին գրել է՝ «Կառուցվածքի պերճութեամբ նա նման և հավասար էր Երկնային սրբարանին»: Ճարտարապետական հոյակապ ստեղծագործութուն էր նաև Արժրունիների պալատն Ախթամարում: Անիի և Ախթամարի ճարտարապետական արվեստը ներկայացնում է միջնադարյան Հայաստանի ճարտարապետութեան զարգացման բարձրագույն աստիճանը և իր պատվավոր տեղն է բռնում արվեստի համաշխարհային պատմութեան մեջ: IX—XI դարերի հայկական ճարտարապետութունն իր ազդեցութունն է ունեցել նաև ուրիշ երկրների ճարտարապետութեան վրա:

Այդ ժամանակաշրջանում, ճարտարապետութեանը զուգընթաց, զգալիորեն զարգացել են քանդակագործութունը, նկարչութունը և մինիատուրան:

Ճարտարապետութեան հետ միաժամանակ IX—XI դարերում ամենարարձր զարգացման է հասնում նաև հայկական միջնադարյան պոեզիան, որի մասին Վալերիյ Բրյուսովը գրել է. «Առանց երկմտութեան ես այն դասում եմ համաշխարհային ամբողջ գրքականութեան դոհարների շարքը»: Այդ ժամանակաշրջանի հայկական պոեզիայի խոշորագույն ներկայացուցիչն էր Գրիգոր Նարեկացին (951—1003 թ. թ.), որի բանաստեղծութունների ժողովածուն կոչվում է «Մատյան ողբերգութեան» («Նարեկ»):

Ճարտարապետութեան և գեղարվեստական գրականութեան հետ միասին մեծապես զարգացավ նաև գիտական միաժողովրդային, աստվածաբանութեան, մաթեմատիկայի, աշխարհագրութեան և փիլիսոփայութեան բնագավառներում: Գիտական մտքի ամենաականավոր ներկայացուցիչն էր իշխան Գրի-



Յայտիկ Աւամից, 874 ք.

դոր Մաղխարոս Պահլավունին, որը դրել է աստվածաբանական և փիլիսոփայական տրակտատներ, բժշկական աշխատություններ, բանաստեղծություններ, թարգմանել է Պլատոնը և այլն: Այդ ժամանակաշրջանի պատմագիրները մեջ աչքի ընկնող տեղ են դրավում Թովմա Արծրունին, Հովհաննես Իրասխանակերացին, Ստեփաննոս Տարոնացին և այլն: Բնորոշ է, որ այդ ժամանակաշրջանում վանքերին կից արագորեն դարոցներ էին բացվում Նարեկում, Ախթամարում, Սանահինում, Տաթևում, Սեփանում, Անիում և այլ վայրերում: Այդ ժամանակաշրջանում է հյուսվել հայ ժողովրդի հերոսական, բարձրարվեստ «Ստաունցի Դավիթ» էպոսը:

Սելջուկյան և մոնղոլական արշավանքները ծանր հարվածներ հասցրին հայ ժողովրդին: Սելջուկների և մոնղոլների արաբետություն ժամանակաշրջանը (XII—XV դ. դ.) բնորոշվում է որպես Հայաստանի անտեսական կյանքի անկման և քաղաքական կյանքի ոչնչացման ժամանակաշրջան: Բայց, չնայելով դրան, հայկական կուլտուրայի մի շարք ճյուղեր, այնուամենայնիվ, շարունակում են զարգանալ, որովհետև այդ ժամանակաշրջանում Հայաստանի կուլտուրական զարգացման կենտրոն է դառնում Կիլիկիայի հայկական անկախ թաղավորությունը: Այստեղ, հայկական նոր պետության մեջ, բուն Հայաստանից հեռու ծաղկում է զեղարվեստական գրականությունը, մասնավորապես պոեզիան: Այդ շրջանի պոեզիայի ամենահանրավոր ներկայացուցիչներն են՝ Ճրիկը, Ներսես Շնորհալին, Կոստանդին Երզնկացին, իսկ XIV դարի վերջում — Մկրտավազ Նաղաշը: Հետաքրքիր է, որ այդ ժամանակ զեղարվեստական գրականությունն սկսում է աստիճանաբար ազատվել կրոնական բովանդակությունից: Պոեզիայի առարկա են դառնում աշխարհիկ կյանքը, սերը, սոցիալական մոտիվները և այլն: Ճրիկի բանաստեղծություններում երկան են դադիս բացահայտ բողոքներ սոցիալական անհավասարության դեմ: Եկեղեցական Փետդալական ռեալիստիկ ծանր մթնոլորտում անդամ Ճրիկը գրում էր.

Որքա՞ն տանջեն գմեզ հաշխարհի,
Եվ կեղեքեն գկյանս մեր հայտնի.
Եվ դու մերես համեմայնի,
Ու անտես առես գմեզ ի վշտի:

Չասհմանավակիլելով դրանով, Յրիկը «Բախտի անիվը» բանաստեղծության մեջ գրում է.

Ե՛յ չարիք, ըզվատին տունըն կու լցնես ակով դու բոլոր,
Զաղեկն ի հերկիր ի վար վըտարես որ ժողովե կտոր.
Զայն որ խոզարած չվայելե՛ կու գուգես անեղ ճիավոր,
Եվ զըզորդ մարդկանց ըզտունն ֆակես առանց բահավոր:

Այդ ժամանակաշրջանի պատմագրությունների մեջ աչքի ընկնող տեղ են գրավում Կիրակոս Գանձակեցին, Ստեփաննոս Օրբելյանը և այլն: Հակառակ սելջուկ-մոնղոլական խավարին, Հայաստանում շարունակվում են վանքերին կից դպրոցներ հիմնվել: Բարձր աստիճանի է հասնում իրավաբանական գրականությունը, որի տաղանդավոր ներկայացուցիչն էր Մխիթար Գոշը: Զարգանում է նաև գիտական գրականությունը: Մխիթար Հեքացին աշխատություններ է գրում բժշկության, աստղագիտության, փիլիսոփայության շուրջը, գիտական գրքեր է թարգմանում հայերեն լեզվով: Ճարտարապետական արվեստը նորից ծաղկում է միայն XII դարի երկրորդ կեսում և XIII դարի առաջին կեսում, այսինքն այն ժամանակաշրջանում, երբ Վրաստանի օգնությամբ Հայաստանի հյուսիս-արևելյան մարզերում Զաքարյանների գլխավորությամբ վերածնվում է հայ ժողովրդի քաղաքական կյանքը: XII—XIII դարերի ժամանակաշրջանում հայկական մանրանկարչությունը բարձր կատարելության հասավ և տվեց խոշոր վարպետներ, — Թորոս Ռոսլին, Սարգիս Պիժակ, Մանվել և այլն:

XV—XVIII դարերը, այսինքն թուրքերի և պարսիկների տիրապետության ժամանակաշրջանը, Հայաստանի պատմության ամենամռայլ ժամանակաշրջաններից մեկն է: Այդ շրջանում հայկական կուլտուրայի դարգացումը զգալի չափով կանգ է առնում: Միայն ու տգիտությունն իշխում էին Հայաստանում: Միայն Հայաստանից դուրս, Թբիլիսիում, Զուլֆայում, հայկական դպրոցներում — վենետիկում, Մադրասում և Կալիաթայում կուլտուրայի օջախներ էին ստեղծվում: XVIII դարի երկրորդ կեսին հայկական պոեզիան հրապարակ է բերում իր տաղանդավոր ներկայացուցիչներից մեկին՝ աչուղ Սայաթ-Նովային:



Գոշավանքի խաչքարներից (Գիլիգան, XIII դար)

Հայ դրսեկանության վերածննդի և ծաղկման նոր ժամանակաշրջանն սկսվեց XIX դարից, այն ժամանակից, երբ ցարական Ռուսաստանը նվաճեց Հայաստանի արևելյան մասը: Հայ ժողովրդի մերձեցումը ունեցավ նաև հայ կուլտուրայի, մասնավորապես դրսեկանության զարգացման վրա:

Իր բախտը կապելով ունեցավ մեծ ժողովրդի հետ, շիվելով նրա բարձր կուլտուրային, հայ ժողովուրդը և նրա լավագույն ներկայացուցիչները կուլտուրական նոր արժեքներ ստեղծեցին: Հենց այդ բարերար ազդեցություն տակ սկսվեց հայ կուլտուրայի նոր բարգավաճման շրջանը:

Նոր ժամանակաշրջանի հայկական կուլտուրայի ամենախոշոր և պոնձալի ներկայացուցիչն է Խաչատուր Աբովյանը: Լինելով մեծ լուսավորիչ՝ Աբովյանը միաժամանակ եղավ նաև նոր դրսեկան լեզվի և հայ նոր դրսեկանության հիմնադիրը: XIX դարի 50-60-ական թվականներին Աբովյանի գործի շարունակողն էր խոշոր լուսավորիչ, ռեվոլյուցիոներ-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը (1829—1866): XIX դարի երկրորդ կեսում հայկական դեղարվեստական դրսեկանությունը մեծ զարգացման հասավ: Հանդես եկան մի ամբողջ շարք կլասիկներ և հայ զեղարվեստական դրսեկանության ականավոր ներկայացուցիչներ— Գաբրիել Սունդուկյանը (1826—1912), Ռաֆայել Պատկանյանը (1830—1892), Բաֆֆին (1835—1888), Պերճ Պոսոյանը (1837—1907), Ղազարոս Աղայանը (1840—1911), Շիրվանզադեն (1858—1935), Հովհաննես Հովհաննիսյանը (1869—1929) և ուրիշները: Միևնույն ժամանակ ականավոր դրոզներ են երևան դալիս արևմտյան հայերից (թուրքահայերից)— Ծեբենցը (1822—1888), Հակոբ Պարոնյանը (1842—1892), Պետրոս Դուրյանը (1851—1872) և այլն:

XIX դարի երկրորդ կեսում որոշ հաջողություններ ունեցավ հայկական թատրոնը: Այդ ժամանակաշրջանում թատերական արվեստի ամենաականավոր ներկայացուցիչն էր հռչակավոր արտիստ Պետրոս Աղամյանը (1849—1891):

Հայ պարբերական մամուլը XIX դարում բարձր զարգացման հասավ: XIX դարի վերջում և XX դարի սկզբում հայկական պոեզիան ավելց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանին

(1869—1923): Այդ ժամանակաշրջանում իր ստեղծագործական գործունեությունը ծափալեց նաև հայ հանճարեղ կոմպոզիտոր Կոմիտասը (1869—1935): XX դարի հայկական պոեզիայում խոշոր դեմք է հանդիսանում Ալեկոյե Իսահակյանը (ծնվ. 1875 թ.): Մեր դարի սկզբից հանձին Հակոբ Հակոբյանի (1866—1937) հիմնվեց հայ պրոլետարական պոեզիան: Հակոբ Հակոբյանը XIX դարի վերջի և XX դարի սկզբի հայ խոշոր դրոզներից մեկն է:

Հայկական բազմադարյան կուլտուրայի պատմության մեջ բոլորովին նոր շրջան սկսվեց Հայաստանում սոցիալական իշխանություն հաստատվելու ժամանակից: Այդ արդեն հայկական կուլտուրայի իսկական բարգավաճման ժամանակաշրջանն է, ձևով ազդային, բովանդակով սոցիալիստական կուլտուրայի ժամանակաշրջանը:

**ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկան գտնվում է Սովետական Միության ամենահեռավոր հարավում, Փոքր Կովկասի արևելյան կեսի երկու կողմերում, հյուսիսա-ջին լայնության 38° 31' և 41° 15' և արևելյան երկարության 43° 35' ու 46° 37' (Գրինվիչից) միջև: Գրանիելով հարավային Անդրկովկասի միջին մասը, Հայաստանը սահմանակից է երկու եզրայրական սովետական ռեսպուբլիկաների— հյուսիսում՝ Վրացական ՍՍՌ-ին, արևելքում՝ Ադրբեջանական ՍՍՌ-ին: Հարավում Հայկական ՍՍՌ սահմանը դնում է Թուրքիայի և ՍՍՌՊ պետական սահմանով, հարավ—արևելքում—ՍՍՌՊ և Իրանի պետական սահմանով: Այսպիսով Հայկական ՍՍՌ սահմանա-կից է երկու օտար պետությունների:

Հայկական ՍՍՌ տեղիտորիայի տարածությունը կազմում է 30 հազ. քառ. կիլոմետր (ձիշտ՝ 29.713 քառ. կիլոմետր) և հյուսիսից ու հարավից եղբրվում է Անդրկովկասի երկու մեծ գետերով — Արաքսով և Կուրով, որոնք իրար են խառնվում Ադրբեջանական ՍՍՌ տեղիտորիայում, Բազվից ոչ հեռու և թափվում են Կասպից ծովը: Հայկական ՍՍՌ ամենամեծ երկարությունը, որ 380 կիլոմետր է, ընկած է Ամասիայից (Աղբարա) մինչև Իրանի սահմանի արևելյան կետը: Ամենամեծ լայնու-թյունը 200 կիլոմետր է:

Երկրի մեծ մասը լեռնային է, ունի լեռնաշղթաներ 3000 և ավելի մետր բարձրությամբ: Կան նաև առանձին հրաբխային կոնաձև լեռներ: Դրանցից ամենամեծն Արաղած սարն է 3095 մետր բարձրությամբ: Նրանից ոչ հեռու կանգնած է Կոտնի-Ա-

բըղ կոնաձև լեռը (Արայի լեռը): Այդ հրաբուխները ներկա-յումս հանգած են, չեն դործում: Հայկ. ՍՍՌ ռելիեֆի բնույթը հետևանք է նրա երկրաբանական պատմության: Այդ ռելիեֆի առանձնահատկությունն է հանդիսանում նրա խիստ կտրտված լինելը: Տերիտորիայի հիմնական մասսիվները գտնվում են ծովի մակերևույթից բարձր և կազմում են լեռնային բարձրավանդակ-ներ կամ լեռնահովիտներ, օրինակ, Սևանա լճի լեռնահովիտը, որը 1916 մետրով բարձր է ծովի մակերևույթից և բռնում է 100 հազար հեկտար տարածություն, կամ Լոռու լեռնային հովիտը, որը ծովի մակերևույթից բարձր է մոտ 1400 մետր, Եփրազի դաշտը և այլն: Բնորոշ է, որ Հայաստանում ամենացածր կետը 820 մետրից ավելի չի իջնում: Այդ կետը գտնվում է Արաքս գետի հովտում— Արարատյան դաշտում, Գալալու դյուղի մոտ, և 824 մետրով բարձր է ծովի մակերևույթից:

Ռելիեֆի այդ առանձնահատկությամբ է պայմանավորված երկրի կլիմայական բազմազանությունը: Այն ժամանակ, երբ Արարատյան դաշտավայրում, Երևանում հուլիս-օգոստոս ա-միսներին տոթակեղ ամառ է լինում և արևի տակ ջերմու-թյունը հասնում է 65—70° և ավելի, Երևանից 50—60 կի-լոմետր հեռավորությամբ, Ախտայի և Սեվանի շրջաններում լի-նում է ուշ դարձնի զով եղանակ: Այն ժամանակ, երբ Արարա-տյան դաշտում ավարտվում է հացահատիկների բերքահավաքը և նույնիսկ սկսվում է աշնանացանը, մի շարք շրջաններում, օ-րինակ, Ամասիայի, Դուկասյանի, Ախտայի, Սևանի և այլ շրթ-ջաններում նոր է սկսվում ցորենի և այլ հացահատիկային կուլ-տուրանների հասկակալումը:

Հայաստանի կլիման ցամաքային է: Նոյեմբերի վերջից սկսվում է ցուրտ ձմեռը, իսկ մայիսի երկրորդ կեսից՝ շոգ, հաճախ նույնիսկ տոթակեղ ամառը: Այստեղ դարուն համարյա չի լինում: Արարատյան դաշտում տարեկան միջին ջերմաստի-ճանը հասնում է մինչև 32°, որ ամենամեծն է ամբողջ Կովկա-սում:

Վեղևտացիոն շրջանը տևում է մոտ 120—130 օր, — մայի-սի կեսից մինչև սեպտեմբերի երկրորդ կեսի սկիզբը: Տարեկան միջին մթնոլորտային տեղումները խիստ տարբեր են և անմի-



Արգեստի վանքի տեսքը

Չականորեն կախում ունեն շրջանների զոնալ դիրքից: Որքան շրջանը բարձր է ծովի մակերևույթից, այնքան շատ են տեղումները: Այսպես օրինակ, այն ժամանակ, երբ Լոռու սարահարթում, Սեմյոնովկայում տեղումների տարեկան միջին քանակը հասնում է մինչև 600 մմ, Երևանի լեռնահովտում տեղումների քանակը լինում է 300—350 մմ, Վաղարշապատում՝ 272 մմ և այլն: Բայց խոնավությունը տարվա ընթացքում անհավասար է բաշխվում, որի հետևանքով ռեսպուբլիկայի սարահարթային և լեռնային ռայոններում աշնանը և ամառը օդի համեմատական խոնավությունը զգալիորեն ցածր է ձմեռվա խոնավությունից:

Հայկ. ՍՍՌ-ի անմիջականորեն չի սահմանադրվում ծովով, բայց նրա տերիտորիայում կան մի քանի լճեր: Դրանցից ամենամեծը Սեանա լիճն է, որի մակերևույթը կազմում է 1416 քառ. կիլոմետր: Հետազոտողի սուր բնորոշմամբ դա «ամենամեծն է լեռնային լճերից և ամենաբարձրն է մեծերից»: Բացի Սեանից, կան մի շարք մանր լճեր, օրինակ, Արվա լիճը— 4,5 քառ. կիլոմ., Այդր լիճը, Գիլին և այլն:

Հայկ. ՍՍՌ-ի գետերը, որոնց թիվը մինչև 15-ի է հասնում (չհաշված մանր գետակները), լեռնային ծագում ունեն, պատկանում են Կասպից ծովի ավազանին:

Նրանցից ամենախոշորներն են՝ Արաքսը (ընդհանուր երկարությունը 933 կիլոմետր է, որից 538 կիլոմետրը հոսում է ՍՍՌ-ի տերիտորիայով, այդ թվում 155 կիլոմ.— Հայկ. ՍՍՌ-ի տերիտորիայով), Բազար-չայը— երկարությունը 190 կիլոմետրը, Արևմտյան Արվա-չայը— երկարությունը 184 կիլոմետր (բոլորովին է Արվա լճից), Զանգուն, միակ գետը, որ բոլորովին է Սեան լճից— 116 կիլոմետր, Արևելյան Արվա-չայը— երկարությունը 112 կիլոմետր, Քասախը— երկարությունը 90 կիլոմետր, Գյառնի-չայը— երկարությունը 60 կիլոմետր և այլն:

Թեև Հայաստանի գետերը չեն օդատարժվում, կամ ավելի ճիշտ՝ չեն կարող օդատարժվել նավարկության նպատակներով և առանձին նշանակություն չունեն ձկնորսության համար, բայց դրա փոխարեն հսկայական է նրանց դերը ռեսպուբլիկայի հողերի ոռոգման և էներգետիկայի բնագավառում: Բացի բնական գետերից, Հայկական ՍՍՌ-ում կան ոռոգման մի շարք

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ
ԲԱՐՏԵՋ

ՄԱՍՏՏԱՐ
1:1000000



- Պայմանական նշաններ
- ՀՍՍՐ 38 ռայոնների սահմանները
 - Ռայոնական կենտրոններ
 - Զ.Շ. - ԶԱՆԳՐԱԲԱՍԱՐԻ ՇՐՋԱՆ
 - ՂԱՄ.Շ. - ՂԱՄԱՐԱՐՈՒՅԻ ՇՐՋԱՆ
 - Բ. - ԲԵՐՈՒՅԻ ՇՐՋԱՆ

Նրանցքներ, որոնք կառուցված են սովետական իշխանության օրոք: Իրանցից ամենախոշորներն են՝ Ստալինի անվան Նրանցքը, Շիրակի Նրանցքը, Սարգարաբադի Նրանցքը, Լենինյան, Այդը լճի (Վաղարշապատի), Կարճևանի Նրանցքները և վերջապես Ա. Խ. Միկոյանի անվան Նրանցքը, որ կառուցված է 1940 թվին և ունի 47 կիլոմետր երկարություն:

Գետերի և Նրանցքների ջրերով ոռոգվում է 178 հազար հեկտար հող: Մինչսովետական ժամանակաշրջանի համեմատությամբ՝ ոռոգվող տարածությունն ավելացել է գրեթե երեք անգամ:

Լեռնային գետերի բազայի հիման վրա կառուցված են չորս խոշոր հիդրոէլեկտրակայաններ, որոնք ռեսպուբլիկական նշանակություն ունեն, և 21 ռայոնական հիդրոէլեկտրակայաններ, որոնք տալիս են ավելի քան 115 հազար ձիու ուժի էլեկտրոէներգիա: Վերջին ժամանակվա հետադրույթյուններով և հաշիվներով ապացուցված է, որ այդ գետերից կարելի է ստանալ ավելի քան 2 միլիոն ձիու ուժի էլեկտրական էներգիա:

Հայկական ՍՍՌ-ի հարուստ է նաև բուժիչ հանքային աղբյուրներով, որոնց առատությունը պայմանավորված է երկրի հրաբխային ծաղմամբ: Այդ աղբյուրները բաժանվում են երկու կարգի— սառը և տաք:

Սմենասարժեքավոր և առատ ջուր են տալիս Արզնու աղբյուրները: Այնտեղ կառուցված է Արզնի կուրորտը, որը համախոթենական հուշակ ունի: «Արզնի» հանքային ջրի արտադրությունը հասցված է 3 միլ. լիտրի: Արզնին գտնվում է Երեվանից ոչ հեռու (25 կիլոմ.): Մյուս արժեքավոր հանքային ջուրը Ջերմուկը կամ Իստի-սուն (որ աղբյուրներն նշանակում է տաք ջուր) գտնվում է Աղիգբեկովի ռայոնում: Իստի-սուն վաղուց հուշակված է իր բուժիչ հատկություններով: Մերձակա շրջանների բնակչությունը լայն չափով օգտվում էր նրանից, ճիշտ է, բնական, պրիմիտիվ պայմաններում:

Ներկայումս այդ տաք հանքային ջրի բազայի հիման վրա կառուցված է «Ջերմուկ» կուրորտը: Հանքային աղբյուրներ կան Դելիջանի, Սեվանի, Ախտայի, Ղափանի, Կիրովականի, Վեդու շրջաններում և այլ վայրերում:

Հայկական ՍՍՌ-ի հողը բազմառանց է, որ հեշտությամբ

բացատրվում է հողի առաջացման ժամանակ եղած տարբեր պայմաններով: Այդ բոլորը պայմանավորել է ցայտուն կերպով արտահայտված նրա ուղղահայաց զոնալությունը:

Դաշտային ռայոնների (Արարատյան դաշտի) հողերը պատկանում են լեռնա-կիսաամայի հողերի տիպին: Այդ հողերն աղքատ են հումուսով, բայց շատ հարուստ են ածխածնի վայրի կրով և այլ հանքային աղբյուրով: Այդ նույն դատում կան զգալի քանակությամբ աղախան հողեր և աղուտներ (մինչև 60 հազար հեկտար): Հեղեյալ դատում, 1300—1700 մետր բարձրության վրա իշխում են չոր տափաստանային կամ շագանակագույն սևահողերը, որոնք մինչև 8 % հումուս են պարունակում: Երկրի հյուսիսային կեսում հողը լեռնա-անտառային է: Այդ դատուց վեր, 1800-ից մինչև 2350 մետր բարձրության վրա շագանակագույն հողերը փոխվում են լեռնային տիպիկ, հումուսով հարուստ սևահողերի: Այնուհետև դալիս են լեռնամարդային վարժամ հողերը, որոնք մեծ քանակությամբ հումուս են պարունակում: Այդ հողերը բնորոշվում են նաև տորֆախությամբ և խիճոտությամբ: Այս դատին ընդգրկում է լեռների և լեռնաշղթաների բարձր լանջերն ու գագաթները (հարավային կեսում բարձրությունը 2350-ից մինչև 2500 մետր է) և զբաղվում է Հայկ. ՍՍՌ-ի ամբողջ տեղիտորիայի մոտ 30 %-ը:

Հայկ. ՍՍՌ-ի բուսականությունը բնորոշվում է տեսակների մեծ բազմազանությամբ և հարստությամբ: Եղած տիպայների համաձայն Հայկ. ՍՍՌ-ում բարձրատիպ բույսերի տեսակների ընդհանուր թիվը հասնում է մոտ 2500-ի (Ֆլորայում կա 5767 տեսակ), որոնց մեջ ընչ չեն էնդեմիկ ֆորմաները:

Անտառային մասսիվները գտնվում են ռեսպուբլիկայի հյուսիս-արևելյան մասում և զբաղվում են փոքր կովկասի արտաքին լանջերը: Հայաստանի անտառներում ծառերի հիմնական տեսակներն են՝ կաղնին, բոխին, փեկոնը, թղկին, կնձենին, սոճին, կա նաև դեղձի և այլն: Հայաստանի անտառները հարուստ են նաև վայրի պտուղներ (տանձ, սալոր, ընկույզ և այլն) տվող ծառերով: Ռեսպուբլիկայի մնացած մասը, որ գտնվում է փոքր կովկասից դեպի հարավ-արևելք, փոքր բացատությամբ (Ծաղկածոր, Գեղարդ, Ղուչչի, Շորնուխի) գրեթե անտառազուրկ է: Լեռների գահավեժ, քարքարոտ լանջե-

րում տարածված են կսերոֆիտները—երաշտադիմացկուն բույսերի թվաւաներ ու մացառուտներ: Ալպյան և ենթա-ալպյան դրափները ծածկված են հացադլինների, թիթեռնաբույսերի, շրթնածաղիկների և այլ փարթամ ու բազմատեսակ բուսականութեամբ, — ավելի ցածր դանդաղ կիտա-ամայի վայրերում, որոնք ծառայում են իբրև ձմեռային արոտավայր մանր անասունների համար: Ճահճոտ դաշտավայրերում տարածված է բողբոջային և մարդա-ճահճային բուսականութեանը: Աղուաններում աճում են ուղտափչի, աղաբույսի, մոշավայրիի մացառուտներ:

Հայաստանի փլորան հարուստ է վայրի բույսերի արժեքավոր տեսակներով: Վերջին տարիներում հայտաբերված և ուսումնասիրված են կթերատու, սննդային, դեղային, յուղատու (բերդամսի ծոթոր), խեժատու (փշագաղալին կամ խիժարեւատաբաղալներ) և այլ բույսերի տասնյակ տեսակներ: Այդ բույսերն արդյունաբերական մեծ արժեք են ներկայացնում և ուժեղ թափով ուսումնասիրվում են արդյունաբերական գործադրման և արադրութեան մեջ բնդերելու համար:

Հայկ. ՍՍՌ-ի ոչ պակաս հարուստ է նաև կուլտուրական բուսականութեամբ: Արագուցված է, որ Հայաստանը հանդիսանում է կուլտուրական ցորենի, խաղողի, յուղաբույսերի մրչակման և պտղաբուծութեան ամենահին երկրներից մեկը: Հետադոտողներն ապացուցել են, որ կուլտուրական ցորենի տեսակների քանակով Հայաստանն առաջին տեղն է բռնում ամբողջ աշխարհում:

Այս տարի, երբ հնադիտական պեղումներ էին կատարվում, խաղողական էպոխայի (VI—V դ. դ. մեր թվականութեանից առաջ) բնակավայրերից մեկում— կարմիր բլուրում (Երևանից 13 կիլոմետր), խորը հորերում հայտաբերվեցին կուլտուրական ցորենների և այլ հացահատիկների մի շարք տեսակներ և խաղողը ճգմելու սարքավորումներ: Այդ և ուրիշ շատ իրական ապացույցները հաստատում են գիտնական-հետազոտողների այն եզրակացութեանների ճշտութեանը, որ Հայաստանը հանդիսանում է դուրառանտեսական արժեքավոր կուլտուրաների և մասնավորապես ցորենի ու խաղողի մշակութեան ամենահին երկիրը:

Հայկ. ՍՍՌ հարուստ և բազմազան ֆաունան (կենդանական աշխարհը), որ ներկայումս ճիշտ է ոչ լրիվ, բայց բավականաչափ ուսումնասիրված է, բացառիկ ու մեծ հետաքրքրութեան է ներկայացնում: Այստեղ մենք տեսնում ենք Փառնայի այնպիսի ներկայացուցիչներ, որոնք պատկանում են կլիմայական ամենաբազմազան դոմիններին, արևադարձայիններից սկսած մինչև բևեռայինը: Փառնայում միաժամանակ կան դուռ տեղական, հնդեմիկ, այսինքն միայն հայկական բարձրավանդակին և Կովկասին հատուկ տեսակներ, օրինակ, հայկական մուֆլոնը (լեռնային վայրի ոչխար), վայրի աճքը, կովկասյան եղջերուն, քարաձքը, քրդատանյան աղվեսը, եղջերավոր օձը, հայկական իժը և այլն: Հայաստանի անտառներում պատահում են արջ, գորշուկ, լուսան, աճյամ և մի շարք ուրիշ անտառային կենդանիներ: Հայաստանի Փառնան առանձնապես հարուստ է կրծողներով, որոնք այստեղ ներկայացված են մի քանի տասնյակ տեսակներով:

Լեռնային գետերում պատահում է գետային կարմրախայտը, իսկ Սևանա լճում, որը սեպուբրիկայում ձկնորսական ամենահարուստ լիճն է, ապրում են ձկների մի շարք հնդեմիկ տեսակներ, որոնք պատկանում են սարմանային ընտանիքին, օրինակ՝ գեղարքունին, իշխանը, բախտակը, ինչպես նաև մեծընչացք ձուկը և խրոմուլը:

Շատ հարուստ և բազմատեսակ է նաև երկրի օդնափառուան (թռչունները): Այստեղ հանդիպում է թե՛ լեռնային արծիվը, թե՛ կովկասյան ֆախանը, թե՛ գեղեցիկ արոսը և այլն:

Հայաստանը հարուստ է նաև օդատար կենդանիների կուլտուրական, ընտանի դարձրած տեսակներով: Հնադիտական պեղումները և մի շարք ուրիշ ավյալներ հաստատում են, որ գեո բրոնզե դարի ամենավաղեմի ժամանակաշրջանից Հայաստանի հնադարյան բնակիչներին հայտնի էին այնպիսի ընտանի կենդանիներ, ինչպես պարարտագմակ ոչխարը, ձին, էջը, ջորին, դոմեյը, եղը, կովը և այլն: Ընտրութեան երկարատև սրտցեսում, որ սկզբում պատահական էր, հետո մեթոդական, այդ կենդանիներից առաջացան մի շարք կոնտրոլված, արժեքավոր տեսակներ: Սակայն Հայաստանում տե-

պային անասնաբուծութեան զարգացումը առանձին թափ ստա-
ցավ վերջին տարիներս: Եւրկայումս ուսուցիչական գոյու-
թյուն ունի չվից ազնվացեղ անասունների հատուկ սովխող (Լո-
սու. ցեղային սովխողը), ազնվացեղ ոչխարների սովխող (Արա-
դածի), ցեղ. բուծարան (Ստեփանավանի), պետական ձիաբու-
ծարան, կոլխոզային մի շարք ցեղային անասնաբուծական Ֆեր-
մաներ և այլն: Հայաստանում հաջողութեամբ զարգանում են
մեղվաբուծութեանը և մետաքսագործութեանը:

Երկրի այդ բնա-պատմական պայմանները որոշ չափով պայ-
մանավորում են մեր ուսուցիչական դյուղատնտեսութեան ուղ-
ղութեանը և մասնադիտացումը, — շեշտում ենք որոշ չափով,
որովհետև դյուղատնտեսական արտադրութեան սոցիալիստական,
կոլխոզային սխտեմում միայն բնական պայմանները չեն կա-
րող դյուղատնտեսութեան ուղղութեանը որոշելու գործում
բացարձակ դեր խաղալ: Մարդու միջամտութեանը և մանավանդ
սոցիալիստական դյուղատնտեսութեան մարդկանց կոլեկտիվ մի-
ջամտութեանը բնական պայմաններին ստիպում են ենթարկել
մարդու շահերին, դյուղատնտեսութեան շահերին: Մարդու ակ-
տիվ գործունեութեան ազդեցութեամբ զգալիորեն վերափոխվում
են թե՛ բնական պայմանները և թե՛ բույսերի ու կենդանիների
բնութեանը: Հենց այդ պրոցեսն էլ տեղի է ունեցել Հայկական
ՍՍՌ-ում:

Կարտոֆիլի մշակումը, որ առաջ հարմարեցված էր միայն
լեռնային ու լեռնալեռնային պայմաններին, արդեն տարածված է Արա-
րատյան դաշտավայրում և նախալեռնային ու լեռնային գոտիներում,
չնոր-
հիվ նոր ազդրտեխնիկայի կիրառման—ամառային ցանքի, որը
կանխում է կարտոֆիլի այլասերումը ցածրադիր գոտում:
Այդ այլասերումը կատարվում էր այն բանի հետևանքով, որ
կարտոֆիլի աճման մոմենտը զուգադիպում էր հողի բարձր
Ջերմաստիճանի առկայութեան շրջանի հետ:

Թաղողի, պտուղների և ծխախոտի կուլտուրաներն արդեն
մշակվում են լեռնային և սարահարթային ու լեռնային բարձրա-
դիր գոտիներում: Այնպիսի լեռնային շրջաններ, ինչպես Սեւ-
նի, Մարտունու և Բասարգեչարի շրջանները, — ուր մինչև
վերջին տարիներս բացի ցորենից և դարձուց ուրիշ ոչինչ չե-

ցանվում, — արդեն յուրացրել են «Տրապիզոն» և «Մամոն»
բարձր տեսակի ծխախոտերի կուլտուրան: Այդ շրջաններում
ծխախոտի պլանտացիաները հարյուրավոր հեկտար տարածու-
թյուններ են բռնում: Կոտայքի, Սիսիանի, Կարաբախյան և
այլ լեռնային շրջաններում ընդերվում են խաղողի և պտուղնե-
րի տունկերը: Այդ շրջաններում արդեն պտղավորվում և առատ
բերք են տալիս խնձորենիների և տանձենիների միջուրինյան
կորիզավոր, ցրտադիմացիկ տեսակները:

Լայն զարգացում է ստացել ազնվացեղ անասունների բու-
ծումը: Գյուղատնտեսութեան սոցիալիստական սխտեմը ոչ թե
պատիվ կերպով հարմարվում է երկրի բնական պայմաններին,
այլ ակտիվ միջամտութեամբ վերափոխում է այդ պայմանները,
վերափոխում է բույսերի և կենդանիների բիոլոգիական բնու-
թյունը, դրանով իսկ բնական պայմաններին ստիպելով ծառայել
պլանային, ինտենսիվ դյուղատնտեսութեան շահերին:

Հայաստանի աշխատավորները, ինչպես և ամբողջ սովետա-
կան ժողովուրդը, իրականացնում է ուսու մեծ բիոլոգ — ու-
վոլյուցիոններ Իվան Վլադիմիրովիչ Միչուրինի պահանջը. «Մենք
չենք կարող բնութեանից շնորհներ սպասել. մեր խնդիրն է այդ-
պիսիք վերցնել նրանից»:

Բնակչությանը: Հայկական ՍՍՌ-ում բնակչության քանա-
կըն առ 17/1 1939 թ. կազմում է 1.281.599 մարդ: 1913 թվին
Հայաստանում կար ընդամենը 1.014.000 բնակիչ, իսկ 1920 թ.
— 720 հազար:

Այսպիսով 1913 թվին համեմատութեամբ բնակչության աճը
կազմում է 26,30%, իսկ 1920 թ. համեմատութեամբ—78,50%:
1919 թ. 1 քառ. կիլոմետրին ընկնում էր 24,3 մարդ, իսկ 1939
թ.— 43,2 մ., այսպիսով բնակչության խտութեանը համարյա
կրկնապատկել է:

1.281.599 բնակչից քաղաքներում ապրում է 366.447 մարդ,
այդ թվում Հայկ. ՍՍՌ մայրաքաղաք Երևանում — 200.396,
Լենինական քաղաքում — 67. 729 մարդ:

Հայաստանի մայրաքաղաքի բնակչությունը միջոցովետական
ժամանակաշրջանի համեմատութեամբ ավելացել է ավելի քան
7 անգամ:

Հայի. ՍՍՌ բնակչությունն իր ազդույթին կազմով ներկայացնում է Հեռեյալ պատկերը (100-ի դիմաց 0/00-ով) .

Հայեր — 82,80%,

Աղբրեջանականներ — 10,2%,

Ռուսներ — 4 0/0

Քրդեր — 1,6 0/0,

Այլ ազգություններ — 1,4 0/0:

Հայկական ՍՍՌ բնակչության բնական աճի կոեֆիցիենտով ՍՍՌ-ում առաջին տեղն է բռնում: 1923 թ. մինչև 1939 թիվը յուրաքանչյուր 1000 հոգու տարեկան միջին աճը կազմում է 31, 5 հ. կամ 3,150/0: Սովետական իշխանության տարիներին ծնունդների թիվը 5 փնդամ բարձր է 1920 թ. համեմատությամբ, իսկ մահացությունը 13 անգամ սղակաս է:

Քանակական աճի հետ միասին սովետական իշխանության օրոք խիստ բարձրացել է բնակչության կուլտուր-լուսավորական մակարդակը:

Բնակչության գրագիտությունը 10—120/0-ից (1919 թ.) 1939 թ. բարձրացել էր 740/0-ի: 9-ից մինչև 49 տարեկան դրաշխանների թիվը կազմում է 83,40/0, ըստ սրում աղամարդկանց գրագիտությունը կազմում է 91,90/0:

Ուժեղ տեմպերով շարունակվում է անդրադիտության և կիսադրադիտության լիակատար վերացման աշխատանքը: Հանրությունը իրազործվում է յոթնամյա պարտադիր ուսուցումը գյուղում և տասնամյա պարտադիր կրթությունը քաղաքում:

Սովետական իշխանության տարիներին արմատապես փոխվել է հայ ժողովրդի դեմքը:

Իրականացել են մեծ Ստալինի իմաստուն խոսքերը: Սովետական իշխանությունը Հայաստանին բերեց խաղաղություն և ազդային վերածնության հնարավորություն:

Հայաստանում սովետական իշխանության հատատմամբ հայ ժողովրդի պատմության մեջ նոր էջ բացվեց, բայց ոչ սոսկ նոր էջ — այլ էջը հանդիսացավ ամենապայծառ մեր ժողովրդի երկու և կես հազարամյակ ընդդրիող պատմության բազմահատորյակում: Սովետական իշխանությունը, լենինյան-ստալինյան ազդային իմաստուն քաղաքականությունը Հայաստանին բերին ոչ միայն խաղաղություն և ազդային վերածնու-

թյուն, այլև նրա պատմության մեջ չտեսնված տնտեսական և կուլտուրական բարգավաճում: Աշխատասեր, տաղանդավոր հայ ժողովուրդն իր մեծ ազատարարի, լենինյան-ստալինյան բողջևիկյան պանծալի կուսակցության դրոշի տակ անցած քսան տարվա ընթացքում պայքարի և շինարարության մեծ և բարդ ազդի է անցել: Հաղթահարելով այդ ուղիում եղած բոլոր խոչընդոտներն ու անջրպետները, ջախջախելով ժողովրդի օտորդավաճաններին — բուրժուական նացիոնալիստներին, կոնտրեվոլյուցիոն դաշնակցական դործակալներին, տրոցկիստական-քուլսարինական դարչելի բանդիտներին և կապիտալիզմի բոլոր ժյուս վիժվածքներին, հայ ժողովուրդն անցած 20 տարում իսկական բարգավաճման հասավ տնտեսական և կուլտուրական շինարարության բոլոր բնագավառներում:

Ս.ՐԴՅՈՒՆՍԱՐԵՐՈՒԹՅՈՒՆ

Մինչևեվոլյուցիոն Հայաստանը, չնայելով իր ընդերքում ունեցած արժեքավոր հանածոների (պղինձ, մոլիբդեն, արծիճ, արծաթ, ալյումին, ծծումբ, մարմար և այլն) մեծ պաշարին, չնայելով իր ունեցած էներգետիկական խոշոր ռեսուրսներին, ինչպես նաև արդավանդ հողերին, ուր կարելի էր զարգացնել արժեքավոր ու տեխնիկական կուլտուրաներ— արդյունաբերության հումքի բաղա, — չնայելով այս բոլոր հնարավորություններին, մինչևեվոլյուցիոն Հայաստանն իրենից ներկայացնում էր ցարական Ռուսաստանի ամենահետամնաց ծայրամասերից մեկը: Ավելին— նա ըստ էության ցարական գաղութ էր: Յարկիցի գաղութային քաղաքականության հետևանքով Հայաստանում արդյունաբերություն չէր ստեղծվում, ընդհակառակը, դյուղատնտեսական հումքը երկրից արտածվում էր Ռուսաստանի կենտրոնական նահանգները՝ վերամշակելու համար: Այդպիսի քաղաքականության հետևանքով Հայաստանը ցարիցի հարյուրամյա տիրապետության ընթացքում մնում էր հետամնաց, էքստենսիվ դյուղատնտեսության երկիր:

Բավական է բերել մի քանի թվեր՝ մեր սոսածը Հաստատու ըստ համար: 1913 թվին Հայաստանի արդյունաբերության մեջ աշխատում էր ընդամենը մոտ 6 հազար բանվոր, որոնց գերակշռող մեծամասնությունը (մոտ 4,5 հազար) կենտրոնացած էր երկու և զրեթե միակ արդյունաբերական ձեռնարկություններում— Ալավերդում և Ղափանի պղինձահանքերում:

Վերամշակող արդյունաբերությունը ներկայացնում էին՝ Ծուառովի՝ գինու և կոնյակի փոքրիկ գործարանը, որ դաշնականների տիրապետության ժամանակ ժողովրդից թալանած փողով գնեց հայտնի դաշնակ խմբապետ Դրոն, էսպայովի կոնսերվի

պրիմիտիվ գործարանը, Խ. Գիլանյանի (Լաստո) լիմոնադի գործարանը, և Գաբրելյանի արխայիկ պրիմիտիվ՝ կաշվի արհեստանոցը, որը ստացել էր «դարբասանա» տեղական սրամիտանունը:

Մնացած 1—2 տասնյակ մանր արհեստանոցներից կարելի է հիշատակել Տեր-Ավետիսովի մեխանիկական արհեստանոցը:

1913 թվին Հայաստանի արդյունաբերության ամբողջ համախառն արտադրանքը 1926—27 թ.թ. անխոփոխ գներով կազմում էր 20,7 միլիոն ռուբլի: Երկրի ամբողջ տնտեսության արտադրանքի դիմաց արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը կազմում էր 23,90%, այսինքն մի քառսրդից պակաս: Գաշնակների երկու և կես տարվա տիրապետության ժամանակ արդյունաբերության այդ ստանց այն էլ չնչին արտադրանքը համարյա զերոյի հավասարվեց: 1919 թվին այն կազմում էր մեկ ու կես միլիոն ռուբլուց մի քիչ ավելի: Ըստ որում, բացի ողբերից խմբիչներից, համարյա ուրիշ ոչինչ չէր արտադրվում:

Այսպիսով սովետական իշխանությունը Հայաստանում ժառանգեց կատաստրոֆիկ դրության հասած տնտեսություն և լիակատար քայքայված առանց այն էլ չնչին արդյունաբերություն:

Երկրում սովետական իշխանություն հաստատվելու առաջին խի տարիներից Հայաստանի աշխատավորները Սովետական Ռուսաստանի անմիջական օգնությամբ ձեռնամուխ եղան ավերված ձեռնարկությունների վերականգնման և նոր, սոցիալիստական արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծման:

Ընդունված է ստել, թե Հայաստանը լեռների, քարերի և խոր-խոր կիրճերի երկիր է: Այդպիսի չափազանց նեղ, Փիղիկո-աշխարհադրական բնորոշումը ոչ միայն ճիշտ պատկերացում չի տալիս երկրի արտադրական ուժերի մասին, այլև մոլորություն մեջ է դրում շատերին, ուստի և այդ բնորոշումը բացատրության կարիք է զգում:


Բանն այն է, որ Հայաստանը ոչ թե սոսկ լեռների ու քարերի, այլ այնպիսի լեռների երկիր է, որոնց ընդերքում օդտակար հանածոների՝ հսկայական պաշարներ կան, այնպիսի լեռների, որոնք ծածկված են արժեքավոր խոտային և անտառային բուսականությամբ: Քարը Հայաստանում ոչ թե սոսկ քար

է, այլ այնպիսի քար, որն արժեքավոր շինանյութի բազմազան տեսակներ է տալիս, սկսած բարձրորակ մարմարից, Ալթլիկ հիանալի վարդագույն տուֆից, նուռնուսյան գրանիտից, տրախիտից մինչև դրանիտանման բազալտը և սովորական սև և կարմիր տուֆը: Էլ չխոսենք այնպիսի «քարերի» մասին, ինչպես Դավալուի բարձրորակ կրաքարը, որը բազա է հանդիսացել Հայաստանում արդյունաբերութեան բոլորովին նոր ճյուղ — քլեմիական ինդուստրիա զարգացնելու համար: Հայաստանի նույնիսկ կավերն արժեքավոր հումք են շինանյութեր արտադրելու համար: Ծնգավիթի և Փարաքարի կավերից (Երևանի մոտ) պատրաստվում են ծածկի բարձրորակ կղմինդր, կոյուղու խողովակներ, դեղարվեստական — կենցաղային կերամիկական կերտվածքներ, իսկ Դոսդի կավահանքերը տալիս են բարձրորակ հրակայուն կավ և օգտագործվում են մի շարք դեֆիցիտային նյութեր պատրաստելու համար: Այսպիսով Հայաստանի կավերը հիանալի կերպով փոխարինում են մետաղը:

Հայաստանի խորը կիրճերը — դրանք լեռնային արագահոս գետերի հուններն են, գետեր, որոնք էներգետիկական հսկայական ուժ ունեն և որոշում են երկրի հիզրո-էներգետիկական ուսուերաները:

Այդ բնական հարուստ ռեսուրսների բազայի հիման վրա Սովետական իշխանության օրոք երկրում արդյունաբերական լայն շինարարություն ծավալվեց:

Անցած 20 տարում Հայկական ՍՍՌ-ում արդյունաբերության զարգացումը հսկայական չափերի է հասել: Արմատապես վերակառուցված է պղնձա-հանքային արդյունաբերությունը, հանքերը մեքենայացված են, կառուցված է պղնձաձուլական նոր գործարան, ավարտվում է ծծմբա-թթվուտային գործարանի կառուցումը, — այդ գործարանն օգտագործելու է պղնձի արդյունաբերության մնացորդները: Վերջին տարիների երկրաբանական-հետազոտական աշխատանքները հայտարերել են պղնձի և մոլիբդենի նոր, հարուստ հանքեր (Փիրզոուզան, Աղարակ և այլն), որոնք համամիութենական նշանակություն ունեն: Պղնձա-հանքային արդյունաբերության առաջ նոր, լայն հեռանկարներ են բացվում: Վերջին տարիներս Հայաստանում ստեղծված են արդյունաբերության մի շարք բոլորովին նոր



Ալյումինի արտադրության արտադրանք

Ճյուղեր և առաջին հերթին ջիմիական արդյունաբերությունը: 1940 թվին զործարկվեց Երևանի՝ Կիրովի անվան ՍԿ—Սովպրեմ կամբինատը — Սովետական Միության արդյունաբերական զեղանտներից մեկը: Սեփական հումքի — բամբակի բազայի հիման վրա մեծ զարգացման է հասել տեքստիլ արդյունաբերությունը: Լենինականում կառուցված են մանվածքային երկու զործարաններ՝ 117 հազար իլիկի կարողությամբ (նրանցից մեկը 76 հազար իլիկով շահագործման է հանձնված 1939 թվին), մի գործվածքային գործարան 2272 դաղդյակով: Զգալիորեն աճել է նաև մետաքսագործվածքային արդյունաբերությունը, — Երևանում կառուցված է մեծ մետաքսագործարան: 1939 թվին տեքստիլ արդյունաբերության արտադրանքը կազմում էր 40 միլիոն ռուբլի:

Մնդի արդյունաբերությունը, որ ըստ էության նույնպես նոր ճյուղ է, իր տեսակարար կշիռով ռեսպուբլիկայի արդյունաբերության մեջ առաջատար տեղերից մեկն է բռնում: Մնդի արդյունաբերության արտադրանքը 1939 թվին կազմում էր 111 միլիոն ռուբլի կամ Հայկ. ՍՍՌ-ում քող արդյունաբերական արտադրանքի 40%-ը: Մնդի ինդուստրիայում առանձնահատուկ տեղ են զբաղում՝ զինու և կոնյակի «Արարատ» տրեստը, — որը տալիս է ամբողջ մնդի արդյունաբերության արտադրանքի 52%-ը, — և Երևանի Կոնսերվի գործարանը: Տնայնագործական «գարախանայի» (նախկին կաշեգործարանի) տեղում գործում է նոր, խոշոր կաշեգործարանը, որը կահավորված է տեխնիկայի վերջին խոտքով: Կաշեգործարանի բազայի հիման վրա Հայաստանում ստեղծված է կոշիկեղենի արդյունաբերություն:

Արդյունաբերության զարգացումը սերտորեն կապված է էներգետիկական ռեսուրսների հետ և խոշոր չափով պայմանավորվում է նրանցով. և այդ միանգամայն բնական է, քանի որ տարեցատարի ուժեղ տեմպերով աճում է Հայաստանի էներգետիկական տնտեսությունը: Մինչև սովետական իշխանությունը Հայաստանը հասկացողություն անգամ չունեի արդյունաբերական էներգո-տնտեսության մասին: Այսպես, օրինակ, 1919 թվին Հայաստանում կար ընդամենը 7 մանր էլեկտրոկայան, 1,5 հ. կիլովատ ընդհանուր կարողությամբ: Սովետական իշխանության տարիներին երկրում կառուցված է 48 հիդրո-էլեկտրոկայան:



«Արարատ» գործարան (զինու մշակում)

Միմիայն ռալոնական հիդրոկայանների թիվը Հայկ. ՍՍՌ-ում 20-ից ավելի է: էլեկտրոէներգիայի արդյունաբերությունը 1939 թվին կազմում էր ավելի քան 340 միլ. կիլովատ, 1913 թ. 5 միլիոն կիլովատի դիմաց:

Ստալինյան առաջին և երկրորդ հնգամյակներին տարիներին Հայկ. ՍՍՌ-ում կառուցված է 43 խոշոր արդյունաբերական ձեռնարկություն, այդ թվում — Ս. Մ. Կիրովի անվան ՍԿ—Սովպրեն հսկա կոմբինատը, Քանաբեռեբուր, Լենինականի մսի կոմբինատը, մանածագործարանը, Կիրովականի Քիմիական (ցիանոմիդի) գործարանը և այլն:

Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները տալիս են ամենաարժեքավոր կերտվածքներ, այդ թվում — տուրքիններ և գեներատորներ: Մինչև արդյունաբերությունը տալիս է բարձրորակ անդամներ և խմիչքներ: Մրդի պահածոները, Երևանի կոնյակը, Սևանի իշխան ձուկը հռչակված են ոչ միայն Սովետական Միությունում, այլև նրա սահմաններից շատ հեռու:

Ստորև բերված մի քանի թվերը կարող են կոնկրետ պատկերացում տալ Հայկ. ՍՍՌ արդյունաբերության առանձին ճյուղերի տված արտադրանքի ծավալի և չափերի մասին: Ընթացիկ 1940 թվին միայն ժողովրդական արդյունաբերությունն արտադրում է 31 միլիոն մետր բյաղ, 24 միլիոն պլաստիկայի տուփ պահածոներ, մոտ մեկ միլիոն լիտր խաղողի գինիներ, 1,75 միլիարդ հատ պապիրոս և այլն:

Արդյունաբերության այդպիսի զարգացումը հետամենաց, ազրարային երկրում անհնարին կլինեք առանց խոշոր կապիտալ ներդրումների, առանց Սովետական Մեծ Միության օգնության: Հենց այդ օգնության շնորհիվ, Համկ(բ)Պ Կենտկոմի և անձնապես ընկեր Ստալինի ամենօրյա հոգատարության շնորհիվ Հայաստանի արդյունաբերական շինարարության մեջ ներդրվեց մոտ կես միլիարդ ռուբլի, իսկ ժողովրդական անտեսություն կապիտալ շինարարության մեջ այս 20 տարվա ընթացքում ներդրվել է մոտ 2:3 միլիարդ ռուբլի: Այդ ներդրումների հետևանքով զգալիորեն ավելացան նաև արդյունաբերության հիմնական ֆոնդերը:

Բայց այստեղ պետք է ասել, որ Հայկական ՍՍՌ-ում ար-

դյունաբերական շինարարությունները կարող էին էլ ավելի մեծ լինել, եթե չլինեք Հայաստանի նախկին բուրժուա-նացիոնալիստական ղեկավարության քայքայիչ գործունեությունը: Ժողովրդի այդ ստոր դավաճանները մի շարք տաքինների ընթացքում (մինչև 1937 թ.) ստորաբար երկերեսանիություն անելով պարտիայի առաջ, զաղրելիորեն ի շարք գործադրելով պարտիայի վստահությունը, իրենց բուրժուա-նացիոնալիստական քաղաքականությունն էին կիրառում: Պետական հսկայական միջոցները, որ միութենական կառավարությունը բաց էր թողնում արդյունաբերական և այլ շինարարության համար, կամ էին օգտագործվում, բարձրագույն արժույթով, կամ օգտագործվում էին բոլորովին այլ նպատակներով և այսպիսով վիժեցվում էին մի շարք կարևորագույն արդյունաբերական և այլ օբյեկտների շինարարությունները, էլ չխառնեք պետական միջոցների ուղղակի հավաքական մասին: Բայց ժողովրդի թշնամիները էին կարող անտես մնալ բուլղեիկյան պարտիայի համապարփակ հայացքից, մեր իմաստուն առաջնորդ ընկեր Ստալինի սրատես հայացքից: 1937 թ. աշնանը Համկ(բ)Պ Կենտկոմը և ընկեր Ստալինը Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմին ուղղած իրենց պատմական նամակում մատնանշում և նախազուգացնում էին, որ Հայաստանում անտեսական և կուլտուրական գործերը շատ վատ են դնում, որ շինարարության համար բաց թողնված միջոցներն իրենց նպատակին չեն օգտագործվում: Ու շուտով ժողովրդի թշնամիները, բուրժուական նացիոնալիստները, որոնք խաբեբայության ու երկերեսանիության միջոցով խցկվել էին Հայաստանի պարտիական-սովետական կազմակերպությունների ղեկավարության մեջ, ընկեր Ստալինի ցուցումով և հայ ժողովրդի պանծալի դալակ ընկ. Միկոյանի անմիջական օգնությամբ բուլղեիկյան հանցանքի տեղում և մերկացվեցին: Երկրի ղեկավարությունն ստանձնեցին նոր, պարտիայի և ժողովրդի գործին մինչև վերջ նվիրված մարդիկ, որոնք պատրաստ են կենսագործելու պարտիայի դրժխավոր գիծը և ընկեր Ստալինի ցուցումները:

Իրագործելով Համկ(բ)Պ Կենտկոմի դիրեկտիվը և ընկեր Ստալինի ցուցումները, Հայաստանի բուլղեիկները և հայ ժողովուրդն անցած երեք տարում մեծ հաջողություններ ձեռք բե-

չին անասական շինարարութեան ասպարիզում, այդ թվում և արդյունաբերութեան բնագավառում: Այդ ժամանակվա ընթացքում կանգառման վիճակից դուրս բերվեց Ս. Մ. Կիրովի անվան՝ Երևանի խոշորագույն կոմբինատի շինարարութեանը: Միայն 1939 թվին կոմբինատի շինարարութեան մեջ ներդրվեց 40 միլիոն ուրբլի և 1940 թվի մարտին կատարվեց ստալինյան առաջադրանքը — ավարտվեց կոմբինատի շինարարութեանը:

Նույն 1939 թվին կոմերվացիայի վիճակից դուրս բերվեց Կիրովականի ցիանոմիդի գործարանը, ավարտվեց գործարանի շինարարութեանը և շահագործման հանձնվեց: Ավարտվեցին և շահագործման հանձնվեցին նաև Լենինականի մանածագործարանը 76 հազար իրիկով և գործվածքային գործարանը 2,272 գաղափահով: Ձերթինսու անվան Մեխանիկական գործարանը վերակառուցվել և մեխանիկական խոշոր գործարանի է վերածվել: Կատուցված են սննդի արդյունաբերութեան մի շարք ձեռնարկներ: Արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները սկսեցին կատարել և ղերակատարել իրենց արտադրական պլանները: Արդյունաբերական նոր շինարարութեան և գործարանների, ֆաբրիկաների ու այլ ձեռնարկությունների ինտենսիվ աշխատանքի հետևանքով զգալիորեն ավելացան արդյունաբերութեան հիմնական ֆոնդերը: Արդեն 1939 թվին այդ ֆոնդերը խոշոր արդյունաբերութեան դժով, արսույուտ թվերով կազմում էին 517 միլիոն ուրբլի, որ 1927—28 թ. թ. համեմատությամբ աճ է տալիս ավելի քան 27 անգամ, իսկ առանձին ճյուղերում հիմնական ֆոնդերի աճն է՛լ ավելի մեծ չափերի է հասել: Այսպես օրինակ՝ քիմիական արդյունաբերութեան հիմնական ֆոնդերը 1927 — 28 թ.թ. համեմատությամբ ավելացել են 481 անգամ, մետաղաձևման արդյունաբերությունում՝ 369 անգամ: Արդյունաբերութեան զարգացմանը զուգընթաց՝ օրինաչափ կերպով ավելացել է նաև արդյունաբերութեան մեջ աշխատող բանվորների և ինժեներա-տեխնիկական աշխատողների թիվը: 1939 թվին բանվորների տարեկան միջին թիվը հասավ 25 հազար հոգու, այսինքն 440 անգամ ավելի, քան 1927—28 թ. թ. և 500 անգամից ավելի, քան 1913 թվին:

Արդյունաբերութեան քանակական աճի հետ միասին խոշոր

տեղաշարժեր կատարվեցին նրա որակական ցուցանիշները բնագավառում: Լայնորեն ծավալվեցին աշխատանքի նոր, սոցիալիստական ձևերը — սոցիալիստական մրցութունը, հարվածայնությունը և ստալանովյան շարժումը: Ձեռնարկություններում աճեցին հազարավոր հարվածայիններ, հաբյուրավոր հիանալի ստալանովականներ, որոնք մի քանի անգամ ղերակատարում են իրենց արտադրական նորմաները: Այդ բոլորը հանդեպ աշխատանքի արտադրողականութեան զգալի բարձրացման և արտադրանքի ինքնարժեքի իջեցման:

1939 թվին խոշոր արդյունաբերութեան մեջ մեկ բանվորի տարեկան միջին արտադրանքը կազմում էր 13,631 ուրբ., որ 1927/28 թ. թ. համեմատությամբ տալիս է 390 % աճ:

Ահա երկրի ինդուստրացման վերաբերյալ ընկեր Ստալինի աված ցուցումների իրականացման հետևանքները: Ահա այն պայքարի հանրազոմարները, որ Հայաստանի բուլչեիկները և հայ ժողովուրդը մղել են ստալինյան իմաստուն ղերեկտիվները կենսագործելու համար:

Առկա է լենինյան-ստալինյան ազգային քաղաքականութեան լիակատար հաղթանակը: Այսօր, իր հորեյանի—Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելու քսանամյակի օրը հայ ժողովուրդը հպարտությամբ և խորը երախտագիտությամբ զգացումով իր առաջին հայացքը, իր առաջին խոսքերն ուղղում է հայ ժողովրդի մեծ բարեկամին, ժողովուրդների հանձարեղ առաջնորդ ընկեր Ստալինին: Եվ շատ բան կա ղեկուցելու ընկեր Ստալինին— Հայաստանը հետամնաց ազդարարյին երկրից վերածվել է ինդուստրիալ-ազդարարյին երկրի՝ զարգացած դյուդատնետնութեամբ: Հետևյալ երկու թվերը պերճախոս կերպով կհաստատեն մեր ասածը.

Այնցած 20 տարում արդյունաբերութեան ընդհանուր արտադրանքը 1,7 միլ. ուրբուրց բարձրացել է մինչև 398,6 միլիոն ուրբուրց, կամ ավելացել է 234 անգամ: Արդյունաբերութեան արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսութեան ամբողջ արտադրանքի նկատմամբ 23,9 %-ից (1913 թ.) բարձրացել է մինչև 78,1 % (1939 թ.): Այս է արդյունաբերութեան բնագավառում մղված պայքարի և հաղթանակների հանրագումարը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Յարիզմի դադութային քաղաքականութիւնն իր խորին կռնիքն էր թողել նաև Հայաստանի դուրախանութեան դրութեան վրա:

Մայրաքաղաքներում իր համար հաստատուն զենարան ստեղծելու նպատակով, ցարիզմն ամեն կերպ նպաստում էր, որ կալվածատեր-հողատերերի մի փոքրիկ խմբակը ձեռքում կենսաբնակչութեն ոչ միայն հողային հսկայական տարածութիւնները, այլև ամբողջ դուրքեր: Կուլակային վերնախավը նույնպէս իր ձեռքն էր վերցրել յաւաքույն հողերը, խոտհարքներն ու արտավայրերը: Հայաստանում խոշոր հողատեր էր նաև էջմիածնի վանքը: Այսպիսով դուրախաների դուրքային միակ աղբյուրը— հողը կենտրոնացված էր շահագործողների ձեռքում, իսկ դուրախաների հսկայական մասսան հյուսիսում էր հողազրկութեան ճիւղաններում: Գյուղացիական միջին ընտանիքին ընկնում էր ոչ ալիւրի, քան 1,5—2 հեկտար վարելահող, այն էլ ամենահեռավոր և անբերրի հողերը: Մթերատու և յծկան անասունները նույնպէս կենտրոնացված էին շահագործողների ձեռքում: Գյուղատնտեսութիւնն էլ վարվում էր ամենաէջմիածնի կղանկով: Հողը մշակվում էր անդրջրհեղեղային միջոցներով— արտերը և փայտե փոցիւր— դուրախանտեսական այդ միակ դործիքներն իշխում էին ամենուրեք: Նախասովետական Հայաստանն ամենահեռավոր հասկացողութիւն անգամ չունէր դուրախանտեսական աշխատանքների մեքենայացման մասին:

Գյուղատնտեսութեան առաջատար ճյուղը հացահատիկային

կուլտուրաներն էին— ցորենը և գարին: 345,7 հազար հեկտար ամբողջ ցանքային տարածութիւնից (1913 թ.) հացահատիկները բռնում էին 308 հազար հեկտար:

Ամբողջ դուրախանտեսութիւնը գտնվում էր անասելի ցածր ագրոտեխնիկական մակարդակի վրա, եթե առհասարակ կարելի է խոսել ցարիզմի օրոք ագրոտեխնիկայի դուրքային մասին:

Այդ բոլորի հետևանքով չափից դուրս ցածր էր հողի արդասավորութիւնը և չնչին էր կուլտուրաների բերքատուութիւնը: 1913 թվին հացահատիկների մեկ հեկտարի բերքատուութիւնը կազմում էր 5,8 ցենտներ: Հացահատիկային տնտեսութեան համախառն արտադրանքը կազմում էր 9,8 միլ. ուրբլի, իսկ ամբողջ դուրախանտեսութեան համախառն արտադրանքը նույն իսկ միջին առաջին իմպերիալիստական պատերազմը (1913 թ.) հասնում էր ընդամենը 65,8 միլ. ուրբլու:

Իսկ դաշնակների տիրապետութեան ժամանակաշրջանում Հայաստանի դուրախանտեսութիւնն իսկական կատաստրոֆ էր ենթարկվել և հասել լիակատար քայքայման:

1919 թվին ցանքային տարածութիւնը չորս անգամ կրճատվեց և կազմում էր ընդամենը 82,7 հազար հեկտար՝ 1913 թվին 345,7 հազար հեկտարի դիմաց: Գրեթե բոլորովին չքացել էին տեխնիկական կուլտուրաների ցանքերը: Բավական է ասել, որ 1919 թվին տեխնիկական կուլտուրաների ցանքերը կազմում էին ընդամենը 1.600 հեկտար (1913 թ. 20,5 հազար հեկտարի դիմաց), այդ թվում ծխախոտ— 100 հեկտար, բամբակ— 600 հեկտար: Գրութիւնն ալիւրի վատ էր այդ կուլտուրաների բերքատուութեան նկատմամբ. 1 հեկտար բամբակի ցանքից հավաքում էին ընդամենը 5,6 ցենտներ բամբակի հումք, բամբակի ընդհանուր արտադրանքը 100 հազար ուրբլուց չէր անցնում:

Նույնպիսի բախտ էր վիճակվել խաղողագործութեանը և օտղարուծութեանը: Խաղողի այգիների տարածութիւնը գրեթե կիսով չափ կրճատվել էր. 9,2 հազար հեկտարից (միջին պատերազմը) 1919 թվին մնացել էր 5,1 հեկտար, բերքատուութիւնն իջել էր միջին 32 ց. մեկ հեկտարից: Պտղատու տունկերի տարածութիւնը կրճատվել էր երեք անգամ, — 4,4 հազար հեկտարից (1913 թ.) 1919 թվին մնացել էր ընդամենը 1,5 հազ. հեկտար: Գրեթե կիսով չափ իջել էր բերքատուութիւնը:

Պողաթու ալյուրի 1 հեկտարից հավաքում էին ընդամենը 25 ցեննան. բերք:

Կրճատվել էր նաև անասունների թիվը: 1919 թվին բոլոր խոշոր եղջյուրավոր անասունների քանակը չէր հասնում նույնիսկ 300 հազարի, սաստիկ կրճատվել էր ձիերի և մանր եղջյուրավոր անասունների թիվը:

Այս էր Հայաստանի գյուղատնտեսության պատկերը երկրում սովետական իշխանություն հաստատվելու նախօրյակին:

Սովետական իշխանությունը Հայաստանի աշխատավոր գյուղացիությանն ընդմիջտ ազատագրեց օտարերկրյա և տեղական հարստահարիչների դարավոր լծից: Սովետական իշխանություն հաստատմամբ ամբողջ հողն անցավ գյուղացիներին՝ ձեռքը: Հայաստանի գյուղատնտեսության զարգացման պատմություն մեջ սկսվեց մի նոր ժամանակաշրջան— վիթխարի հաղթանակների և նվաճումների ժամանակաշրջանը: Անցած 20 տարում արժատապես փոխվեց երկրի գյուղատնտեսության դեմքը: Սովետական պետությունը հսկայական միջոցներ ներդրեց Հայաստանի ժողովրդական տնտեսության նաև այս ճյուղում: Անցած տարիներում այդ ներդրումների գումարը կազմում է ավելի քան 40 միլիարդ ուրբլի (ճիշտ 559,6 միլիոն ուրբ.): Ներդրումները կատարվել են գլխավորապես ուժերի և ջրանցքների շինարարության, նոր հողեր յուրացնելու, գյուղատնտեսության մեքենայացման, սովխոզների, մեքենատրակտորային կայանների շինարարության դժով և այլն: Այդ ժամանակվա ընթացքում զգալիորեն ընդարձակվեցին ցանքերի տարածությունները և բարձրացավ գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը: 1919 թվին ցանված 82,7 հազար հեկտարի դիմաց 1940 թվի սկզբին ցանքերի տարածությունը հասավ 438,9 հազար հեկտարի: Համապատասխան չափով բարձրացավ նաև գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը: Այսպես օրինակ, 1940 թվին հացահատիկների բերքատվությունը երկու անգամ զերազանցում է 1913 թվի բերքատվությունից:

Նշանակալից հաջողություններ են ձեռք բերվել նաև անասնարտադրության զարգացման բնագավառում: Խոշոր եղջյուրավոր անասունների քանակը 294,3 հազարից (1919 թ.) 1939 թվին հասավ 762,1 հազար գլխի: Մանր եղջյուրավոր անասունների

թիվը համապատասխանորեն 470,9 հազարից հասավ մինչև 1759,6 հազար գլխի, ձիերի քանակը— 19,9 հազարից մինչև 60 հազար գլխի, խոզերի քանակը— 5,6 հազարից մինչև 60,9 հազ.:

Այս հաջողությունները հանդիսանում են գյուղատնտեսություն կոլեկտիվացման և մեքենայացման ստալինյան քաղաքականությունն իրագործելու անմիջական հետևանքը:

Ներկայումս Հայկ. ՍՍՌ-ում կազմակերպված է 1029 կոլխոզ, կոլեկտիվացված է գյուղացիական բոլոր տնտեսությունների 98,3 %-ը, ցանքերի ամբողջ տարածություն 99,9 %-ը պատկանում է կոլխոզներին և սովխոզներին: Կոլխոզները պետությունը հանձնում են հացահատիկների ընդհանուր պլանի 99,5 %-ը, բամբակի 100 %-ը, ծխախոտի 100 %-ը, ճակնդեղի 100 %-ը և այլն:

Կոլխոզների անասնարտադրական արժանքային ֆերմաների քանակն առ 1 հունվարի 1940 թ. հասել է 3144-ի, այսինքն համարյա 14 անգամ ավելի, քան 1932 թվին: Այդ ֆերմաներում կա մոտ մեկ միլիոն գլուխ անասուն: Այդ ժամանակվա ընթացքում մեծ չափով աճել են կոլխոզների հիմնական արտադրական ֆոնդերը: Եթե 1930 թվին կոլխոզների հիմնական արտադրական ֆոնդերը կազմում էին ընդամենը 2.099 հազար ուրբլի, ապա առ 1/1 1940 թ. այդ գումարը հասավ 182,317 հազար ուրբլու, այսինքն ավելացավ դրեթե 90 անգամ: Միայն 1939 թվի ընթացքում կոլխոզների հիմնական արտադրական ֆոնդերն ավելացան 47 միլիոն 665 հազար ուրբլով:

Կոլխոզների տնտեսական ամրապնդման, ցանքային տարածությունների ընդարձակման, գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման և համայնացված անասնարտադրության զարգացման հետ միաժամանակ մեծ չափով բարելավվել է կոլխոզային մասսաների բարեկեցությունը և բարձրացել են նրանց կիսմուտները:

Գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերված հաջողությունները կարող էին է՛լ ավելի մեծ լինել. բայց հայ ժողովրդի ստոր թշնամիներն այստեղ ևս կարողացել էին կատարել իրենց սև աշխատանքը:

1937 թվի սեպտեմբերին, Հայաստանի բուլլետենների կոմ-

պարտիայի տաննեկերորդ համագումարում բուրժուա-նացի-
նախտական կոնտրոլովուցիոն ղեկավարութեան մերկացումից
հետո հետևյալ ճշմարտացի բնութագիրը տրվեց ժողովրդի
թշնամիների վնասարարական գործունեութեանը՝ գյուղատնտե-
սութեան բնազավառում:

«Աերմացուի գործը Հայաստանում գտնվում էր բացառիկ
կերպով խճճված վիճակում:

Ժողովրդի թշնամիները, սողոսկելով հողային օրգանները,
քոլոր ուժերը գործ էին դրել, որպեսզի խանդարեն տեսակա-
վոր սերմացվով կատարվող ցանքին անցնելը:

Մինչև այժմ մենք չունենք շրջանների համար սահմանված՝
ցորենի ստանդարտ տեսակներ, բացի «ուկրախնկայից»...

Ժողովրդի թշնամիները, որոնք վնասարարութուն էին ա-
նում գյուղատնտեսութեան մեջ, ամեն կերպ հետ էին պահում
խաղողի և պտղատու կուլտուրաների զարգացումը, խոչընդոտ
էին հանդիսանում խաղողի ու պտղատու նոր այգիների տնկմա-
նը, վիժեցնելով ազրոտեխնիկական ձեռնարկումները՝ տունկե-
րի խնամքի և նրանց ժամանակին բուժելու ուղղութեամբ, ի-
րենց թշնամական աշխատանքը քողարկելով իբր թե ավելի կա-
րեվոր կուլտուրաների զարգացման անհրաժեշտութեամբ, նրանք
ոչնչացնում էին գոյութունն ունեցող այգիները՝ գյուղերի
պլանավորման և կուլտուրաների ռայոնացման պատրվակով,
խոչընդոտ էին հանդիսանում պտղաբուծութեան ու խաղողա-
գործութեան զարգացմանը նոր շրջաններում... փոխանակ ա-
մեն տարի 2-3 անգամ փորելու խաղողի այգիները, այգիները
փորել են 2-3 տարին մեկ անգամ:

Խաղողի այգիների և պտղատու այգիների բուժում, իբրև
կանոն, սխտեմատիկաբար չի կատարվել... վնասարարութուն-
նը գյուղատնտեսութեան մեջ ամենից ավելի ուղղված է եղել
անասնապահութեան դժով, ըստ որում այդ կատարվել է ինչ-
պես խոչոր, այնպես և մանր եղջյուրավոր անասունների հա-
մաճարակային հիվանդութունների — բրուցելլոզի, տուբեր-
կուլոզի, դարազի, խոզերի ժանտախտի և այլնի տարածման
մեջօգով:

Նրանք ձախողում էին անասնապահական կառուցումների

շինարարութունը — գոմերի, մեկուսարանների, հորթանոցնե-
րի. կրճատում էին կերաբույսերի ցանքերի տարածութունը:

Մեծ վնաս էր հասցվել ցեղակախն անասնապահութեանը:

... փոխանակ շերամապահութեան կերի բազան ընդարձա-
կելու, թթենիների տնկարանների տարածութունը վերջին տա-
րիներս կրճատվում էր, ամենազելչատիչ ձևով կտրատվում էին
թթենիները...

... 1931—1933 թվականների ընթացքում այդ կոնտրոլ-
ուցիոն վնասարարական բանդան շերամապահական շրջաննե-
րում ոչնչացրել էր ավելի քան 600 հազար թթենի¹⁾:

ՀամԿ(բ)Պ Կենտկոմը և ընկեր Ստալինը 1937 թ. սեպտեմ-
բերի 8-ի իրենց նամակում դբուկոբեցին կոնտրոլուցիոն
բանդայի վնասարարական գործունեութեան արմատները, —
բանդայի, որ խաբեբայական ճանապարհով խցկվել էր Հայկ.
ՍՍՌ պարտիական և սովետական օրգանների ղեկավարութեան
մեջ, — և Հայաստանի պարտիական կազմակերպութուններին
ծրագրային դիրեկտիվ տվին վնասարարութեան հետևանքները
ամենաարագ կերպով լիկվիդացիայի ենթարկելու և գյուղատն-
տեսութեան վերելքը կազմակերպելու մասին:

Պետք է ասել, — և այդ առանց չափազանցութեան — որ
արդեն 1937 թվի վերջից և 1938 թվի սկզբից Հայկ. ՍՍՌ ժո-
ղովրդական տնտեսութեան զարգացման և կուլտուրական շինա-
բարութեան բնազավառում նոր շրջան սկսվեց: Անցած երեք
տարում Հայաստանի բուլչեիկները և ամբողջ հայ ժողովուրդն
ուժ ու եռանդ չխնայելով, պայքարում էին լիովին իրականաց-
նելու ՀամԿ(բ)Պ Կենտկոմի դիրեկտիվները և ընկեր Ստալինի
ցուցումները, որոնք վերաբերում էին վնասարարութեան հետե-
վանքների ամենաարագ լիկվիդացիային և երկրի ժողովրդական
տնտեսութեան, այդ թվում նաև գյուղատնտեսութեան խսկական
վերելքը կազմակերպելուն:

Սովետական կառավարութունը և անձամբ ընկեր Ստալի-
նը բացառիկ հողատարութուն ցուցաբերեցին Հայաստանի ա-
ռաջ դրված խնդիրները իրադրման համար:

1) ՀԿ(բ)Պ Կենտկոմի հաղվեսու գեկուցումից՝ Հայաստանի կոմպո-
տիայի (բուլչեիկների) XI համագումարում — 1938 թ. մայիս

Հայ Ժողովուրդը Հայաստանի (բոլշևիկներին) կոմպարտի-
այի ղեկավարութեամբ պատմով կատարեց ստալինյան առաջադ-
րանքը: Անցած երեք տարում գյուղատնտեսութեան բնագա-
վառում մեծ հաջողութուններ են ձեռք բերվել: Այդ հաջո-
ղութունները եղել են ցանքի տարածութեան, հատկապես
արժեքավոր տեխնիկական կուլտուրաների աճման դժով, բեր-
քատվութեան բարձրացման և կոլտոյների հետադա տնտեսական
ու քաղաքական ամրապնդման, նրանց եկամտաբերութեան ա-
վելացման դժով:

Այդ տարիները եղել են գյուղատնտեսութեան հետադա ին-
տենսիֆիկացիայի և արտադրութեան մեջ նոր, արժեքավոր կուլ-
տուրաներ մտցնելու տարիներ: Այդ ժամանակվա ընթացքում
զգալիորեն ավելացել է կոլտոյային անասնաբուծական սպորան-
քային ֆերմաների քանակը և համայնացված անասունների թի-
վը: Կոլտոյների տնտեսական ամրապնդման հիման վրա բարձ-
րացել է կոլտոյիկների կուլտուր-կենցաղային մակարդակը,
գյուղում ընդարձակվել է կուլտուրական շինարարութեանը:

Առանձնահատուկ զարգացման են հասել խաղողագործու-
թյունը և պտղաբուծութեանը— Հայաստանի գյուղատնտեսու-
թյան այդ ամենաառաջատար և ամենալայն հեռանկարներ ունե-
ցող ճյուղերը: Եթե 1929 թվից մինչև 1938 թվի, այսինքն 10
տարվա ընթացքում Հայաստանում ընդամենը 2,300 հեկտար
խաղողի այգի էր տնկվել, ապա վերջին երեք տարում տնկվել
են 4,100 հեկտ. խաղողի նոր այգիներ: Ընթացիկ տարվա վեր-
ջում խաղողի այգիների ընդհանուր տարածութեանը կհասնի
19,2 հազար հեկտարի, որ 1937 թվի համեմատութեամբ տալիս
է 77 % աճ: Խաղողագործութեանը մեծ զարգացման է հաս-
նում նոր, նախալեռնային շրջաններում— Կոտայքի, Աղիզբեկո-
վի, Միկոյանի և այլ շրջաններում: Այգիների տարածութեան
ընդարձակման հետ մեկտեղ զգալիորեն բարձրացել է խաղողի
բերքատվութեանը: 1939 թվին հեկտարից հավաքվեց 76
ցենտներ խաղող, 1937 թվի 54 ցենտների դիմաց: Առանձին ա-
ռաջավոր կոլտոյներ և բրիգադներ է՛լ ավելի բարձր բերք են
հավաքում: Վեդու շրջանի Արարատ գյուղի կոլտոյը 1939 թ.
հեկտարից ստացավ 120 ցենտներ խաղող: Բերիայի անվան

շրջանի Մտալինի անվան կոլտոյը 1 հեկտարից ստացավ 100
ցենտներ բերք: Նույն շրջանի Կոխա գյուղի՝ Վորոշիլովի ան-
վան կոլտոյի մի օղակը 6 հեկտար տարածութեանից ստացել է
180 ցենտներ միջին բերք մեկ հեկտարից, իսկ առանձին հեկ-
տարներ տալիս են է՛լ ավելի բարձր, ուկրաինացիներ բերք:

Պտղաբուծութեան: Մինչև 1937 թվականը պտղաբուծու-
թյունը զարգանում էր համարյա բացառապես սովյուղներում:
Կոլտոյներում այդ կուլտուրայի զարգացման վրա ոչ մի ու-
շադրութեան չէր դարձվում: Վերջին երեք-չորս տարում զգա-
լիորեն ընդլայնվեցին պտղատու այգիների տարածութեանները,
մասնավանդ կոլտոյներում: Այդ ժամանակվա ընթացքում տնկ-
ված է մոտ 7000 հեկտար պտղատու այգի, որ 1937 թ. սկզբի
հետ համեմատած՝ 85 % աճ է տալիս: Պտղաբուծութեանը հա-
մարձակ կերպով տարածվում է ուսպուրլիկայի նաև լեռնային
շրջաններում: Այնպիսի շրջաններ, ինչպես Միսիանի, Մարտու-
նու, Բասարզեչարի, Սևանի, Սպիտակի և այլ շրջանները, հա-
ջողութեամբ յուրացնում են պտղաբուծութեան կուլտուրան:
Այդ շրջաններում արդեն տնկված է ավելի քան 1000 հեկտար
պտղատու այգի, այդ թվում մոտ երեք հարյուր հեկտար մի-
ջուրինյան կորիզավոր պտուղների սորտեր:

Նշանակալից չափով ավելացել է պտղատու այգիների բեր-
քատվութեանը: 1939 թվին 1 հեկտար տունկերից հավաքվել է
45 ցենտներ պտուղ, որ 1936 թվի համեմատութեամբ տալիս է
մոտ 30 % աճ: Խաղողագործութեան և պտղաբուծութեան սլա-
նային զարգացումն ապահովելու և բարձրարժեք տեսակներ ըն-
դերելու համար ուսպուրլիկայում կազմակերպված է տնկարա-
նային տնտեսութեան: Տնկարաններ են ստեղծված ավելի քան
30 շրջաններում:

Բամբակագործութեան: Վերջին տարիներում բամբակագոր-
ծութեանը զարգացել է դլխավորապես բերքատվութեան բարձ-
րացման ուղղութեամբ, որովհետև անցալուծում բամբակի ցան-
քերի տարածութեանն ամենարժեքավոր կուլտուրաների— խա-
ղողի և պտուղների տունկերի ոչնչացման հաշիվն անհիմն կեր-
պով ընդարձակելը հանգել էր բամբակի բերքատվութեան խիստ
իջեցման: 1937 թվին մեկ հեկտարից հավաքվել էր ընդամենը

13,1 ցենտն. բամբակ: Այս վերջին տարիներում Հայաստանի բամբակագործները կարողացել են խոշոր չափով բարձրացնել բերքը: 1938 թվին, այսինքն մեկ տարվա ընթացքում բամբակի 1 հեկտարի բերքատվությունը 13,1 ցենտներից (1937 թ.) բարձրացվեց մինչև 17,2 ցենտների, իսկ 1939 թվին բարձրացվեց ևս 2 ցենտներով: Այսպիսով, միայն իրկու տարվա ընթացքում, բամբակի բերքատվությունը 13,1 ցենտներից հասավ 19,2 ցենտների, կամ ավելացավ համարյա 50 %-ով: Համառ պայքարի հետևանքով սեպտեմբերի 1-ին ժամկետից առաջ կատարեց բամբակի բերքատվության վերաբերյալ կառավարական պլանային առաջադրանքը, որ սահմանված էր երրորդ հնդամյակի վերջի, այսինքն 1942 թվի համար:

Չնայելով, որ 1939 թվին բամբակի ցանքի տարածությունը 1300 հեկտարով պակաս էր, քան 1938 թվին (1938 թվին — 17,1 հազար հեկտ.), Հայաստանի կոլխոզները հավաքեցին 29,790 տոննա բամբակ, կամ 9,120 տոննայով ավելի, քան հավաքվել էր 1937 թ., որ տալիս է 42,6 % աճ:

Առանձին առաջավոր ուսյուններ, կոլխոզներ և բրիգադներ էլ ավելի բարձր բերք են ստացել: Այսպես օրինակ՝ Ղամարլուի շրջանը միջին թվով մեկ հեկտարից ստացել է 23,6 ցենտն., Վաղարշապատի շրջանը՝ 22,7 ցենտներ: Ղամարլուի շրջանի Իմանչալու գյուղի կոլխոզը 70 հեկտար տարածությունից միջին թվով ստացել է հեկտարից 34 ցենտն. բամբակ:

Վաղարշապատի շրջանի «Անաստիա» կոլխոզը, որ պարզեփատված է Լենինի շքանշանով, 270 հեկտար տարածությունից միջին թվով 1 հեկտարից ստացել է 27 ցենտներ բամբակ: Ղամարլուի շրջանի Ձոհրաբլու գյուղի կոլխոզի օղակավար Վաբյա Փանոսյանը 4,5 հեկտար տարածությունից միջին թվով հավաքել է 1 հեկտարից 50 ցենտներ:

Հայաստանի բամբակագործները կարողացել են այդպիսի բարձր բերք ստանալ շնորհիվ մի շարք ազդրոտեխնիկական ձեռնարկումների կիրառման, — բամբակենու ծերատում, ցանքի ժամկետերի կրճատում, ոռոգման և մշակման ճիշտ կազմակերպում, իր ժամանակին բուժում, հողի լավ նախապատրաստում, պարարտացում և այլն: Բացի ազդրոտեխնիկական ձեռնարկումներից, բամբակի բերքատվության բարձրացման գոր-

ծում մեծ դեր խաղաց սոցիալիստական մրցույթունը, որ լայնորեն ծավալված է բամբակագործների մեջ թե շրջանների, թե կոլխոզների, բրիգադների և օղակների միջև:

Ծխախոտագործություն: Հայաստանի գյուղատնտեսությունը կարևորագույն ճյուղերից մեկն է հանդիսանում նաև ծխախոտագործությունը: Այս կուլտուրան թեև վաղուց գոյություն ունի Հայաստանում, սակայն նրա զարգացումը կրիայի քայլերով էր ընթանում: Ծխախոտի մշակումը սահմանափակվում էր միայն 3-4 շրջաններով: 1937 թվին ծխախոտի պլանտացիաները բռնում էին ընդամենը 2400 հեկտար: Ծխախոտագործության խիստակազարգացումը սկսվեց միայն վերջին տարիներում: Ընթացիկ տարում ծխախոտի ցանքերի տարածությունն հասցվեց մինչև 5000 հեկտարի: Միայն 1940 թվին ցանքային տարածությունն ավելացվեց 1700 հեկտարով: Ծխախոտի ցանքերի տարածության այսպիսի ավելացումը հնարավոր եղավ շնորհիվ այն հանդամանքի, որ այդ կուլտուրան սկսեց մշակվել նոր շրջաններում: Ընթացիկ 1940 թվին ծխախոտի մշակությունները արգեն զբաղվում են 22 շրջաններ, այսինքն ուղիղ երկու տնդամ ավելի, քան 1938 թվին:

Նկատելիորեն բարձրանում է նաև բերքատվությունը: Չընայելով, որ 1939 թվին ծխախոտի բոլոր պլանտացիաների համարյա մեկ քառորդ մասը կարկտահար եղավ, այնուամենայնիվ հեկտարից ստացվեց 8,2 ցենտներ միջին բերք, պլանային առաջադրանքի 7 ցենտների դիմաց: Առանձին, մանավանդ ծխախոտագործական հին շրջանները, ավելի բարձր բերք են ստանում: Եամչաղինի շրջանի Բերիայի անվան կոլխոզը 40 թվին մեկ հեկտարից ստացավ 19,8 ցենտներ միջին բերք: Նույն կոլխոզի բրիգադի վարիչ Մաճկալյանը 16 հեկտար տարածությունից միջին թվով ստացավ մեկ հեկտարից 22 ցենտներ ծխախոտ:

Ցանքատարածությունն ընդարձակելու և բերքատվությունը բարձրացնելու հետ մեկտեղ կոլտնտեսությունները մշակում են «Սամսոն», «Տրապիզոն» բարձրարժեք ծխախոտների տեսակները, ընդարձակում են ծխախոտի չորանոցների շինարարությունը: Այդ ձեռնարկումները զգալիորեն բարձրացնում են ծխախոտի որակը:

Վերջին տարիները ընթացքում Հայաստանի գյուղատնտես-
տաբնական մեջ մտցված են տեխնիկական նոր կուլտուրաներ, ար-
գյուղաբերական մշակման համար՝ շաքարի ճակնդեղ և խորդե-
նի (եթերատու)։ Արդեն ընթացիկ տարում շաքարի ճակնդեղի
պլանտացիաները բռնում են 1500 հեկտար տարածություն։ Ծա-
քարի ճակնդեղը հաջողությամբ ընդերվում է սեպտեմբերիկա-
յի ցածրադիր շրջաններում։ Այդ շրջանների տասնյակ կոլխոզ-
ներ հացահատիկների բերքահավաքից հետո նույն տարածու-
թյուններում ճակնդեղ են ցանում և յուրաքանչյուր հեկտարից
ստանում 200 և ավելի ցենտներ երկրորդ բերք։ Տեղական հում-
քի այդ բազայի վրա միութենական կառավարությունը հաստա-
տել է շաքարի խոշոր գործարանի կառուցումը Հայաստանում։
Գործարանի կառուցումն արդեն սկսվել է։

Մորդենին (герань), Հայաստանի համար բոլորովին նոր
այդ կուլտուրան, հաջողությամբ մուտք է գործում գյուղա-
տնտեսության մեջ։ 1939 թվին խորդենու ցանքի տարածությու-
նը հասնում էր 280 հեկտարի, իսկ ընթացիկ 1940 թվին ընդար-
ձակվել է և հասել մինչև 450 հեկտարի։ Հայաստանում սկսել
են մշակել նաև կաղանկիկյան վարդենին, որը վարդի բարձրաբ-
ժեք յուղ է տալիս։

Հայաստանում հաջողությամբ զարգանում է կարտոֆիլի
կուլտուրան։ Թեև Հայաստանում կարտոֆիլը վաղուց է մշակ-
վում, սակայն մինչև վերջին երկու տարիները այդ կուլտու-
րան, ինչպես հարևան է, չէր յուրացված։ Հաճախ այլասերվում
էին տեղական սերմերը, սաստիկ տարածված էին կարտոֆիլի
գանաղան հիվանդությունները։ Կարտոֆիլի նոր, բարձր բերք
տվող տեսակները չէին զարգացվում, ազրոտեխնիկան խիստ
ցածր մակարդակի վրա էր գտնվում։ Այդ բոլորի հետևանքով
կարտոֆիլը ցածր բերք էր տալիս։ Այսպես օրինակ՝ 1936 թվին
սեպտեմբերիկայում կարտոֆիլի բերքատվությունը միջին թվով
հասնում էր մեկ հեկտարից 48 ցենտների, իսկ մի շարք շրջան-
ներում մեկ հեկտարի բերքը 20-30 ցենտներից ավելի չէր լի-
նում։ 1937 թվին միջին բերքը կազմում էր 55,2 ցենտներ։ Մի-
այն սկսած 1938 թվից բարձր ուշադրություն դարձվեց կարտո-
ֆիլի մշակումը զարգացնելու վրա։ Նույն թվականին Կենտրո-
նական Ռուսաստանից բերվեց նոր, բարձր բերք տվող «լուրի»

տեսակը, որն արագությամբ աճեցվեց սերմնացուլի համար և
տարածվեց կարտոֆիլի ցանոց շրջաններում։ Միաժամանակ ձեռ-
նարկվեցին ազրոտեխնիկական մի շարք միջոցառումներ։

Ցածրադիր շրջաններում, ուր հողի բարձր ջերմաստիճանի
հետևանքով կարտոֆիլն այլասերվում էր, սկսեց գործադրվել
սկադեմիկ Լիսենկոյի առաջարկած մեթոդը — կարտոֆիլի ամա-
ռային ցանքը։ Այսպիսով կարտոֆիլի մշակումը զարգացնելու
համար կիրառվեցին մի ամբողջ կոմպլեկս ձեռնարկումներ, ո-
րոնք, ինչպես և պետք էր սպասել, լավ արդյունքներ տվին։
1939 թվին բերքատվությունը բարձրացավ մեկ հեկտարից 105
ցենտներին, 1936 թվի 48 ցենտների և 1937 թվի 55 ցենտների
դիմաց։ Իսկ կարտոֆիլի ամբողջ բերքը 1939 թվին 1937 թվի
համեմատությամբ կրկնապատկվեց։

Կարտոֆիլի բերքատվությունը բարձրացնելու գործում ա-
ռանձին կոլխոզներ հիանալի արդյունքի են հասել։ Այսպիսով
շրջանի Մաթեր գյուղի կոլտնտեսությունը 5 հեկտար տարած-
ությունից ստացել է միջին թվով հեկտարից 441,5 ցենտներ
կարտոֆիլ։ Ստեփանավանի շրջանի՝ Միկոյանի անվան կոլխոզը
78 հեկտար ցանքից միջին թվով ստացել է հեկտարից 320
ցենտներ բերք։ Կարտոֆիլի մշակման առանձին առաջավորներ
կարողացան սեկորդային բերք ստանալ։ Ստեփանավանի շրջա-
նի Գյուլյազարակ գյուղի կոլխոզի օղակավար Լուանյա Շահե-
նյանը և նույն շրջանի Հոբարցի գյուղի կոլխոզի օղակավար
Հոռոմ Դուկասյանը միջին թվով մի հեկտարից հավաքել են
565 ցենտներ կարտոֆիլ։

Հիանալի արդյունքներ է տալիս կարտոֆիլի ամառային
ցանքը։ Արդեն առաջին փորձնական տարում ամբողջ կոլխոզներ
ամառային ցանքերից մեծ բերք են ստանում։ Ապարանի շրջա-
նի Բլիսեր գյուղի կոլխոզը 1 հեկտարից ստացել է 410 ցենտ-
ներ միջին բերք։ 1939 թվին մի շարք շրջաններում — Չանդե-
բասարի, Վաղարշապատի, Հոկոտեմբերյանի, Աշտարակի և այլ
շրջաններում նոր մեթոդով ցանվեց 270 հեկտար։

Ամառային ցանքի մեթոդը կիրառելու հետ միասին ՍՍՌ-ի
Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի բիոլոգիա-
կան ինստիտուտը մշակում է այն հարցը, թե ինչպես կարելի
է նույն տարում ցանել նոր հավաքված կարտոֆիլը, որ

հնարավորութիւնն տա մեկ տարում երկու անգամ կարողութիւն
բերք ստանալ: Այս ուղղութեամբ ևս ջիւզ հաջողութիւններ չեն
ձեռք բերվել:

Նոյնմբերյանի շրջանի Արչիս գյուղի կոլխոզի խրճիթ-լարո-
բատորիայի վարիչ ընկեր Մարտիրոսյանը, գործադրելով նոր
մեթոդը, ստացավ կատօֆիլի երկրորդ բերք— մեկ հեկտարից
140 ցենտներ: Մրժֆանի գիտական աշխատակից ընկ. Տեր-Սա-
հակյանը ստացավ կարտօֆիլի երկրորդ բերք— հեկտարից 80
ցենտներ: Այս նոր մեթոդն արդեն գործադրվում է 10 շրջան-
ներում:



Բարձրարժեք և տեխնիկական կուլտուրաների ցանքերի տա-
րածութեան այդպիսի ընդարձակումը և այդ կուլտուրաների
բերքատուութեան բարձրացումը հնարավոր եղավ մի շարք իր-
րիկացիոն ձեռնարկումների կիրառման և ջրովի հողերի տարա-
ծութիւնն ավելացնելու շնորհիւ: Վերջին տարիներս Հայաս-
տանում մեծ աշխատանք է կատարված ոռոգման նոր ջրանցք-
ներ կառուցելու և ճահիճները չորացնելու ուղղութեամբ, նպա-
տակ ունենալով ճահճացած և ամայի հողերը դնել գյուղատուն-
տեսական շրջանառութեան մեջ: Այդ ձեռնարկումների իրակա-
նացման հետևանքով 1938—39 թ. թ. ընթացքում ոռոգելի տա-
րածութիւնն ավելացել է 13,4 հազար հեկտարով: Ընթացիկ
տարում ավարտվում է ոռոգման և չորացման չորս սիստեմների
չինարարութիւնը: Սպիտակի շրջանում արդեն ավարտված և
չահագործման է հանձնված Միկոյանի անվան ջրանցքը, որ ու-
նի 47 կելոմետր երկարութիւն և ոռոգում է 2650 հեկտար հող,
գլխավորապէս շաքարի ճակնդեղի պլանտացիաները: Ավարտված
է նաև Ղամարլուի ոռոգման ու ճահիճների չորացման ցանցի
չինարարութիւնը— 1940 թվի իրրիկացիոն շինարարութիւնը
լրացուցիչ կերպով տալիս է 10 հազար հեկտար ջրովի հող:
Այդ աշխատանքների դերակշռող մասը կատարվում է կոլխոզ-
ների ուժերով ու միջոցներով, Յերզանայի մեծ ջրանցքի շի-
նարարութեան փորձի հիման վրա:

Այսպիսով 1938 թվից մինչև 1940 թվից Հայկական ՍՍՌ-ում

ոռոգելի տարածութիւնն ավելացել է 23,4 հազար հեկտարով:
Այդ կազմում է 1938 թվի սկզբում արժեքավոր և տեխնիկական
կուլտուրաներով բնաված ամբողջ տարածութեան համարքս 50
տոկոսը:

Սրանք են Հայաստանի աշխատավորների աշխատանքի հան-
րազումարները երկրի գյուղատնտեսութեան հետադա ինտենսի-
ֆիկացիայի բնագավառում: Այդ աշխատանքները հետևանքով
Հայաստանի գյուղատնտեսութեան զարգացման մեջ սկսվեց մի
նոր շրջան, բացվեց իրոք որ մի նոր էջ:

ՍՍՌ Միութեան Ժողովրդական Կոմիսարները Սովետը և
ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն 1940 թվի սեպտեմբերի 8-ի
«Հայկական ՍՍՌ-ում պտղաբուծութիւնն ու խաղողագործու-
թիւնը և տեխնիկական կուլտուրաները զարգացնելու ձեռնար-
կումների մասին» իրենց պատմական որոշման մեջ հետևյալ
դնահատականը տվին Հայկ. ՍՍՌ-ում վերջին երեք տարում
գյուղատնտեսութեան բնագավառում կատարված աշխատանքի
մասին.

«ՍՍՌ Միութեան Ժողովրդական Կոմիսարները Սովետը և
ՀամԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն նշում են, որ Հայկական
ՍՍՌ-ն վերջին տարիներս մեծ հաջողութիւններ է ձեռք բերել
գյուղատնտեսութեան ասպարիզում, հատկապէս պտղաբուծու-
թեան ու խաղողագործութեան և տեխնիկական կուլտուրաների
զարգացման գործում:

ՀամԿ(բ)Պ Կենտրոնի 1937 թ. սեպտեմբերի 8-ի դիրեկտիվ-
ները ճշտորեն կենսագործվելու հետևանքով, զգալիորեն բնագոր-
ծակվել է առաջատար գյուղատնտեսական կուլտուրաների տա-
րածութիւնը, բարձրացել է նրանց բերքատուութիւնը և ասել
է կոլխոզների եկամտաբերութիւնը:

Այս տարի խաղողի այգիների տարածութիւնը հասնելու է
19,2 հազար հեկտարի, որը, համեմատած 1937 թվականի ըս-
կզբին եղած տարածութեան հետ, կազմում է 177 տոկոս: Խա-
ղողի այգիների բերքատուութիւնը 1936 թվականին մի հեկտա-
րի տված 54 ցենտներից 1939 թվականին հասել է 76 ցենտների:

Պտղատու այգիները— դեղձի, ծիրանի և այլ այգիների
տարածութիւնը հասել է 19,5 հազար հեկտարի, որը 1937 թը-
վականի սկզբին եղած տարածութեան հետ համեմատած կաղ-

Տում է 185 տոկոս: Պատասու աշխատողների բերքավաճությունը 1939 թվականին հասել էր 45 ցենտների՝ 1936 թվականի 36 ցենտների դիմաց:

Ծխախոտի ցանքերի տարածությունը հասել է 5 հազար հեկտարի, որը 1937 թվականի սկզբներին եղած տարածություն հետ համեմատած՝ կազմում է 208 տոկոս: Ծխախոտի բերքատվությունը մի հեկտարից 1939 թվականին հասել է մինչև 8,2 ցենտներին:

Չգյուղի հաջողություններ են ձեռք բերվել բամբակի բերքատվությունը բարձրացնելու գործում: Բամբակի բերքը 1939 թվականին կազմում էր 19,1 ցենտներ մեկ հեկտարից՝ 1936 թվականի 12 ցենտների դիմաց: Այդպիսով երրորդ հնգամյակի սկզբը բամբակի բերքավաճության բնագավառում ժամկետից առաջ է կատարվել Հայկական ՍՍՌ-ում:

Կոլխոզների կազմակերպչական-տնտեսական ամբողջման, կոլխոզնիկների հարաճուն քաղաքական ակտիվության և բերքատվության բարձրացման հիման վրա զգալիորեն աճել է կոլխոզնիկների ունևորությունը:

Կոլխոզների ընդհանուր եկամուտը վերջին չորս տարվա ընթացքում ավելացել է չորս անգամ և 1939 թվականին հասել է 263 միլ. ուսուրում՝ 1935 թվականին ստացված 60 միլիոն ուսուրում դիմաց: Կոլխոզային մեկ տնտեսությունն ընկնող զրամական եկամուտը վերջին չորս տարում ավելացել է միջին հաշվով համարյա 5 անգամ, իսկ տարեկան մեկ միլիոն ուսուրում ավելի եկամուտ առացող կոլխոզները թիվը, համեմատած 1937 թվականի հետ, ավելացել է 4,5 անգամ:

1938—1939 թվականներին ընթացքում Հայկական ՍՍՌ-ում ստեղծվել հողերի տարածությունն ավելացել է 13,4 հազար հեկտարով: 1940 թվականին ավարտվում է 4 նոր ստեղծվել և ցամաքեցուցվել սիասեմների շինարարությունը, որը հիմնականում կատարվում է կոլխոզների ուժերով ու միջոցներով, որոնք ավելացնում են նոր ստեղծվել հողերի տարածությունը 10 հազար հեկտարով:

Ոռոգելի տարածություններն ընդարձակելու և բերքատվությունը բարձրացնելու ասպարիզում, խաղողագործության, պտղաբուծության ու տեխնիկական կուլտուրաների զարգացման

բնագավառում ձեռք բերված հաջողությունները սլաքաններ են ստեղծում Հայկական ՍՍՌ-ում դյուրատնտեսության հետագա զարգացման ու վերելքի համար:

ՍՍՌ Միության Ժողկոմսովետը և ՀամԿ(բ)Պ Կենտկոմը համաձայնություն են տալիս ստեղծել հողերի տարածությունը մանր և միջակ ջրանցքներ անցկացնելու միջոցով ընդարձակելու ձեռնարկումներին, որպես ամենից ավելի էֆեկտավոր և Հայաստանի բնա-պատմական պայմաններին համապատասխանող ձեռնարկումներ (կտրատված ուղեքի և քարքարոտ հողեր)՝¹⁾

ՍՍՌ Միության Ժողկոմսովետը և ՀամԿ(բ)Պ Կենտկոմը միաժամանակ նշել են նոր ձեռնարկումներ՝ Հայաստանում պտղաբուծության և տեխնիկական կուլտուրաների հետագա զարգացման համար:

Այդ որոշման համաձայն, չորս տարվա ընթացքում (1941—1944) պետք է կիրառվեն հետևյալ ձեռնարկումները.

1) Ոռոգելի տարածությունը պետք է ավելացվի 54 հազ. հեկտարով, այդ թվում անմշակ մնացած հողերը յուրացնելու հաշվին՝ 14 հազ. 4.:

2) Պետք է տնկվեն 15 հազ. հեկտար խաղողի նոր աշխատանք և 20 հազ. հեկտ. պտուղների նոր տունկեր, իսկ այդ նշանակում է՝ կրկնապատկել խաղողի և պտղատու աշխատանքի տարածությունը:

3) Ծխախոտի ցանքը պետք է ավելացվի 5,6 հազ. հեկտարով (ավելի քան կրկնապատկվում է):

4) Ծաքարի ձակնուկի ցանքի տարածությունն ավելանում է 2,4 հազար հեկտարով (ավելի քան կրկնապատկվում է): Բամբակի ցանքի տարածությունն ավելանում է 4 հազար հեկտարով: Տարածությունների ընդարձակման հետ միասին Միության Ժողկոմսովետը և ՀամԿ(բ)Պ Կենտկոմը ձեռնարկումներ են նշել արժեքավոր և տեխնիկական կուլտուրաների բերքատվության հետագա բարձրացման համար: Բերքատվության վերաբերմամբ որոշման մեջ տրված է հետևյալ կառավարական առաջադրանքը.

«1944 թվականին մի հեկտարի բերքատվությունը լրիվ

1) «Սովետական Հայաստան», № 216, 1940 թ.

պաղարկութեան շրջանում հասցնել խաղողինը 100 ցենտներէ, դեղձինը 60 ցենտներէ և ծիրանինը 100 ցենտներէ, բամբուկի բերքատուութունը 1939 թվականի 19,1 ցենտներէ մինչև 1944 թվականը բարձրացնել 24 ցենտներէ, հասցնելով բամբակի արտադրանքը 1944 թվականին մինչև 480 հազար ցենտներէ. ծխախոտի բերքատուութունը 1939 թվականի 8,2 ցենտներէ 1944 թվականին բարձրացնել մինչև 9 ցենտներէ, 1944 թվականին արտադրանքը հասցնելով մինչև 94,5 հազար ցենտներէ. շաքարի ձախնդեղի բերքատուութունը 1939 թվականի 182 ցենտներէ 1944 թվականին բարձրացնել մինչև 250 ցենտներէ, 1944 թվականին արտադրանքը հասցնելով մինչև մեկ միլիոն ցենտներէ»¹) :

Միութենական կառավարութեան և ՀամԿ(բ)Պ Մասլինյան Կենտրոնի որոշումը շտեմայած ոգևորութուն առաջացրեց Հայաստանի աշխատավորների մեջ, որոնք մեծադուրս խանդավառութեամբ ընդունեցին պարտիայի և կառավարութեան ձեռնարկումները :

Հայ ժողովուրդն անձայրածիր Միութեան բոլոր ժողովուրդների հետ միասին իր խորը երախտագիտութեամբ և անսահման սերն է հայտնում ժողովուրդների մեծ առաջնորդ ընկեր Մասլինին, ցարական Ռուսաստանի երբեմնի հետամնաց ծայրամասնի ծաղկման մասին հայրական հոգատարութեան ցույց տալու համար : Հայաստանի աշխատավորներն արդեն ձեռնամուխ են եղել իրադրծելու ստալինյան առաջադրանքը Հայկ. ՍՍՌ-ում արժեքավոր և տեխնիկական կուլտուրաների հետագա զարգացման մասին, երկրի դյուղատնտեսութեան հետագա ինտենսիֆիկացիայի մասին :

Սովետական իշխանութեան ժամանակվա ընթացքում մեծ անզաշարժեր են կատարվել Հայաստանի հացահատիկային անտեսութեան մեջ : 1919 թվի համեմատութեամբ հացահատիկային կուլտուրաների ցանքերի տարածութեանը 78,4 հազ. հեկտարից ավելացել է մինչև 357,8 հազար հեկտարի : Զրախորհն բարձրացել է նաև հացահատիկային կուլտուրաների բերքը : Ընթացիկ 1940 թվականին հացահատիկների միջին բերքը

կազմում է մեկ հեկտարից 10 ցենտներ, 1913 թվականի 5,8 ցենտների և 1938 թ. 8,6 ցենտների դիմաց :

Վերջին տարիներս մեծ աշխատանք է կատարվել սերմացույի ֆոնդը բարելավելու և նոր սորտեր ընդերելու դժով : Հայաստանի դաշտերում արդեն լայն մասշտաբներով մշակվում են ցորենների այնպիսի բարձրաբերք, փորձված սորտեր, ինչպես «ուկրաինկան», «դելֆին», «էրինացեումը», «գրեկումը» և այլքն : Ռեսպուբլիկայում ստեղծված են 16 սերմնաբուծական կոլտոններ, որոնք բազմացնում են հանձնարարված սորտերը :

Սերմացուի որակը և բերքատուութունը բարձրացնելու համար 1939 թվից արտադրական մեծ մասշտաբներով կատարվում է ցորենների ներսորտային խաչաձևում : Ինչպես հայտնի է, այդ մեթոդը մշակել է ակադեմիկ Տ. Դ. Լիսենկոն :

1939 թվին ցորենի ներսորտային խաչաձևումը կատարվել է 536 կոլտոններում և սկսվել է ստացված սերմերի բազմացումը :


Հացահատիկային կոլտոնները առաջ ծառայած է պատասխանատու մի խնդիր— առաջիկա մեկ-երկու տարում միջառակապես բարձրացնել հացահատիկային կուլտուրաների բերքատուութունը : Դրա համար ստեղծված են բոլոր անհրաժեշտ պայմանները :

Արդեն այժմ առանձին առաջավոր կոլտոններ երկու անգամ ավելի բերք են տալիս, համեմատած հացահատիկների միջին բերքատուութեան հետ ռեսպուբլիկայում : Այսպես օրինակ՝ 1939 թվին Մարտունու շրջանի Աթղաչ գյուղի կոլտոնը 151 հեկտար տարածութեան յուրաքանչյուր մեկ հեկտարից ստացել է ցորենի 18 ցենտներ միջին բերք, Դուղբյանդի շրջանի Փ. Ղարաքիլիսա գյուղի Բերիայի անվան կոլտոնը 342 հեկտար տարածութեան յուրաքանչյուր հեկտարից միջին թվով ստացել է 16,9 ցենտներ ցորեն :

Գյուղատնտեսութեան զարգացմանը և կուլտուրաների բերքատուութեան բարձրացմանը մեծ չափով նպաստում է դյուղատնտեսութեան մեքենայացումը :

Սովետական իշխանութեան օրով և մանավանդ վերջին տարիներս մեծապես աճել է ՄՏ կայանների պարկը : Եթե 1937 թվականին Հայաստանում կար ընդամենը 24 ՄՏ կայան 1,111

¹ «Սովետական Հայաստան», № 216, 1940 թ.



կառավարի շրջանի ՄՏ կայանի ստաբիլիզացիոնային տրակտորիտի Մեզրայի Ծեղաբերան

տրակտորներով, ապա 1939 թ. ՄՏ կայանների թիվը հասել է 32-ի, իսկ տրակտորային պարկում տրակտորների թիվն աճելացել է մինչև 1,285-ի, կալվիչների թիվը հասել է 327-ի, կոմբայնների թիվը՝ 246-ի: ՄՏ կայաններում աճել ու զտտախարակվել են խոշոր թվով կոլխոզնիկներ, որոնք տիրապետել են դյուզաանտեսական բարդ մեքենաներին: Մի շարք ստաբիլիզացիոն տրակտորիստներ և կոմբայնավարներ սխտեմատիկորեն կատարում ու դերակատարում են իրենց արտադրական նորմաները: Թալինի ՄՏ կայանի տրակտորիստ Սարգիս Խորակյանը ՄՏ2 տրակտորով 1939 թվին պլանային 322 հեկտ. դիմաց վարել է 691 հեկտար, տնտեսելով 2035 կգ վառելանյութ: Ախտայի ՄՏ կայանի կոմբայնավար Վաղդեն Կարապետյանը 1939 թ. պլանով նախատեսված 233 հեկտարի փոխտերև հավաքել է 465 հեկտար տարածության բերքը: Վերջին տարիներս հատուկ կուրսերի միջոցով պատրաստված է աճելի քան 800 կին-տրակտորիստ, 1175 մեխանիզատորական աշխատող, որոնց թվում՝ 89 կոմբայնավար, կոմբայնավարների 112 օգնական, բարդ մեքենաների 172 մեքենավար, 106 չոֆեր և այլն: Բացի դրանից, զանազան կուրսերում պատրաստված և վերապատրաստված է աճելի քան 12 հազար հոգի, — դյուզաանտեսության մասնագիտական կադրեր:

Անասնաբուժություն: Բարձրարժեք և տեխնիկական կուլտուրաներից հետո Հայաստանի դյուզաանտեսության հեռակալ առաջատար ճյուղն է անասնաբուժությունը: Անասնաբուժության բնագավառում մնասարարության հետևանքների լիկվիդացիայից հետո Հայաստանում կիրառվեցին մի շարք արժանազան ձեռնարկումներ՝ անասնաբուժությունը զարգացնելու և ամրապնդելու համար: Հատկապես ՀամԿ(բ)Պ Կենտկոմի և ՍՍՌՄ Ժողկոմսովետի 1939 թ. հուլիսի 8-ի «Կոլխոզներում համայնական անասնաբուժության զարգացման միջոցառումների մասին» պատմական որոշումից հետո Հայաստանի կոլխոզները մեծ աշխատանք են կատարել այդ ասպարիզում:

Մինչև այդ որոշումը ուսպուբլիկայի մի շարք կոլխոզներ չունեին կաթնաապրանքային, խոզաբուծական ֆերմաներ, շատ ֆերմաներ կոմպլեկտավորված չէին, իսկ իննը կոլխոզներում անասնաբուծական ֆերմաներ բոլորովին չկային:

Պարտիայի և կառավարության գերեկտիվն իբրևործելու հետևանքով ներկայումս առ 1/IX 40 թ. ամյալների համաձայն, ռեսպուբլիկայի բոլոր 1029 կոլտոգներն անասնաբուծական Ֆերմաներ ունեն: 490 կոլտոգներ ունեն առնվազն երկու-տեղան Ֆերմա: 623 կոլտոգներում կան երեքական Ֆերմաներ: Կոլտոգների մեծ մասը և ռեսպուբլիկան ամբողջությամբ կատարել են անասունների գլխաքանակի պլանային նորման, որ սահմանված է 1942 թ. վերջի համար:

Ռեսպուբլիկայում մեծ աշխատանք է կատարված անասունների ցեղայնությունը բարելավելու ուղղությամբ: Հաջողությամբ անց է կացվում մետիսացումը, խոշոր եղջյուրավոր անասունների մայրական գլխաքանակի (կովերի) մոտ 90%-ը մեախոսցված է արժեքավոր, կուլտուրական ցեղերով— չվիցներով և սիմենտալներով: Ոչխարները մետիսացման են ենթարկվում նրբամաղ ցեղերով—մերինոսներով: Բոլոր մայր ոչխարների մոտ 95%-ն ընդգրկված է մետիսացումով: Խոզերը մետիսացման են ենթարկված 72%-ով, ձիերը՝ 51%-ով:

Ռեսպուբլիկայում կան խոշոր եղջյուրավոր անասունների ցեղային սովխոզ (Լոուս ցեղային սովխոզը) և ցեղային բուծաբան (Կալինինոյի): 64 կոլտոգներում կազմակերպված են ցեղային Ֆերմաներ, այդ թվում 54-ը—խոշոր եղջյուրավոր անասունների, 14-ը—ոչխարաբուծական և 5-ը—խոզաբուծական: Ձեռք առնված միջոցառումների հետևանքով զգալիորեն բարելավվել է անասունների ցեղային կազմը: 1940 թվի սկզբին խոշոր եղջյուրավոր անասունների գլխաքանակի 12,6%-ը կազմում էին ազնվացեղ անասունները, ոչխարների 34 %-ը կազմում էին նրբամաղ և կարակուլ ցեղերը: Ազնվացեղ խոզերի քանակը կազմում էր 34 %: Այս թվերի մեջ չի մտնում տեղական բարելավված անասունների քանակը:

Լայնորեն ծավալված է անասնաբուծական շենքերի կառուցումը: Միայն 1939—1940 թ. թ. կառուցվել է մոտ հազար դամ և այլ անասնաբուծական շենքեր:

Անասունների գլխաքանակի ավելացման և ցեղային կազմի բարելավման հետ միաժամանակ ընդարձակվում և ամրապնդողվում է կերի բաղան: 1940 թվականին կերաբույսերի տարածությունը հասել է մինչև 43 հազար հեկտարի, օր երեք ան-

գամ ավելի է 1937 թվի կերաբույսերի տարածությունը: Միաժամանակ կիրառվել և կիրառվում են ձեռնարկումներ՝ բարձրացնելու բնական խոտհարքների բերքատվությունը, սրտնցով շատ հարուստ է Սովետական Հայաստանը:

Առանձին, առաջավոր կոլտոգներ և բրիգադներ կարողացել են 4—5 անգամ ավելացնել բնական մարգագետինների բերքատվությունը և մի հեկտարից հավաքել են մինչև 50 ցենտներ խոտ (Կալինինոյի շրջան):

Ալպյան և մեծ-ալպյան մարգագետինների ու արոտավայրերի հակաթան տարածությունները, միամյա և բազմամյա կերաբույսերի ցանքատարածության ընդարձակումը, խոտացրած և հյութավի կերերի (հացահատիկային կերեր, ալյուրի և ձեթի արդյունաբերության մնացորդներ, սիլոսացում և այլն) արտադրության ընդլայնումն ապահովեցին սրտնցով և անասնաբուծության խոկական ամբողջումը և այդ բաղալի վրա՝ կաթնարդյունաբերության և մանավանդ պանրադործության հետագա զարգացումը: Ներկայումս Հայաստանի պանրադործաբաններն արտադրում են պանրի բարձրորակ տեսակներ, չվիցարական պանիր, բրինզա (ոչխարի կաթից), Դարալադյազի պանիր. կարգավորվում է նոր տեսակների, «պիկորին» և «ռոկֆոր» բարկ պանիրների արտադրությունը:

Գյուղատնտեսության մեջ ձեռք բերված հաջողությունների հետևանքով կազմակերպչորեն և տնտեսապես ամրապնդվեցին կոլտոգները և բարձրացավ կոլտոգնիկների նյութական բարեկեցությունը: ՀամԿ(Բ)Պ Կենտկոմի մայիսյան պլենումի որոշումից հետո կոլտոգներում ուժեղացավ աշխատանքային կարգապահությունը և բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը: Այժմ միայն հատ ու կենտ կարելի է հանդիպել այնպիսի կոլտոգնիկների, որոնք 100 աշխուրից պակաս ունեն, այսինքն չեն տվել սահմանված միլիոնումը, այն էլ զրեթե բացառապես հարգելի պատճառով:

Աշխատանքային բարձր կարգապահությունը, ազնվ, սոցիալիստական վերաբերմունքը դեպի կոլտոգային աշխատանքը, արտադրական ուժերի և արտադրության միջոցների ճիշտ օգտագործումն ապահովեցին կոլտոգների բարձր եկամտաբերությունը: Տարեցտարի ավելանում է տարեկան մեկ միլիոնից ա-

վելի եկամուտ ունեցող կոլխոզները կամ այլ կերպ ասած՝ մի-
լիոնատեր կոլխոզների թիվը: Եթե 1937 թվին ռեսպուբլիկա-
յում այդպիսի կոլխոզները 12 էին, ապա 1939 թ. նրանց թի-
վը 53-ի հասավ: 1940 թվի առատ բերքի շնորհիվ նորանոր
սասնյակ կոլխոզներ կանցնեն միլիոնատերերի շարքերը: Մի
շարք կոլխոզներ տարեկան ստանում են ավելի քան 2—3 միլի-
ոն ռուբլու եկամուտ: Ղամարուի շրջանի Արտաշատի կոլխոզը
1939 թվին ստացել է 3·250·000 ռուբլի, Վաղարշապատի շր-
ջանի «Անաստված» կոլխոզը — 3·303·000 ռուբլի: Բաղմաթիվ
կոլխոզնիկներ ամեն տարի աշխօրերի դիմաց ստանում են ավե-
լի քան 20 հազար ռուբլի: Այդպիսի նյութական ապահովու-
թյունը կոլխոզնիկներին հնարավորություն է տալիս բարձրաց-
նելու իրենց բարեկեցությունը: Հազարավոր կոլխոզնիկներ լայ-
նորեն ծավալել են նոր տների կառուցումը: Միայն 1938 և 1939
թ. թ. ընթացքում ավելի քան 28·400 կոլխոզնիկներ նոր տներ
են կառուցել: Կոլխոզնիկները միջանի հազար նոր տներ
են կառուցում ընթացիկ 1940 թվին: Հարյուրավոր կոլխոզներ,
հազարավոր կոլխոզնիկներ, գյուղատնտեսության բազմաթիվ
մասնազեւաններ ստախանովական աշխատանքի օրինակներ են
ցույց տալիս: Տարեցտարի ավելանում է Համամիութենական
Գյուղատնտեսական ցուցահանդեսի մասնակիցների թիվը: 1939
թվականին Համ. Գյուղատնտ. ցուցահանդեսի թեկնածուներ
հաստատվեցին 151 կոլխոզ, 7 սովխոզ, 80 կոլխոզային սպրան-
քային ֆերմաներ, գյուղատնտեսության 1517 առաջավորներ:
Իսկ 1940 թվին հաստատվել են 460 կոլխոզ, 8 սովխոզ, 6 շր-
ջան ամբողջովին վերցրած և գյուղատնտեսության 4548 առա-
ջավորներ: 1939 թվականին երկու կոլխոզ պարզևատրվեցին
Լենինի և Կարմիր դրոշի շքանշաններով, 8 կոլխոզ և սովխոզ՝
1-ին աստիճանի դիպլոմով, 35 կոլխոզ՝ 2-րդ աստիճանի դիպ-
լոմով: 181 առաջավորներ պարզևատրվեցին ոսկե և արծաթե
մեդալներով:

Կոլխոզների ամրապնդման հետ մեկտեղ Հայաստանի կոլ-
խոզնիկները վերջին երկու տարում, մանավանդ 1940 թվին,
հսկայական աշխատանք են կատարել ճանապարհների, ջրանցք-
ների, ջրամբարների կառուցման և մի շարք ուրիշ տնտեսական
ու կուլտուրական ձեռնարկումների իրադրծման ասպարիզում:


Սյապիտով Հայաստանի աշխատավորներն իրենց քսանամյա
պանծալի հորեղանին դիմավորում են նաև գյուղատնտեսության
բնադավառում ձեռք բերված մեծ հաջողություններով: Համ
Կ(բ)Պ Կենտկոմի դիրեկտիվները և ընկեր Ստալինի ցուցումները
ճշտորեն իրադրծելու շնորհիվ Հայաստանի կոլխոզային գյու-
ղացիությունը Հայաստանի Կոմպարտիայի (բոլշևիկների) դե-
կավարությամբ գյուղատնտեսության մի շարք առաջատար
ճյուղերն օրինակելի վիճակի հասցրին: Հայաստանի գյուղա-
տնտեսությունն այսուհետև բռնել է հետագա զարգացման և
բարգավաճման լայն ու հաստատուն ճանապարհ:

ԿՈՒՏՈՒՐԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այն հաջողությունները, որ հայ ժողովուրդը ձեռք է բերել տնտեսական շինարարության բնագավառում, երկրի ինդուստրացման, գյուղատնտեսության ինտենսիֆիկացիայի, կոլխոզների ամրապնդման և այլ բոլորի հիման վրա աշխատավոր մասսաների բարեկեցության բարձրացման բնագավառում, նյութական հաստատուն բազա են ստեղծել երկրում կուլտուրական շինարարությունը լայնորեն ծախարելու համար, ժողովրդական կրթության, առողջապահության, արվեստի, գիտության և զբաղմունքի իսկական զարգացման համար:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մինչև Սովետական իշխանության հաստատվելը Հայաստանը ցարիզի և սեփական կեղեքիչների քաղաքականության հետևանքով մերածված էր գրեթե համատարած անըրադիտության երկրի: 1914/15 թ. թ. բնակչության յուրաքանչյուր 100 հոգուն ընկնում էր ընդամենը 3,5 սովորող: Ամբողջ գյուղեր չունեին ոչ միայն դպրոցներ, այլև նույնիսկ մի գրադես բնակիչ: Գյուղացիները հիմա էլ հիշում են, թե ինչպես ստիպված էին լինում ընկնել գյուղից-գյուղ՝ գրադես մարդ ճարելու համար: 1918—19 թ. թ. Հայաստանում կար ընդամենը 166 դպրոց, որոնց դերակշռող մեծամասնությունը եկեղեցական-ծխական դպրոցներ էին: Նրանցում սովորում էին 18-600 աշակերտ: Մինչսովետական Հայաստանում ոչ մի բարձրագույն ուսումնա-



Ճարտ. Կոնստանդին Գրիգորյան

կան հաստատութիւնն չկար: Ժողովուրդը տառապում էր խավարի մեջ: Երկրում սովետական իշխանութիւնն հաստատուելուց հետո իսկական կուլտուրական ռեֆորմացիա սկսվեց:

Անցած քսան տարում հենց միայն դրադիտութիւնն սովորածներին թիվը հասնում է 649,5 հազար հոգու, այդ թվում գյուղերում— 540,6 հազ. հոգի: Նույն ժամանակվա ընթացքում սովորել են 429,5 հազար կիսադրազետներ, այդ թվում գյուղերում— 349,1 հազ. հոգի:

Անցած քսան տարում դպրոցների թիվը հասցրված է 1.147-ի: Այժմ Հայկական ՍՍՌ-ում չկա ոչ մի գյուղ, որտեղ դպրոց չլինի: Դպրոցներում սովորողների թիվը 1939/40 ուսումնական տարում հասավ 320.227 հոգու:

Բանակական ամսան հետ մեկտեղ վերջին տարիներս մեծ աշխատանք է կատարված միջնակարգ և թերի միջնակարգ դպրոցների տեսակարար կշիռն ավելացնելու ուղղութիւնով: 1.147 դպրոցներից 889-ը միջնակարգ և թերի միջնակարգ են: Միայն լրիվ միջնակարգ դպրոցների, այսինքն տասնամյակների թիվը 1939/40 ուսումնական տարում հասել էր 314-ի: Նրանցում սովորում էին 172.101 հոգի. 1940/41 ուսումնական տարում այդ թիվը հասել է 200.900-ի: Դպրոցներում ստեղծված են Ֆիզիկո-քիմիական և այլ կարիներներ ու լաբորատորիաներ:

Միջնակարգ դպրոցների թիվն ավելանում է թե՛ ի հաշիվ տարրական դպրոցները միջնակարգի վերածելու և թե՛ ի հաշիվ նոր շինարարութեան: Միայն 1939/40 ուսումնական տարում լրիվ միջնակարգ դպրոցների թիվը 1937/38 թ. թ. համեմատութեամբ ավելացել է 67 միավորով: Դպրոցներին տիպերի փոխհարաբերութիւններին մեջ եղած այդ նորմալ փոփոխութիւնների հետևանքով վերջին երկու-երեք տարում միջնակարգ դպրոցներում սովորողների թիվը բարձրացել է ավելի քան 75 %-ով: Անցած ժամանակաշրջանում խիստ բարձրացել է Հայկ. ՍՍՌ բնակչութեան կրթական մակարդակը: Ներկայումս յուրաքանչյուր 1000 հոգուն ընկնում է միջնակարգ կրթութիւն ունեցող 81,5 հոգի, բարձրագույն կրթութեամբ՝ 5,8 հոգի: Այս թվերն ու փաստերը ցույց են տալիս, որ Հայկ. ՍՍՌ-ում ճիշտ է իրադրո՞ւմ համԿ(բ)Պ XVIII համագումարի դիրեկտիվը ստալինյան երրորդ հնգամյակում քաղաքներում

ընդհանուր միջնակարգ կրթութիւնը և գյուղում յոթնամյա կրթութիւնը կիրառելու մասին: Դպրոցական ցանցի անընդհատ աճի և ընդարձակման հետ միասին աճում է ուսուցիչների թե՛ քանակական և թե՛ որակական կազմը:

Տարրական, թերի միջնակարգ և միջնակարգ դպրոցների ուսուցիչներին թիվը 1939/40 թվականին հասել է 10.822 հոգու: Այս թիվը համարյա 10 անգամ ավելի է 1914/15 թ. թ. եղած ուսուցիչներին թվից: 1914/15 թվին ուսուցիչներին թիվը բոլոր տիպի դպրոցներում կազմում էր 1146 հոգի: Ուսուցիչներին թիվը առանձնապես ուժեղ տեմպերով աճեց ստալինյան II և III վրն հնգամյակների ընթացքում: Եթե 1928/29 թ. թ. Հայկական ՍՍՌ-ում կար ընդամենը 2779 ուսուցիչ, 1932/33 թ. թ. 4482, ապա 1937/38 թ. ուսուցիչներին թիվը հասավ մինչև 8021-ի, իսկ 1939/40 թ.— մինչև 10.822-ի:

Այդ ժամանակվա ընթացքում զգալիորեն բարձրացել է նաև ուսուցիչներին կրթական ցենզը: 1939 թվին հունվարի 1-ի տվյալներով ուսուցիչներին կրթութեան մակարդակը ներկայացնում է հետևյալ պատկերը.

Ուսուցիչներին կատեգորիան	Կրթութեան մակարդակը ընդհանուր թվի 0/10 0/10-ով				
	Բարձրագույն	Այդ թվում մանկավարժական	Միջնակարգ	Այդ թվում մանկավարժական	Լրիվ միջնակարգ կրթութեան չունեցողները
Տարրական դպրոցների և թերի միջնակարգ դպ. 1-4 դաս. և միջնակ. դպրոցներին ուսուցիչներ	2,1	1,5	90,0	64,6	7,9
Թերի միջնակարգ և միջնակարգ դպրոցներին 5-7 դաս. ուսուցիչներ	12,1	9,7	86,7	64,4	1,2
Միջնակարգ դպրոցներին 8-10 դասարանների ուսուցիչներ	35,9	30,3	64,1	50,4	—

Այս թվերը հանդիսանում են մեր ուսուցչութան կրթա-
կան մակարդակի բարձրացման փայլուն ապացույցները:

Ներկայումս ուսուցիչները ամբողջ կազմի 23 %-ը սենի
բարձրագույն և թերի բարձրագույն կրթութուն, 72,7 %-ը—
միջնակարգ կրթութուն և միայն 4,3 %-ը— թերի միջնակարգ
կրթութուն:

Վերջին տարիներս ժողովրդական կրթության ֆրոնտում
ածել են բազմաթիվ առաջավորներ, ժողովրդական ուսուցիչների
նշանավոր կադրեր, որոնք աշակերտների կոմունիստական
դաստիարակության հիանալի օրինակներ են ցույց տալիս: Կո-
մունիստական պարտիան և Սովետական կառավարութունն ըստ
արժանիության ղեկավարել են զուգահեռ ուսուցիչների նվիրված
աշխատանքը: Սովետական Հայաստանի 52 առաջավոր զուգա-
կան ուսուցիչներ պարզևատրվեցին Սովետական Միության
չքանչաններով և մեդալներով: Նրանց թվումն են մանկավար-
ժական աշխատանքի իսկական վարպետներ՝ Սիմակ Սահակյա-
նը, Մարիամ Գրիգորյանը, Հայկանուշ Պողոսյանը, Կլավդիա
Բորբովան, որոնք ստացել են բարձրագույն պարգևը— Լենինի
չքանչանը:

Հայաստանի աշխատավորները բարձր են գնահատում ու-
սուցիչների աշխատանքը և հսկայական փառահովածություն են տա-
ծում դեպի նրանց: Աշխատավորների ղեկավարողների գերա-
զույն և տեղական սովետների ընտրությունների ժամանակ 13
ուսուցիչներ ընտրվեցին ՍՍՌՄ և Հայկական ՍՍՌ Գերագույն
Սովետների ղեկավարողներ: 402 ուսուցիչներ ընտրվեցին աշխա-
տավորների ղեկավարողների տեղական սովետներում:

Դպրոցական գործի այդ արժատական վերահսուցումը և
ուսուցիչների կազմի մեծապես բարելավումն ապահովեցին մաս-
նապական դպրոցների ուսուցման որակի խիստ բարձրացումը:
Տարեցտարի աճում է ուսման գերազանցիկների տոկոսը և լիկ-
վիդացիայի է նեթարկվում երկրորդ տարեցիությունը: Հատկա-
պես խոշոր հաջողություններ կան Հոկտեմբերի լեզվին տիրա-
պետելու— մեր երիտասարդությանը ուսաց լեզուն սովորեցնե-
լու ասպարիզում: Մինչև վերջին տարիներս ուսաց լեզվի ու-
սումնասիրությունն ամենանեղ տեղն էր մեր դպրոցներում: Ոչ
ուսական դպրոցներում ուսերեն լեզվի դասավանդումը բա-

րելավելու վերաբերյալ պարտիայի և կառավարության 1938
թվականի որոշումից հետո Հայկ. ՍՍՌ-ում մեծ աշխատանք է
կատարվել:

Ռուսաց լեզվի դասատուների թիվը 470-ից (1937 թ.)
1939/40 թ. թ. հասավ 1295-ի, այսինքն ավելացավ համարյա
300 %-ով: Այդ ժամանակվա ընթացքում հրատարակվեցին
մեծ քանակությամբ ուսերեն դասագրքեր և դիդակտիկ նյու-
թեր: Այս և մի շարք ուրիշ ձեռնարկումներ Հայկ. ՍՍՌ զբա-
րոցներում ապահովեցին ուսաց լեզվի դասավանդման արժա-
տական բարելավումը: Տասնյակ հազարավոր սովորողներ հա-
ջողությամբ և մեծ սիրով տիրապետում են մեծ Հոկտեմբերի
լեզվին:

Անցած ժամանակում մեծ հաջողություններ են ձեռք բեր-
վել բարձրագույն կրթության զարգացման ասպարիզում: Հա-
յաստանում բարձրագույն դպրոցները և բարձրագույն կրթու-
թյունը հանդիսանում են Սովետական իշխանության զավակը:
Մինչև Սովետական իշխանության հաստատվելը Հայաստանում
ոչ մի բարձրագույն դպրոց չկար: Սովետական իշխանության օ-
րոք Հայաստանում կազմակերպված է 10 բարձրագույն ուսում-
նական հաստատություն, որոնցից երկուսը— 1938 թվից հետո:
Բացի ստացիոնարներից, Հայաստանում կա 6 հեռակա ինստի-
տուտ: Այդ դարբնոցներում բարձրագույն կվալիֆիկացիայի և
տարբեր մասնագիտությունների կադրեր են պատրաստվում:
Նրեանի այնպիսի ԲՈՒՀ-եր, ինչպես Պետական համալսարանը,
Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը, Համա-
միութենական Զոո-վետ ինստիտուտը, Բժշկական ինստիտուտը,
Գյուղատնտեսական ինստիտուտը, Հայկական և Ռուսական քա-
ռամյա մանկավարժական ինստիտուտները, Պետական Կոնսերվա-
տորիան—ածել ու դարձել են սովոր, բարձրագույն ուսումնական
հաստատություններ, հիանալի սարքավորված կաֆեդրաներով,
կարիներաներով և լաբորատորիաներով: Այդ ԲՈՒՀ-երը գրա-
վում են ոչ միայն Սովետական Հայաստանի երիտասարդությա-
նը, այլ և Սովետական Միության գնազան հանրապետություն-
ների և մարզերի բազմաթիվ քաղաքացիներին: 1939/40 ուսում-
նական տարում Հայաստանի ԲՈՒՀ-երում սովորում էր 7426
հոգի: Բացի դրանից, հեռակա ինստիտուտներում սովորում էր

5405 հոգի: Սովետական իշխանության տարիներում աճել է բարձրագույն դպրոցների պրոֆեսորների և դասատուների մեծ կոլեկտիվ: Մի շարք ԲՈՒՀ-երում կա ասպիրանտուրա: Ասպիրանտների թիվը հասնում է ավելի քան 150-ի: Վերջին երկու-երեք տարում մոտ 150 գիտական աշխատողներ և բարձրագույն դպրոցների դասատուներ դիտարկեցին պաշտպանեցին դիտաթյունների թեկնածուի գիտական աստիճանի և ավելի քան 15 հոգի՝ գիտաթյունների դոկտորի գիտական աստիճանի համար:

Բացի բարձրագույն դպրոցներից, Հայաստանում կառուցվել է 68 տեխնիկում, 2 բանֆակ և 8 ֆարգործուս: 1939/40 ուսումնական տարում այդ դպրոցական հաստատություններում սովորում էր 12.217 աշակերտ: ՍՍՌ Միության Գերագույն Սովետի նախագահության 1940 թվի հոկտեմբերի 2-ի «ՍՍՌ պետական աշխատանքային ուղեւորների մասին» որոշումից հետո Հայաստանում կազմակերպված է 2 արհեստավորական դպրոց և ֆարրիկա-դործարանային ուսուցման 3 դպրոց: Այդ դպրոցներում ընդգրկվելու է 1000 աշակերտ:

20 տարվա ընթացքում Հայկ. ՍՍՌ բարձրագույն ուսումնական հաստատությունները տվել են 7.272 մասնագետներ, իսկ տեխնիկումները և այլ մասնագիտական միջնակարգ դպրոցները՝ 13000 մասնագետներ: Բարձր և միջին կլավիֆիկացիայի կադրերի պատրաստությունը ըստ մասնագիտությունների՝ 20 տարում ունի հետևյալ պատկերը.

Բուն-երի շրջանավարտներ		Տեխնիկումների շրջանավարտներ	
Մասնագիտության անունը	Ավարտողների թիվը	Մասնագիտության անունը	Ավարտողների թիվը
Մանկավարժ	2381	Լուսավորության ֆորմատի աշխատողներ	6074
Բժիշկ	860	Գյուղատնտես. աշխատողներ	2680
Ինժեներ	881	Արդյունաբերության, կապի, շինարարության և տրանսպորտի աշխատողներ	2181
Ազդեցություն	840	Առողջապահության աշխատողներ	1108
Մասնաբույժ և դոստիսնիկ	1036	Արվեստի աշխատողներ	352
Նկոստիատ	514	Ժողանուպահավորման աշխատ. Ֆիզկուլտուրայի աշխատողներ	832
Մ.վեստի աշխատող	55		73
Այլ մասնագիտություններ	705		
Ընդամենը	7.272	Ընդամենը	13.300
Բացի դրանից, 1940 թ. սպասվող շրջանավարտներ	872	Բացի դրանից, 1940 թ. սպասվող շրջանավարտներ	2140

Բարձրագույն դպրոցները, բացի կադրեր պատրաստելուց, զբաղվում են կառուցողական մեծ աշխատանք են կատարում հայ ժողովրդի պատմությունը, դրականության պատմությունն ուսումնասիրելու, երկրի բնական ռեսուրսները հետազոտելու, մարքսիզմ-լենինիզմի թեորիան ուսումնասիրելու և այլ ասպարեզում:

ՀամԿ(բ)Գ Կենտկոմի 1938 թ. նոյեմբերի 14-ի հուշակազմ որոշումից հետո բոլոր ԲՈՒՀ-երում կազմակերպվեցին մարքսիզմ-լենինիզմի ամբիոններ, որոնք կարճ ժամանակվա ընթացքում մեծ աշխատանք կատարեցին մարքսիզմ-լենինիզմի մեծ թեորիան և բոլշևիզմի պանծալի պատմությունն ուսումնասիրելու բնագավառում: Այդ ժամանակվա ընթացքում մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդան բարձրացվեց նոր, բարձրագույն աստիճանի:

Պարտիան և կառավարությունն այս 20 տարվա ընթացքում հսկայական միջոցներ ներդրին ժողովրդական կրթության և լուսավորության դործում: Անցած 20 տարում լուսավորության դժով դպրոցաշինարարության մեջ ներդրված է 130,9 միլիոն ուրբլի: Կառուցված է 957 դպրոց, այդ թվում 888 դպրոց գյուղական վայրերում: Միայն 1937 թ. մինչև 1940 թ. կառուցված է 271 նոր դպրոց, որից 62 դպրոց 1940 թվին: Այդ դպրոցների շինարարության համար ներդրված է 55 միլիոն ուրբլի: ԲՈՒՀ-երի 8 ուսումնական կորպուսներից 4-ը կառուցված է 1938 և 39 թվականներին:

Այստեղ տեղին է հիշատակել ժողովրդի թշնամիների վնասարարական դործունեությունը դպրոցական շինարարության ստղարելում: Այդ նպատակի համար բաց թողնվող միջոցները ըստ իրենց նպատակին էին օգտագործվում, դպրոցական շենքերի կառուցումը մի շարք տարիներ էր տևում, մեռցվում էին պետական հսկայական միջոցները: Կան շատ անսխեմալի վատտեր, երբ գյուղական վայրերում դպրոցական շենքերը կառուցվում էին 6—7 և ավելի տարիների ընթացքում: 1938 թվից վճռական միջոցներ ձեռք առնվեցին այսպես կոչված՝ փոխանցիկ շինարարությունը լիկվիդացիայի ենթարկելու համար: Եվ արդեն 1939 թվին՝ կառուցվող 103 դպրոցներից 94-ը լիովին ավարտվեցին և շահագործման հանձնվեցին: Այսպիսով դպրոցական դործի

առաջընթացում այդ կործանարար երևույթը— փոխանցիկ շինարարութունն ամբողջովին լիկվիդացիայի ենթարկվեց: Դպրոցական շենքերի հաջող շինարարութունը հնարավորութուն տվեց բոլորովին վերացնել երեք հերթի պարագմունքը բոլոր դպրոցներում:

Հայկական ՍՍՌ-ում լայն զարգացման հասավ նաև նախադպրոցական դաստիարակութունը, մանկապարտեզների և մանկահարստարակների շինարարութունը: Նախադպրոցական հիմնարկների ցանցը Սովետական իշխանութան զավակն է: 1919—20 թ. թ., այսինքն մինչև Սովետական իշխանութունը Հայաստանում կար ընդամենը 2 մասնավոր մանկապարտեզ՝ 152 երեխաներով, իսկ 1940 թ. սկզբում մանկապարտեզների թիվը հասել է 340-ի, 18408 երեխաներով, այդ թվում— 158 կոլխոզային մանկապարտեզ, 5701 երեխաներով: Նախադպրոցական հիմնարկների պահպանման համար 1940 թվին միայն Լուսփող-կոմատի բյուջեյով բաց է թողնված 8.449.000 ուրբլի:

Վերջին տարիներում կարգավորված է դասազրքերի և ուսումնական ձեռնարկների հրատարակութունը: Հայաստանի Պետհրատն ամեն տարի հարյուր հազարավոր դասազրքեր է հրատարակում աշակերտների համար: Այս տարի հայերեն թարգմանությամբ հրատարակված են ավելի քան 20 անուն դասազրքեր ԲՈՒՀ-երի համար: Բացի դասազրքերից, ուսուցիչների և աշակերտների համար հրատարակվում են մի շարք թերթեր և ամսագրեր, այդ թվում «Սովետական դպրոց» լրատվիչը, «Սովետական մանկավարժ» ամսագիրը և այլն:

Այսպիսիք են փաստերն ու թվերը: Դրանք հանդիսանում են բոլշևիկների մեծ պարտիայի լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության հաղթանակի փայլուն ու պերճախոս ապացույցը: Հայաստանի աշխատավորները ժողովրդական կրթության ասպարիզում այդ հաջողութունները ձեռք բերին շնորհիվ մեր սովետական պետության հսկայական օգնության, շնորհիվ հարազատ Ստալինի ամենօրյա հայրական հոգատարության:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Իկանոմիկայի զարգացումը մի կողմից և մյուս կողմից քարձք կվալիֆիկացիայի կազրերի պատրաստումը բարենպաստ հող ստեղծեցին երկրում գիտության բուռն զարգացման համար:

Հայաստանը գիտական մտքի հին երկիր է: Այդ փայլուն կերպով ապացուցում է գիտական այն հարուստ ժառանգությունը, որը պահպանվել է դարերի ընթացքում և հասել մինչև մեր օրերը: Հռչակավոր մատենադարանում (հին ձեռագրերի պետական ձեռագրատանը) հավաքված են ավելի քան տասներեք հազար անուն հին ձեռագրեր՝ թե՛ հայերեն և թե՛ այլ լեզուներով: Մոտավորապես նույնքան հին-հայկական ձեռագրեր գտնվում են աշխարհի զանազան երկրներում:

Մատենադարանը գիտության իսկական զանձարան է: Այստեղ կարելի է աշխատություններ և հետազոտություններ զբաղնել գիտության տարբեր բնագավառների վերաբերյալ, մաթեմատիկայից և աստղաբաշխությունից սկսած մինչև բժշկությունն ու պատմությունը: Այդ ամենահարուստ հավաքածույում են գտնվում հայկական ականավոր գիտնականների՝ Սերեոսի, Մոլիսես Կաղանկատվացու, Արիստակես Լաստիվերացու, Անանիա Շիրակացու, Եղնիկ Կոխարացու, Ամիր Դովլաթի, Գրիգոր Նարեկացու, Մխիթար Գոչի և շատ ուրիշների աշխատությունները:

Երկրում, նրա թանգարաններում նյութական կուլտուրայի

ահադին քանակութեամբ հուշարձանները առկայութեանը,— խաղողական թաղավորներ Դարեհի և Ռուսի սեպաղերից սկսած մինչև արվեստի ու ճարտարապետութեան սքանչելի հուշարձանները,— Հայաստանի հարուստ Ֆլորան ու Փառնան, նրա ընդերքի անսպառ սղաշարները— այս բոլորը դրախել է և դրախում է ամբողջ զիտական աշխարհի ուշադրութեանը:


Հայ ժողովրդի զիտական և հասարակական մտքի լավագույն ներկայացուցիչները դարերով երազում էին այն մասին, որ սլաշարներ ստեղծվեն երկրում զիտութեանը զարգացնելու համար, որպեսզի հայ ժողովրդի հողերը և նյութական կուլտուրայի հարուստ ժառանգութեանն ուսումնասիրվի, ի հայտ բերվի և դառնա ամբողջ առաջավոր մարդկութեան սեփականութեան: Բայց այդ բաղձանքը դարերի ընթացքում մնում էր իբր ուտոպիա:

Հայաստանի լավագույն զավակները դարավոր իղձն իրականացավ այն օրից հետո, երբ Հայաստանը դարձավ Սովետական երկիր:

Վերջապես տաղանդավոր ժողովրդի ստեղծագործական հանձարն ազատութեան ստացավ:

Սովետական իշխանութեան տարիներին Հայաստանում ստեղծված են մի ամբողջ շարք զիտահետադուտական ինստիտուտներ և հիմնարկութեաններ, որոնք աշխատում են զիտութեան տարբեր բնազավառներում: Ներկայումս Հայկ. ՍՍՌ-ում կան 43 այդպիսի հիմնարկութեաններ, ուր աշխատում են մոտ 800 զիտական աշխատողներ:

Վերջին տարիներս Հայաստանի զիտական մտքի կենտրոն է դարձել ՍՍՌՄ Գիտութեանների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալը, որի կազմում կան 6 ինստիտուտներ— Գեոլոգիական, Գիմիական, Բիոլոգիական, Բուսաբանական, Պատմական, Գրականութեան ու լեզվի, և 6 ինքնուրույն սեկտորներ ու բաժիններ— Սևանի Հիդրոէլեկտրոգիական կայանը, Պետաստղադիտարանը, Սեյմիկ կայանը, Հողագիտութեան սեկտորը, Նրևանի Բուսաբանական այգին և նրա լեռնային բաժանմունքը կիրավարանում: Հայաստանի ճյուղային զիտահետադուտական հիմնարկութեանները մշակում են այն հարցերը, որոնք կապված են ժողովրդական տնտեսութեան կոնկրետ ճյուղերի, ժողովրդական



Երևանի մեծ քաղաքի Սովետական կոմունիստական համալսարանի շենքերը

կրթութեան, առողջապահութեան և այլ բնագաւառներէ զարգացման հետ: Այդ հիմնարկութիւններէ թվին են պատկանում այգեգործական— պտղագործական ինստիտուտը, անասնաբուժական դիտա—հետազոտական ինստիտուտը, անասնաբուծութեան ռեսպուբլիկական փորձնական կայանը, դաշտավարական զոնալ կայանը, Տրոպիքական ինստիտուտը և այլն և այլն:

1938 թվի մայիսին բարձրագույն դպրոցի աշխատողներէ ընդունելութեան ժամանակ սովետական առաջավոր դիտութեան մասին ընկեր Ստալինի արտասանած պատմական ճառից հետո արմատապես վերակառուցվեց այդ դիտական կազմակերպութիւններէ գործունեութիւնը: Վերջին տարիներա դիտութեան զարգացման և արտադրութեան մեջ դիտական նվաճումներէ արմատավորման բնագաւառում մեծ աշխատանք է կատարված Հայաստանում: Արժեքավոր աշխատանքներ են կատարվել Հայաստանի վայրի Ֆլորայում օգտակար բույսեր հայտաբերելու ուղղութեամբ: Այդ աշխատանքներէ հետևանքով հայտաբերված և ուսումնասիրված են այնչի քան 25 տեսակ եթերատու վայրի բույսեր, որոնք մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում նարֆլյումերիայի արդյունաբերութեան համար: Հայտաբերված են նաև խեժատու աստրագալներ, բերդամտտի ծոթոր, որոնք տալիս են արժեքավոր նյութեր— խեժ և բերդամտտի յուղ, որոնց կարելիքը չափազանց՝ մեծ է մեր արդյունաբերութեան համար:

Անասնաբուժական դիտա—հետազոտական ինստիտուտը մշակել է անասունների հիվանդութիւններէ դեմ կռիւնու մի շարք էֆֆեկտիվ միջոցներ, օրինակ, խոշոր և զվարակութեամբ անասունների ֆառցիսիւզ հիվանդութեան բուժումը գեկսախլորետանի միջոցով:

Անասնաբուծական փորձնական կայանը կարողացել է 10 անգամ բարձրացնել մեղվաբուծութեան բերքատուութիւնը: Գիտական աշխատակից Ա. Կոթոյանի մշակած մեթոդի գործադրութիւնը մեղուների մեկ ընտանիքի մեթերատուութիւնը բարձրացնում է՝ մեղրի նկատմամբ 10 անգամ (30 կգ-ից մինչև 300 կգ), մեղրամտտի նկատմամբ 22 անգամ (0,5 կգ-ից մինչև 11 կգ): Նույն՝ դիտական աշխատակիցը տվել է մեղրի բերքատու-



Խ. Արուսեանի արձանը Երևանում

թյան համաշխարհային ունեցողը, — մեղուներին մեկ ընտանիքի օր
նա ստացել է 403, կգ մեղր և 14 կգ մեղրամոմ:

Այս նվաճումները ցուցադրված են Համ. դյուր. ցուցա-
հանդեսում:

Հայաստանի պայմաններում բամբակենու ծերատման ազ-
րոտեխնիկական մեթոդի դործադրութունը, որ առաջարկել է Բ
աղադեմիկ՝ Լիսենկոն, — արդեն արտադրական լայն մասշտաբ-
ներով արմատացած է բամբակադործական կոլխոզներում և
բամբակի բերքատվության բարձրացման ուղղությամբ մեծ է ֆ-
ֆեկտ է տալիս:

Առժողկոմատի Տրոպիքական ինստիտուտը մշակում է մա-
լարիայի դեմ պայքարելու ակտուալ հարցերը: Արյան ներարկ-
ման ինստիտուտը լավ հետևանքներ է ստացել արյան ներարկ-
ման դործում: Գիտութունների Ակադեմիայի Հայկական ֆի-
լիալի՝ դեռյուզիական ինստիտուտն ավարտել է մեծ և արժեքա-
վոր մի աշխատութուն, որը վերաբերում է Սևանա լճի ջուրը
և այլ ջրերը ոռոգման և էներգետիկայի նպատակներով կոմպ-
լեկսային ձևով օգտագործելու՝ գլխավոր պլանի սխեմայի մշակ-
մանը:

Դաշտավարության դիտա-հետազոտական կայանը հաջողու-
թյամբ մշակել է այն հարցը, թե ինչպես կարելի է ցիանամիդ-
կալցիումն օգտագործել իբրև քիմիական պարարտանյութ: Այդ
հետազոտութունների հետևանքները հիմք դարձան Հայաստա-
նում ցիանամիդի դործարան կառուցելու համար: Յիանամիդն
արդեն կոլխոզային դաշտերում լայն մասշտաբներով դործադր-
վում է իբրև պարարտանյութ:

Նույն կայանը մշակել և արտադրությանն է հանձնել դյու-
րատնտեսության վնասատուների դեմ պայքարելու նոր, քիմիա-
կան մեթոդներ, — մասնավորապես կարադրինի, իտալական մո-
րեխի, խաղողի վազի միլդիում հիվանդության դեմ և այլն:

Ուսումնասիրված և արտադրության մեջ արմատավորված
է աշնանացան ցորենի ցանքը Հայաստանի լեռնային պայմաննե-
րում:

Եինանյութերի դիտա-հետազոտական ինստիտուտը նոր շի-
նանյութեր մշակելու համար արժեքավոր աշխատանքներ է կա-
տարել տեղական հումքի ուսումնասիրության հիման վրա:

Ինստիտուտը հաջողությամբ մշակել է կրաքարային չլամբ
և քարածուխի մոխիրը (կիրովի անվան ՍԿ-ՍՊՎԱԲԵՆ կոմբինա-
տի արտադրանքի մնացորդները) օգտագործելու հարցը, պատի
բլոկներ արտադրելու համար: Ինստիտուտի աշխատանքի ար-
դյունքներն արդեն օգտագործվում են արտադրության մեջ:
Ներկայումս Երևանի Պեմզարեղի դործաբանն իրացնում է ին-
ստիտուտի առաջարկը:

Արմֆանի բուսաբանական ինստիտուտը և բուսաբանական
այգին վերջին տարիներս մեծ և արժեքավոր աշխատանք են
կատարել Հայկ. ՍՍՌ բուսական ֆոնդերի ուսումնասիրության
և ինվենտարիզացիայի, ծառերի նոր տեսակների ներածման,
անտառ-այգիներ ստեղծելու և այլ՝ ստպարեզներում: Ինստի-
տուտն արդեն կազմել է «Հայկ. ՍՍՌ Փլորան» մեծածավալ
աշխատութունը, որը դիտական մեծ արժեք է ներկայացնում:

Գիտա-հետազոտական ինստիտուտները՝ և բարձրագույն ու-
սումնական հաստատութունների ամբիոնները վերջին տարինե-
րս մեծ աշխատանք են ծավալել ժողովրդական հարուստ
ֆոլկլորի, հայ ժողովրդի պատմության և հայ գրողների գրա-
կան ժառանգության ուսումնասիրման բնագավառում: Ասում
ենք վերջին տարիներս, որովհետև բուրժուական նացիոնալիստ-
ները, որոնք սողոսկել էին այդ հիմնարկութունները, շատ
տարիներ ընթացքում դիտավորյալ կերպով միժեցնում էին
աշխատանքներն այդ կարևորագույն բնագավառում: Այլասեր-
ված այդ մարդիկ աղավաղում էին փաստերը և նողկալիաբար
զրպարտում հայ պատմագրության և կլասիկ գրականության
լավագույն ներկայացուցիչներին: Նրանք Ֆայլսիֆիկացիայի է-
ին ենթարկվում հայ ժողովրդի պատմութունը և կատարյալ
խառնաշփոթութուն էին ստեղծում: Նրանք հայ հասարակա-
կան մտքի և գրականության այնպիսի պանծալի ներկայացու-
ցիչներին՝ ինչպես Խաչատուր Աբովյանը, Միքայել Նալբանդյա-
նը, Հովհաննես Թումանյանը, գրական ժառանգության դնահատ-
ման խնդրում պարզապես ունակցիոն, բուրժուա-նացիոնալիս-
տական կոնցեպցիաներ էին խցկում: Երիտասարդութունն ուղ-
ղակի զրկված էր իր ժողովրդի իսկական պատմութունը, հայ
հարուստ գրականության պատմութունն ուսումնասիրելու հը-

նարավորութիւնից: Գասազրբեր և ձեռնարկներ չէին հրատարակվում:

Վնասարարների այդ շայկայի մերկացումից և գիտական հիմնարկութիւններից նրանց վտարելուց հետո միայն ծավալվեց իսկական հետազոտական և գիտական աշխատանք: 1938 թվին ՍՍՍՐ Գիտութիւնների Ակադեմիայի Հայկական ֆիլիալին կից կազմակերպվեցին պատմութեան և գրականութեան երկու ինքնուրույն ինստիտուտներ, կազմակերպվեց հատուկ ասպիրանտուրա, սկսվեց գիտական մտքի եռուղիք: Մեծ թվով երիտասարդ գիտական աշխատողներ և ավագ սերնդին պատկանող գիտնականներ ձեռնամուխ եղան քրտնաջան, բայց շնորհակալ աշխատանքի: Եվ կարճ ժամանակիւ ընթացքում՝ աշխատանքի այդ պատասխանատու բնազավառը ճեղքվածքից դուրս բերվեց ու զարգացման հաստատուն հունի մեջ դրվեց: Անցած վերջին երեք տարիները կուլտուրայի, գրականութեան և արվեստի բնազավառում չտեսնված վերելքի տարիներ էին: Սովետական Հայաստանի ինտելիգենցիան, ողևորված ընկեր Ստալինի, նրա հաջատարի՝ զինակից ընկեր Միխոյանի հայրական հողատարութեամբ՝ կուլտուրայի բնազավառում վնասարարութեան հետեանքների ամենատարազ լիկվիդացիայի, հայ ժողովրդի կուլտուրայի և արվեստի զարգացման մասին՝ Հայաստանի Կոմպարտիայի (բոլշևիկների) ամենօրյա ղեկավարութեամբ ազնիվ, նվիրված գիտական և ստեղծագործական աշխատանքի օբինակներ ցույց տվեց:

1939 թվին տոնվեց հայ ժողովրդի հերոսական էպոս «Սասունցի Դավթի» հազարամյա հորելյանը: Հորելյանի կատարմանը նախորդեց նախապատրաստական մեծ աշխատանք: Այդ ժամանակիւ ընթացքում ուսումնասիրվել էին էպոսի ավելի քան 50 վարիանտները, որոնց հիման վրա կազմվեց էպոսի միասնական տեքստը: Հրատարակվեցին մի շարք հետազոտութիւններ, որոնք նվիրված էին թե՛ էպոսին և թե՛ այն պատմական էպոսային, երբ հյուսվել է հայ ժողովրդի այդ նշանավոր ստեղծագործութիւնը: Առաջին անգամ հայկական մեծ էպոսն իսկական գիտական մարտխտական լուսաբանութիւն ստացավ:

Եվ բնական է, որ «Սասունցի Դավթի» հազարամյակի տոնակատարութիւնը զարձալ հայ ժողովրդի կուլտուրայի մեծ

տոն, Սովետական Միութեան բոլոր ժողովուրդների կուլտուրայի տոն: Այդ ժամանակիւ ընթացքում հրատարակվեցին ֆոլկլորի, գրականութեան և պատմութեան վերաբերյալ բազմաթիւ արժեքավոր աշխատութիւններ, որոնցից հատկապես պետք է հիշատակել «Սասունցի Դավթի» էպոսը, «Հայկական խորհրդային ֆոլկլորը», «Ստալինը հայ ժողովրդի ստեղծագործութեան մեջ», «Ստալինը հայ ժողովրդի պոեզիայում», ակադեմիկ Մանուկյանի «Տիգրան II-ը (մեծ) և Հոռմը», պրոֆեսոր, դոկտոր Մանուկ Աբեղյանի «Գուսանական ժողովրդական տաղերը», պրոֆեսոր Ղափանցյանի «Ուրարտուի պատմութիւնը», «Սեբեոսի պատմութիւնը», Աբրահամ Երեանցու «Պատմութիւնը», Ջաքարիա Ագուլեցու «Օրագիրը», Եզնիկ Կոնյալցու փիլիսոփայական քննադատութիւնը, պրոֆեսոր Խ. Սամվելյանի «Հին հայ իրավունքի պատմութիւնը» և շատ ուրիշ աշխատութիւններ: Մեծ երևույթ պետք է համարել 9—10 դասարանների համար հայ ժողովրդի պատմութեան և հայ գրականութեան պատմութեան դասագրքեր կազմելը: Այդ դասագրքերն ընդգրկում են հայ ժողովրդի պատմութիւնը և հայ գրականութեան պատմութիւնը հնագոյցյան ժամանակներից մինչև մեր օրերը:

Նշանակալից աշխատանք է կատարված հայ գրականութեան կլասիկների՝ Խաչատուր Աբովյանի, Միքայել Նայրանդյանի, Հովհաննէս Հովհաննիսյանի, Հովհաննէս Թումանյանի, Պոռչյանի, Պատկանյանի, Բաֆֆու, Մուրացանի, Տերյանի, Հակոբյանի, Ալ. Իսահակյանի և ուրիշների գրական ժառանգութեան, երկերի ուսումնասիրութեան և հրատարակման առկարիցում: Հրատարակված են արժեքավոր ժողովածուներ բացառուց ունեւոյուցիտներ Սուրեն Սպանդարյանի մասին:

Գիտական բազմաթիւ արժեքավոր աշխատութիւններ են հրատարակված նաև գիտութեան մյուս բնազավառների վերաբերյալ:

Չգալիորեն աշխուժացել է Հայաստանի գրական հասարակայնութեան գործունեութիւնը: Հայաստանի Սովետական Գրողների Միութիւնը զարձակ է գրական-ստեղծագործական սովորակազմակերպութիւն: Աճել են գրողների նոր, երիտասարդ կազմեր, որոնց մեջ քիչ չեն տաղանդավոր, ընդունակ բանաստեղծ-

ները: Երիտասարդ բանաստեղծներ Հովհաննես Շիրազի, Գուրգեն Բորյանի, Սարմենի, Միլվա Կապուտիկյանի, Աղավնու, Մարո Մարգարյանի և ուրիշների երկերը վայելում են ընթերցող հասարակության սերը: Դրանց մեծ մասը գետեղված է «Հայ պոեզիայի անտալոգիայում», որ այս տարի հրատարակվել է Մոսկվայում: Վերջին տարիներս մի շարք արժեքավոր երկեր են ավել սովետական գրողների ավագ սերունդները— Դ. Դեմիրճյանը, Ստ. Զորյանը, Արազին, Նաիրի Զարյանը, Սիրասը և այլն:

Հայաստանում լայն զարգացման է հասել պոլիգրաֆիական և հրատարակչական գործը: Ներկայումս Հայաստանում կան ավելի քան 10 հրատարակչական կազմակերպություններ: Ներանց մեջ առաջատար տեղ են բռնում Պետհրատը, Գաղհրատը Պետ. համալսարանի և Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի հրատարակչությունը:

Անցած 20 տարում հրատարակվող լրագրերի քանակն ավելացել է ավելի քան 10 անգամ: Ներկայումս Հայաստանում հրատարակվում է 62 անուն լրագիր, այդ թվում 48 անուն— հայերեն լեզվով: Ռեսպուբլիկայի՝ առանց բացառություն թուր չըջաններում հրատարակվում են չըջանային ամենօրյա, երկօրյա և եռօրյա թերթեր: Հրատարակվող բոլոր թերթերի մի օրյա տիրաժը կազմում է 248 հազար օրինակ: Բացի դրանից, հրատարակվում են 16 անուն ամսագրեր: 1939 թվին հրատարակվել է 650 անուն գիրք, 4.705.000 օրինակ ընդհանուր տիրաժով: Միայն Պետհրատը հրատարակել է 387 անուն, երեք և կես միլիոն օրինակ ընդհանուր տիրաժով, այդ թվում ռուսական և համաշխարհային գրականության կլասիկների բազմաթիվ երկեր: Իսկ 1920 թվականին հրատարակվում էր միայն 2 ամսագիր և 24 անուն գիրք: Հիրավի, որքա՞ն մեծ են Սովետական Հայաստանի նվաճումներն անցած 20 տարում, գրականության, պարբերական հրատարակչությունների բնագավառում: Ե-ի փոխարեն 62 լրագիր, 2-ի փոխարեն 16 ամսագիր, 24 անունի փոխարեն 650 անուն գիրք:

Ինչպիսի՞ պերճախոս կոնսերտատ:

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴՆԻ ԱՐՎԵՍՏԸ

Հայ Ժողովրդի՝ դարերով կուտակված ստեղծագործական պոտենցիան սովետական պայմաններում սկսեց հորդել առաջադրյալի նման: Անցներով դարգացման երկար և բարդ ուղի, ենթարկվելով դրսի տարրեր ազդեցություններին՝ հելլենիզմից, իրանիզմից սկսած մինչև թուրք-սելջուկական և մոնղոլական բարբարոսությունը,— հայ Ժողովրդի արվեստն, այնուամենայնիվ, պահպանել է իր ազդային ոգին և կոլորիտը:

Այդ, իհարկե, չի նշանակում, թե նա զերծ է մնացել ազդեցություններից, թե նա իր վրա չունի դրանց դրոշմը: Անցյալում հետադուրսներն ու պատմաբաններն այդ հարցում անց էին կացնում մեր կարծիքով երկու սխալ կոնցեպցիաներ, թեպետ դրանք միմյանց հակադիր էին: Ոմանք հայ արվեստը զեռտում էին որպես մի կողմից Արևմուտքի (հելլենիստական, բյուզանդական արվեստ), մյուս կողմից Արևելքի (իրանական և արաբական արվեստ) ամեն տեսակ ազդեցությունների մեխանիկական գումար, խառնուրդ: Այդ պարզացրած մեխանիստական թեորիան, մենք կասեինք՝ «երկու սկզբունքների» ֆորմուլան տարածված է եղել բավական լայն չափով: Դժվար չէ ըմբռնել, որ այդ կոնցեպցիան հանդուժ էր հայ Ժողովրդի բազմադարյան արվեստի ինքնուրույնության և ամբողջականության թխտման և այն ներկայացնում էր իբրև մի ինչ որ վաղանցիկ կոնզլոմերատ:

Երկրորդ կոնցեպցիան, դուցե և պաշտպանվելով առաջինից, ընկնում էր մի այլ ծայրահեղություն մեջ, հայ արվեստը

զիտելով որպէս արտաքին աշխարհից մեկուսացված օրդանիդ՝ որ պարփակված է իր սեփական կեղևում և զարգանում է «մաքուր դժով»: Իժվար չէ հասկանալ այս թեորիայի ողջ հակագիտական, նացիոնալիստական էութունը:

Հայ ժողովրդի արվեստն ու կուլտուրան, — ինչպէս և ամեն մի այլ ժողովրդի, — չի զարգացել և չէր կարող զարգանալ համաշխարհային քաղաքակրթութեան լայն ճանապարհից դուրս, համամարդկային կուլտուրայից մեկուսացած: Հայ ժողովրդի արվեստի արժանիքը հենց այն է, որ ընդունելով ու յուրացնելով թե՛ Արևելքի և թե՛ Արևմուտքի արվեստի լավագույն ստեղծագործութունները, նա ոչ միայն չի կորցրել իր ինքնուրույնութունը, իր ազգային ձևը և ժողովրդական կոլորիտը, այլև, ընդհակառակը, շարունակել է հարստանալ և զարգանալ հենց որպէս ամբողջական, ինքնուրույն արվեստ, իր հերթին աղբյուր մյուս ժողովուրդների արվեստի վրա: Բայց միշտ չէ, որ զարգացման այդ պրոցեսն ընթացել է բարեհաջող և շահավետ: Միշտ չէ, որ ամեն մի ազգեցութուն յուրացվել է քննադատորեն, այս պատճառով էլ մեզ հասած՝ հայ արվեստի ինկրուստացիան զերծ չէ մթին նախշերից, զերծ չէ այլաժին տարրերից*): Ազատագրվել դրանցից, մոտիկից հաղորդակից վրենել ունի մեծ ժողովրդի զարգացած կուլտուրային, հայ ժողովրդի կուլտուրան և արվեստը բարձրացնել նոր աստիճանի վրա, — ահա այն շնորհակալ և կենսականորեն անհրաժեշտ խնդիրը, որ շատ տասնամյակների ընթացքում ծառայած է եղել հայ կուլտուրայի առաջավոր գործիչների առաջ, հայ ժողովրդի անշահախնդիր բարեկամների առաջ: Բայց միայն սովետական իշխանութունը պայմաններ ստեղծեց այդ երազանքն իրագործելու համար: Հայաստանում սովետական իշխանութեան հաստատմամբ հայ ժողովրդի արվեստի պատմութեան մեջ մի նոր շրջան սկսվեց: Սովետական ժողովուրդների մեծ ընտանիքում, — որոնք անցած քառորդ դարում ստեղծել են մարդկային կուլտուրայի նոր, պատմութեան մեջ դեռ չտեսնված կուլտուրայի, բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային կուլ-

տուրայի աննախընթաց դադարը, — հայ ժողովուրդն անցած քսան տարում իր արվեստը հասցրել է նոր, չտեսնված բարձրութեան: Հայաստանում արվեստի զարգացումն ընթացել է ապշեցուցիչ կոմպլեքսայնությամբ, արվեստի բոլոր տեսակների դժով, սկսած ժողովրդական ֆոլկլորից և վերջացրած կլասիկ երաժշտութեամբ ու պլաստիկայով: Բայց այդ զարգացումը միշտ չի ընթացել հարթ և նորմալ, կանոնավոր հունով: Մի շարք տարիների ընթացքում բուրժուական նացիոնալիստների լազերին պատկանող տղեսներն ու ֆորմալիստները, որոնք բախտի կամքով վլասավորում էին կուլտուրայի հիմնարկները, ղեկավարում արվեստը, քիչ չեն դանդաղեցրել նրա զարգացումը: Ազգային ձևի պատրվակով մեջտեղ էր բերվում վայրենութեան հասնող, կեղծ էստեթիկալիզմ. տաղանդավոր, ստեղծագործ կադրերը վանվում էին, փակ շրջանը հետզհետե նեխվում էր և դառնում ճահիճ: Մյուս կողմից զլուխ էին բարձրացրել կեղծ կլասիցիզմը և փուլբար սոցիոլոգիան: Առկա էր տաղանդավոր ժողովրդի հիանալի արվեստի ամենահանցավոր խեղաթյուրումն ու աղավաղումը: Մարդկանց լիտիութունն այնտեղ էր հասնում, որ կարմիր անդրավարտիկ հագած կանանց կիսավայրենի ցտուկոտմաները բեմի վրա՝ անամոթաբար հրամցվում էր իբրև հայկական ազգազրական պար: Կոպիտ կերպով անտեսվում էր ժողովրդական ստեղծագործութունը: Ժողովրդական բազմաթիվ երգիչներն ու իմպրովիզատորները — հայ գուսանների ու աչուղների պանծալի պլեադայի այդ հեռնորդները լիակատար մոռացության էին մատնված:

Ընկեր Ստալինի սուր աչքը նկատեց նաև այս ճեղքվածքը: 1937 թվականի աշնանն իր պատմական նամակում նա մատնանչեց, որ Հայաստանում կուլտուրական գործերը շատ վատ են դնում: Ընկեր Ստալինի ցուցումով Հայաստան եկավ նրա լավագույն զինակից, հայ ժողովրդի պանծալի զավակ Անաստաս Միկոյանը: Նրա խորհուրդներն ու ցուցումները, կուլտուրայի և արվեստի բնագավառում եղած ճեղքվածքն ու խեղաթյուրումներն արագ և անհապաղ լիկվիդացիայի ենթարկելու մասին, նրա ցույց տված օղնութունը կուլտուրա-

*) Որ առանձնապես ուժեղ և արտահայտվել թուրքերի և պարսիկների լիբրալիստության ժամանակաշրջանում (XVI—XVIII) դ. դ.:

Պան ֆրոնտի աշխատողները և ամբողջ հայ ժողովուրդը երբեք չեն մոռանա:

Այս վերջին տարիները եղան հայկական արվեստի համաբայ բոլոր տեսակների լիակատար ծաղկման տարիներ, այդ տարիները դարձան մեր արվեստը բուրժուա-նացիոնալիստական խեղաթյուրումներից և կեղծ-կլասիկական ազդեցութուններից մաքրելու տարիներ: Ստեղծագործական միտքը սկսեց հորդեղ ազդելու նման, աճել ու բարձրացել են բազմաթիվ տաղանդավոր կադրեր: Բուռն թափով աճում է ժողովրդական ստեղծագործութունը և ինքնագործ արվեստը: Տարեցուտարի լայնանում է արվեստի թատերական և այլ հիմնարկութունների ցանցը: Այդ հիմնարկութունների թիվը ներկայումս Հայաստանում 350-ից ավելի է, այդ թվում 25 ստացիոնար թատրոն, օպերայի և բալետի 1 թատրոն, 3 շրջիկ թատրոն, պատանի հանդիսատեսի 2 թատրոն, 1 կրկես, ավելի քան 240 կինո-թատրոն (որոնցից մոտ 180-ը հնչյուն), 1 կինո-ստուդիա: Միայն վերջին երեք տարում կազմակերպված է 12 նոր ստացիոնար թատրոն, երեք շրջիկ թատրոններ (կազմակերպվել են առաջին անգամ) և ավելի քան 40 կինո-թատրոն:

Ռեսպուբլիկայի կոլխոզներում, գործարաններում ու ձեռնարկութուններում գործում են մոտ 600 ինքնագործ խմբակներ:

Մեծ աշխատանք է կատարում ժողովրդական ստեղծագործության տունը՝ ժողովրդական ֆուլկլորի հավաքման և մշակման գործում: Նա հավաքել և դրի է առել մոտ հազար ժողովրդական, աշուղական երգեր, ինչքանու կոմպոզիտորների ստեղծագործութուններ, 300-ից ավելի հեքիաթ և այլն:

Առանձնապես խոշոր հաջողութուններ կան երաժշտական արվեստի զարգացման բնագավառում, և այդ պատահական չէ: Հայ ժողովուրդն ամենաերաժշտական ժողովուրդներից մեկն է, նա երաժշտական կուլտուրայի շատ ակնառիտ գործիչներ է տվել: Գրիստափոր Կարա-Մուրզա, Մուկար Եկմալյան, Կոմիտաս, Սպենդիարով— դրանք ամբողջ երաժշտական աշխարհին հայտնի անուններ են: Այդ պլենադայի մեջ առանձնահատուկ տեղ է դրափում հանճարեղ Կոմիտասը— հայկական երաժշտական նոր շեղիայի ճանաչված հիմնադիրը: Խորը շնոր-

հալիութունը, երաժշտական լայն շրջահայեցողութունը, անբակտերի կապը ժողովրդական ստեղծագործության ակունքների հետ՝ Կոմիտասին հնարավորութուն են տվել մի կողմից հայ տաբերելու իր ժողովրդի ինքնաբուղի երաժշտական կուլտուրայի խորն արմատները, և մյուս կողմից երաժշտական ստեղծագործության չզերազանցված նմուշներ ստեղծելու:

«Մեն անգամ, երբ սկսում եմ աշխատել Կոմիտասի երգերի վրա, ես մի առանձին ներքին կենտրոնացածութուն եմ ըզգում: Այդպես եմ ես ինձ զգում, նաև այն ժամանակ, երբ աշխատում եմ Բախի, Մոցարտի, Գլյուկի երկերի վրա: Այդ անունների շարքում, որոնց յուրաքանչյուր արվեստադեմ սրտի թրթիռով է մտանում, գտնվում է մեր Կոմիտասի անունը», գրում է ՍՍՍԻ ժողովրդական դերասանուհի Հ. Բ. Գանիկյանը: Կոմիտասի և Սպենդիարովի երկերով աճել ու դաստիարակվել է երաժիշտների և վոկալ արվեստի վարպետները մի ամբողջ սերունդ: Ամբողջ Միության մեջ բացառիկ հաջողութուն է գտնում Կոմիտասի անվան վաստակավոր կվարտետը: Հաջողությամբ յուրացնելով Կոմիտասի, Սպենդիարովի, ուսու մեծ կոմպոզիտորներ Չայկովսկու, Ռիմսկի-Կորսակովի, Գլինկայի և ուրիշների ստեղծագործութունը, հայկական երիտասարդ օպերան համարձակ քայլերով դեպի առաջ գնաց և հասավ երաժշտական ու վոկալ արվեստի բարձր մակարդակին:

Ձգալիորեն զարգացան դրամատիկական թատրոնները, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է բռնում Սունդուկյանի անվան հայկական դրամատիկական թատրոնը, որն իրավամբ հպարտանում է իր արտիստների կատարողական բարձր վարպետությամբ: Սունդուկյանի անվան թատրոնը մեծ հաջողութուններ է ձեռք բերել պատմական և ժամանակակից պիեսների բեմադրության գործում, պիեսներ, որոնք մի կողմից արտացոլում են հայ ժողովրդի հերոսական պայքարն իր անկախության համար, մյուս կողմից՝ տալիս են մեր օրացիալիստական կյանքի սքանչելի հերոսիկան, կերտում են մեր պարտիայի առաջնորդներ Լենինի, Ստալինի մեծ օրրաղները, նրանց պանծալի զինակիցների օրրաղները:

Նշանակալից հաջողութունների են հասել Հայաստանի օպերետական նկարիչները: Կերպարվեստը բարձրացել է զարգաց-

ման նոր աստիճանի վրա: Կերպարվեստի վաստակավոր վարպետների կողքին աճել են երիտասարդ, տաղանդավոր նկարիչների նոր կազմեր: Սովետական նկարիչների ցուցահանդեսները, որ կազմակերպվեցին 1939—40 թ.թ., թե Երևանում և թե Մոսկվայում ու Լենինգրադում, մեծ հաջողություն էին գտնում:

Վերջին տարիներս Հայաստանում մեծ զարգացման է հասել թանգարանային դործը: Պրիմիտիվ պահեստարաններից մեր թանգարանները դարձել են առաջավոր կուլտուրական հիմնարկություններ: Թանգարանների մեջ առաջատար տեղ են բռնում Հայաստանի պատմական թանգարանը և Կերպարվեստի թանգարանը (պատկերասրահ):

Պատմական թանգարանը, որ ստեղծվել է ըստ էության 1939 թ., նյութական կուլտուրայի հսկայական քանակությամբ հուշարձանների և այլ էքսպոնատների միջոցով պատկերում է հայ ժողովրդի կուլտուրայի, արվեստի և տնտեսական կյանքի պատմությունը՝ ամենահին ժամանակներից սկսած մինչև մեր օրերը ներառյալ: Կուլտուրայի տան ընդարձակ, բազմաթիվ դահլիճներում տեղավորված է կերպարվեստների թանգարանը, ուր հարուստ կուլեկցիաներով ցուցադրված են վրձինի վարպետների լավագույն երկերը, սկսած արևմտա-եվրոպական շկոլաներից մինչև սովետական նկարիչները: Հայաստանի կերպարվեստի թանգարանը գտնվում է Սովետական Միության կերպարվեստի ամենաառաջավոր թանգարանների շարքում:

Արվեստի բնագավառում Սովետական Հայաստանի նվաճումները 1939 թվականին, Հայկական արվեստի ղեկավարի ժամանակ ցուցադրվեցին Մոսկվայում: Այդ ոչ միայն մեծ տան էր, այլև առաջին մեծ քննությունը:

1939 թվի հոկտեմբերի 20-ին Սովետական Միության Ալիս-գեմֆական Մեծ թատրոնում բարձրացավ հայկական արվեստի ղեկավարի առաջին ներկայացման վարպետը, և ամբողջ աասնորյակի ընթացքում օպերայի և բալետի հայկական պետական թատրոնի և հայկական պետական ֆիլհարմոնիայի կուլեկտիվը— մեր արտիստները, կոմպոզիտորները, նկարիչները, դերերիժորները և արվեստի մյուս աշխատողները ցույց տվին իրենց փայլուն վարպետությունը: Ներկայացումների ղեկավարե-

տական ձևավորումը և երաժշտության ու երգեցիկ խմբի կատարողական վարպետությունը ղիմացան ամենախիստ քննադատության, սովետական արվեստի ամենապատվաբեր ներկայացուցիչների քննադատության:

Դեկադան սկսվելու կապակցությամբ «Պրավդան» գրում էր. «Երազործվեց հայ ժողովրդի երազանքը: Հզոր ուժերը, որ հուսալիվել էին ժողովրդական մասսաներում, ելք և զործադրություն գտան: Խնամքով պահպանելով անցյալի կլասիկ արվեստի հուշարձանները, հայ ժողովուրդը նոր, հիանալի արվեստ է ստեղծում»:

Հայկական արվեստի ղեկավարն ստացավ պարտիայի և կատարության բարձր գնահատականը: Օպերայի և բալետի Պետական թատրոնն արժանացավ Սովետական Միության բարձր պարգևին— Լենինի շքանշանին: Հայկական Պետական ֆիլհարմոնիան պարգևատրվեց Աշխատանքային կարմիր Դրոշի շքանշանով:

Դեկադայի 134 մասնակիցներ պարգևատրվեցին Սովետական Միության շքանշաններով և մեդալներով: Հաջողություն ուղևորված՝ մեր արվեստի աշխատողների կուլեկտիվը ղեկավարից հետո անցած տարում հաստատապես ամրապնդեց ձեռք բերված նվաճումները և ստեղծազործական նոր աշխատանքի օրինակներ է ցույց տալիս: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցում կազմակերպվեցին մի շարք նոր բեմադրություններ ուսուկլասիկների երկերից, — «Թագավորի հարսնացուն», «Պիկովայա դամա», «Կարապի լիճը»: 1940 թվի սեզոնի սկզբում հաջողությամբ բեմադրվեց Վերդիի «Ռիգոլետտո» օպերան: Ներկայումս կուլեկտիվն աշխատում է նոր բեմադրությունների վրա:

Պետֆիլհարմոնիան նույնպես ղեկավարից հետո նոր հաջողություններ է ձեռք բերել: Երգի և պարի անսամբլի և կապելլայի դաստորըները Սովետական Միության քաղաքներում ամենուրեք արժանացել են բարձր գնահատականի: Անցած տարում կոմպոզիտորները գրել են ավելի քան 100 զանազան ժանրերի երկեր: Նկարիչներն ու քանդակագործները ստեղծել են մի ամբողջ շարք նոր դործեր, որոնք զարգարում են Հայաստանի սովետական նկարիչների ցուցահանդեսի դահլիճները:

Հոգատարություն պահպանելով և քննադատորեն յուրաջ-

նելով անցյալի հարուստ կուլտուրական ժառանգութիւնը՝ հասց
ժողովուրդն անցած քսան տարում ստեղծեց իր նոր, սովետա-
կան արվեստը, լեզվով, ձևով ազգային, բովանդակութեամբ
ոտջիալիստական արվեստը:

Այս հաղթանակները հնարավոր եղան շնորհիվ լենինյան-
ստալինյան իմաստուն ազգային քաղաքականութեան:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Մինչև Հայաստանում՝ Սովետական իշխանութեան հաստա-
տումը բուժ-պրոֆիլակտիկական դործը երկրում քարշ էր տա-
լիս իր ամենաողորմելի գոյութիւնը: 1913 թվին Հայաստանում
կային ընդամենը 18 պոլիկլինիկաներ ու ամբուլատորիաներ և
11 բուժակային կետեր: 1919 թվին, համաճարակների սաստիկ
տարածման հետևանքով, պոլիկլինիկաների և ամբուլատորիանե-
րի թիվն ավելացավ մինչև 25: Այնպիսի բուժական հիմնարկներ,
ինչպես մանկական ամբուլատորիաները, տուբերկուլյոզի դիս-
պանսերները, կոնսուլտացիաները, մալարիայի կայանները,
չտապ օգնութեան կայանները, — բոլորովին բացակայում էին:
Գրութիւնն ավելի լավ չէր սանիտարական-պրոֆիլակտիկ հիմ-
նարկութիւնների գծով: 1919 թ. ամբողջ Հայաստանում կար
մի սանիտարական-համաճարակային լաբորատորիա և մի դե-
զինֆեկցիոն ջոկատ:

Բոլորովին բացակայում էր մսուրների ցանցը, ամբողջ երկ-
րում ոչ մի մսուր չկար: 1913 թվականին ամբողջ Հայաստա-
նում կար ընդամենը 41 բժիշկ և 91 բուժակ, 1919 թվականին
այդ թվերը միայն ընչին չափով էին ավելացել. բժիշկների
թիվը հասել էր 45-ի, բուժակների թիվը՝ 107-ի: Դեղատնելի
թիվը 1913 թ. մինչև 1920 թ. մնում էր անփոփոխ — դրանք
ընդամենը 7 էին: Դեղագործների թիվը 18 հոգուց ավելի չէր:

Հարուստ բնութիւն և բուժիչ հանքային ջրեր ունեցող
Հայաստանում չկար ոչ մի սանատորիա և հանգօտի տուն:

Չկար նաև ոչ մի բժշկական դպրոց և դիտա-հետադոտական հիմնարկություն:


Մինչև 1920 թվականը Հայաստանում այսպես էր առողջապահության դրուժյունը:

Սովետական իշխանություն հաստատվելուց հետո ժողովրդական առողջապահության դործը արմատապես վերակառուցվեց: Այդ ժամանակվա ընթացքում լայնորեն ծավալվեց բուժ-սանիտարական, պրոֆիլակտիկ և ժողովրդական առողջապահության այլ հիմնարկությունների շինարարությունը: Բացվեցին բժշկական հատուկ ինստիտուտ, բժշկական տեխնիկում և մի շարք ուրիշ բժշկական դպրոցներ և կուրսեր՝ բարձր ու միջին կվալիֆիկացիայի կադրեր պատրաստելու համար: Բացվեցին նաև բժշկական դիտա-հետադոտական ինստիտուտներ և կայաններ: Այս տարիների ընթացքում մի քանի տասնյակ անդամ ու վեյացել է բժշկական հիմնարկությունների ցանցը և բժշկական կադրերի թիվը:

1939 թվին Հայկ. ՍՍՌ-ում կար 63 հիվանդանոց՝ 2862 մահճակալով, 147 ամբուլատորիաներ և պոլիկլինիկաներ, (որոնցից 105-ը գյուղում), 25 ծննդատներ՝ 488 մահճակալով: Քաղաքային 42 պոլիկլինիկաներից 23-ը մասնագիտացված են: Բացի դրանից, կազմակերպված է մանկական 2 ամբուլատորիա, տուբերկուլյոզի 3 դիսպանսեր, 3 վենդիսպանսեր, կանանց և երեխաների 49 կոնսուլտացիա, որոնցից 20-ը—գյուղում, մալարիայի 35 կայան և կետ, 16 բժշկական առողջապահական կայան, շտապ օգնության 25 կայան և կետ, 298 բուժակային և մանկաբարձական կետ, որոնցից 189—գյուղերում, և բժշկական ու քույրերի 57 կետ: Մինչև սովետական իշխանությունն այդպիսի հիմնարկություններ կամ բոլորովին չկային, կամ հատ ու կենտ էին:

Սանիտարական—պրոֆիլակտիկ և հակահամաճարակային օբյեկտների ցանցը 1939 թ. հասավ 479-ի, որից 192-ը գյուղում:

Թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում մանկամուկների շինարարությունը լայն չափով զարգացել է— մանավանդ վերջին տարիներս: 1939 թվին Հայաստանում կար 101 մշտական մըսուր, որոնցից 20-ը գյուղերում: Այդ մուկներն ունեին 3366




Բժշկական ինստիտուտի նորակառույց շինիչը

մահճակալ: Բացի դրանից, դյուզերում կազմակերպված էր. 651 սեղոնային մսուր՝ 16209 տեղերով: Բժիշկների թիվը 1000-ից ուվել էր, միջին բուժօգնության թիվը՝ մինչև 2000: 1940 թվականին ղեկավարների թիվը հասավ 65-ի: Բացի դրանից, կազմակերպվեցին 38 ղեկավարականներ, խանութներ և կետեր: Դեղագործների թիվն ավելացավ ավելի քան 10 անգամ: 1919 թվականի 12 ղեկագործների դիմաց այժմ Հայաստանում կա 187 ղեկագործ, բարձրագույն և միջնակարգ կրթությամբ:

Սովետական իշխանության տարիներին Հայաստանում կառուցված է 5 խոշոր սանատորիա (որոնցից 2-ը մանկական) և 8 հանգստյան տուն: 1939 թվականին Հայաստանի սանատորիաներն ու հանգստի տներն ընդունել են ավելի քան 10.500 հիվանդներ և հանգստացողներ: Դիլիջան և Արզնի կուրորտները հայտնի են ամբողջ Սովետական Միությանը: Հայկ. ՍՍՍԿ կուրորտային շինարարության մեջ այս տարիներին ներդրվել է մոտ 16 միլիոն ուրբլի:

Բերված թվերից և փաստերից դժվար չէ համոզվել, որ Հայաստանում սովետական, ժողովրդական առողջապահությանը սկսվել էր բոլորովին դատարկ տեղում, բայց և այնպես, Հայաստանի աշխատավորների հաջողություններն այստեղ ևս խոշոր են: Առողջապահության դործի այդպիսի արագ զարգացումը բացատրվում է ամենից առաջ պարսիայի ու կառավարության և անձամբ ընկեր Ստալինի բացառիկ ղեկավարման հողատարության դեպի սովետական մարդու առողջությանը: Քաղաքային բնակչության և կոլխոզային դյուզացիության բարեկեցության հարաճուճ վերելքը, դործադրիչության լիակատար վերացումը երկրում, աշխատավորների նյութական ապահովածությունը ծերության և հիվանդության ժամանակ, հանդստի իրավունքը, աշխարհում ամենակարճ աշխատանքային օրը, այս բոլոր պայմանները, որ ստեղծել է Սովետական Կառավարությունը, ապահովում են օոցխալիստական երկրի բնակչության Ֆիզիքական զարգացման անչեղ աճը: Օոցխալիստական պետության այդ ուղղիկալ ձեռնարկումները հաստատուն հիմք են դրել Ֆիզիքական և հոգեպես զարգացած, կենսունակ, տոկուն սովետական քաղաքացու ձևավորման:

Զինվորական ծառայության կանչվածներին վերաբերող




ավյալները պերճախոս կերպով հաստատում են, որ մեր երիտասարդությունը տարեցտարի տալիս է շատ ավելի միջին քաշ, հասակի ավելի շատ բարձրություն և կրճքի վանդակի ավելի լայն շրջազիծ:

Պարտիայի և կառավարության ձեռնարկումներն իրազարծելու և այլ հիմունքով ժողովրդական սոցիալապահության դործն արժատապես բարելավելու հետևանքով անցած 20 տարում Հայաստանում խիստ իջել է մահացության տոկոսը և սեկորդային չափով բարձրացել բնակչության բնական աճը:

Եթե 1924 թվին բնակչության յուրաքանչյուր 1000 հոգուն ընկնում էր 28,8 հոգու աճ, ապա արդեն 1938 թվականի սկզբին այդ թիվը բարձրացավ մինչև 33,7: Այդ տարիներին մահացությունը 18,9 հոգուց իջավ մինչև 13,1 հոգու՝ յուրաքանչյուր հազարի դիմաց:

Սոցիալապահության օրդանները մեծ հաջողությունների են հասել բնակավայրերի սանիտարական դրության բարելավման և համաճարակների դեմ պայքարելու բնագավառում: Դեռ 1921 թվին վերջնականապես և ամբողջովին լիկվիդացիայի ենթարկվեց խոլերային համաճարակը, որը սիստեմատիկաբար բռնկվում էր 1918—1919 թվերին: Լիովին լիկվիդացիայի է ենթարկված նաև նատուրալ ծաղիկի հիվանդությունը, վարուց վերջ է արված անդրադարձ տիֆին:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի մալարիայի դեմ մղվող պայքարի հաջողությունները: Հայաստանը եղել է ծանր, համաճարակային մալարիայի հին օջախ: Հայաստանի բնակչությունը հարյուրամյակների ընթացքում տառապել է այդ ախտից: Ահա թե ինչու մալարիայի դեմ ուղղված պայքարը եղել է Հայաստանի ժողովրդական սոցիալապահության օրդանների — և ո՛չ միայն սոցիալապահության օրդանների, կենտրոնական խնդիրներից մեկը: Այդ պայքարը հաջողությամբ մղելու համար երկրում ստեղծվեց հակամալարիական հիմնարկների մի ամբողջ ցանց, Հայկ. ՍՍՌ Առժողկոմատի հատուկ դիտահետազոտական Տրոպիքական ինստիտուտի գլխավորությամբ: Պայքարը ծավալվում է կոմպլեքսային սիստեմով: Այս տեսակետից վճռական նշանակություն են ստանում ճահճոտ տեղիտորիաները չորացնելու ուղղությամբ կատարված և կատար-



Մյուստանցքի Երևանի քաղաքում

վող աշխատանքները, մանավանդ Արարատյան դաշտում: Մի-
այն 1939—1940 թ.թ. ընթացքում ավարտվեց չորացման և
ոռոգման սխեմաների շինարարութունը (Ղաթարլուի և Ձան-
գիրասարի շրջաններում) մի քանի հազար հեկտար ճահճոտ
տերիտորիայում:

Հիշատակված ձեռնարկումների կիրառման հետևանքով
խիստ իջել է մալարիա հիվանդության տոկոսը: Միայն վերջին
հինգ տարում չորս անգամ կրճատվել են մալարիայից բուժվելու
դիմումները: Մալարիայից բուժվելու համար առաջին անգամ
դիմումների թիվը 1934 թվականի 188,6 հազարից 1939 թվա-
կանին իջել է մինչև 48,3 հազարի: Անցած ժամանակաշրջանում
խիստ կրճատվել են նաև տուբերկուլյոզը և ստամոքսա-աղիքա-
յին ու մանկական հիվանդութունները:

Այս հաջողութունները հանդիսանում են ժողովրդական ա-
ռողջապահության գործի նկատմամբ Սովետական կառավարու-
թյան ամենօրյա ուշադրության հետևանքը, լենինյան-ստալինյան
ազգային քաղաքականության կիրառման հետևանքը: Դրա փայ-
լուն ապացույցներից մեկն է ժողովրդական առողջապահության
տարեցատարի աճող քյուլեն:


Միայն վերջին երեք տարում Հայկ. ՍՍՌ ժողովրդական ա-
ռողջապահության գործում եղած ներդրումները ռեսպուբլիկա-
կան և տեղական բյուջեներով 51·920·000 ռուբլուց բարձրացել
են մինչև 65 միլիոն ռուբլի:

ԵՐԵՎԱՆԸ—ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱԲԱՂԱԲԸ

Երևան քաղաքը հիմնվելու ճիշտ ժամանակը մինչև այժմ
մեզ հայտնի չէ, բայց անվիճելի է, որ նա շատ հին ծագում
ունի: Այդ հաստատում են նյութական կուլտուրայի բազմա-
ուսնի: Այդ հաստատում են նյութական կուլտուրայի բազմա-
թիվ հուշարձանները, որոնք հայտաբերվել են հնագիտական
պեղումների միջոցով, դեռ անցյալ դարում: Ամենավերջին տա-
րիներս թե՛ քաղաքի սահմանում և թե՛ մերձակա վայրերում
(Կարմիր բլուր, Ծնդավիթ, Ձանգվի ձոր, Ավանի ձոր և այլն)
եղած հնագիտական դյուտերը նոր, արժեքավոր նյութեր են
տալիս Երևանի հնադարյան ծագման մասին:

Քաղաքի շրջակայքում — Կարմիր Բլուրում 1939—40 թ.թ.
պեղումների ժամանակ հայտաբերվել է խաղաղական էպոխայի
մի շատ հարուստ հուշարձան: Բլուրի վրա դրսևել է արժեքա-
վոր սեպագիր, որը պատկանում է Ուրարտուի թագավոր Ռու-
փար սեպագիր, որը բոլոր հուշարձանները և
այլն (VIII դար մ. թ. ա.): Այդ բոլոր հուշարձանները և
նյութերը նոր լույս են սփռում Երևան քաղաքի ծագման պատ-
մության վրա:

Չկան նաև շատ թե քիչ ճիշտ տվյալներ, թե որտեղից է
ծագել «Երևան» անունը: Այս հետաքրքիր հարցի շուրջը կան
ֆի շարք ենթադրութուններ, դիտական լուրջ ենթադրութուն-
ներից սկսած մինչև առասպելականները, օրինակ, թե «Երևան»
անունը ծագել է «երևալ» բառից և այդ կապված է ջրհեղեղից
հետո Նոյի երևարու հետ: Ըստ այդ ավանդության Նոյը ջրհե-
ղեղից հետո դուրս գալով իր տապանից՝ տեսավ առաջին բնա-



Մի անսարքան կի՛ն Երևանից


կառնալը և ասով՝ «Երևան», և իբր թե այստեղից էլ այդ վայրի անունը մնաց «Երևան»:

Քաղաքի և նրա անվան ծագման վերաբերյալ բազմաթիվ և տարբեր ենթադրություններից ամենահավանականն են պրոֆեսոր Նիկոլսիուզ գիտականորեն հիմնավորված կղբակացությունները. նա պարզեց և կարգաց 1893—96 թ.թ. հնագիտական հետազոտությունների ժամանակ Հայաստանում գտնված մի քարի վրայի սեպագրությունը: Այդ մակագրության մեջ Ուրարտուի թագավոր Ռուսան ուրարտական լեզվով հիշատակում է իր նվաճած երկրները, տալով նաև դրանց անունները: Այդ երկրներից մեկն անվանված է «Էրիլայնի»: Սա հիմք է տալիս ենթադրելու, որ այդ ուրարտերեն մակագրությունը համապատասխանում է Երևանի հնագրայան անվան: Այս ենթադրությունը զուրկ չէ հիմքից, որովհետև տեղերի շատ անուններ, որոնք ուրարտերեն են, շատ նման են հայերեն անուններին:

Երևանի վերաբերյալ առաջին գրավոր հիշատակությունը վերաբերում է մեր թվականության VII դարի սկզբին. 607 թվականին Դավիթ քաղաքում (Երևանից 25 կիլոմետր հեռու) տեղի էին ունենում կաթողիկոսի ընտրությունները: Ընտրություններին մասնակցող գերեզատների ցուցակում հիշատակվում է նաև ոմն երևանցի Դավիթ: VIII դարի աչն մակագրություններում, որոնք գտնվել են Սևանի մոտ, նույնպես հիշատակվում է «Երևան» անունը: Իսկ դրանից շատ ավելի ուշ, XIV դարում է «Երևան» անունը: Իսկ դրանից շատ ավելի ուշ, XIV դարում ժամանակակիցներն իրենց գրավոր վկայություններում հաճախ հիշատակություններ են անում Երևանի մասին, նկարագրելով պատմական կոնկրետ զեպքեր, օրինակ, Լենկթեմուրի արշավանքը դեպի Հայաստան (1386 թ.): XIV դարի կեսում անձամբ Երևան է այցելել հայ պատմիչ Թովմաս Մեծոպեցին: Երևանն այն ժամանակ մի փոքրիկ բնակավայր է եղել, ուստի և Մեծոպեցին նրան գյուղաքաղաք է անվանել:

Այսպիսով եթե Երևանի պատմությունը սկսենք նույնիսկ նրա վերաբերյալ առաջին գրավոր հիշատակությունից (607 թ.) հետո միայն, ապա այդ նշանակում է, որ նա գոյություն ունի ավելի քան 1300 տարի:

XV դարի կեսում (1440 թ.) Երևանն արդեն կառավարում




Մի տեսարան Երևանից

էին օտարերկրյա նվաճողները՝ Աղ-Գոյունները: Այդ ժամանակից համարյա վերանում է Երևանի հայկական ինքնուրույն վարչութիւնը: Այն անցնում է մերթ պարսից շահերի և մերթ թուրքական սուլթանների ձեռքը: Մոտ երեք դարի ընթացքում Երևանը դառնում էր պարսկական շահի փոխարքաների իշխանութան տակ և դարձել էր ուղմար-բերդաքաղաք:

Երևանը պարսիկներից նվաճելու համար ուսսական զորքերը 1804 թվից սկսած՝ մի քանի անգամ պաշարում են այն: Բայց Երևանը զրավել չի հաջողվում ոչ դեներալ Տիցլանովի Ղոկատներին (1804 թ.), ոչ էլ դեներալ Գուգովիչին (1808 թ.): Միայն երկու տասնամյակից հետո, 1827 թվականի հոկտեմբերի 1-ին դեներալ Պասկևիչի զորքերը երկարատև պաշարումից հետո մտնում են քաղաք, զրավում են Զանգու գետի բարձրադիր ափին դառնվող բերդը, վերցնելով 40 թնդանոթ և դերելով 4000 սարվազ (զինվոր): Այդ ժամանակից Երևանը և ամբողջ Հայսական մարզն անցնում են ցարական Ռուսաստանին: Հետագայում Հայկական մարզը, որ թուրքմենչայի դաշնադրով (1828 թ.) անցել էր Ռուսաստանին, անվանվեց Երևանի նահանգ (1849 թ.): Երևանը դառնում է նահանգի կենտրոն (նահանգապետի նստավայր):

Այդ ժամանակ Երևանն իրենից ներկայացնում էր արևելյան, պարսկական տիպիկ քաղաք, դառնում էր ընդարձակ պարտեզների և խաղողի այգիների մեջ, որոնք ափելի քան 6000 գեսյատին տերիտորիա էին զրավում: Քաղաքը բաժանվում էր երեք մասի: Կենտրոնական մասը մղկիթով հանդերձ (այժմանկարիչների տուն) կոչվում էր «Շահար», որ պարսիկերեն նշանակում է քաղաք: Նրան կից էր «Նոր թաղը»: Այդ ուայոնը զրավում էր այժմյան Ամիրջան, Սպանդարյան և Արուսյան փողոցների սահմաններում դառնվող տերիտորիան: Առևտրական կենտրոնը դառնում էր Բերդից ոչ հեռու, նախկին «ղանթարի», այժմյան Կիրովյան այգու ուայոնում:

Երկրորդ ուայոնը զրավում էր քաղաքի արևմտյան մասը, որը սահմանադրվում էր Զանգու գետի հետ և կոչվում էր Թափա-բաշ: Այդ ուայոնի մեջ մտնում էր երեք թաղամաս — Ղարաղաղու, Կոնդ և Զորադյուղ:



Հին Երևան


Երրորդ օայտնը — Գամր-բուլաղը դանդում էր քաղաքի հարավ-արևելյան բարձրադիր մասում:
Հետագայում բնակչության ավելացման կապակցությամբ քաղաքը մի փոքր ընդարձակվում է և առաջ են դալիս նոր թաղամասեր:

Քաղաքում ոչ մի արդյունաբերություն չկար: Կային միայն բազմաթիվ համաքարություններ և մի քանի արհեստագործություններ: Խոլորովին բացակայում էին կոմունալ պայմանները: Քաղաքը դանդում էր կեղտոտ և հակասանիտարական վիճակում, խիստ տարածված էր մալարիան:

Ֆարսիան կառավարությունը, որ Հայաստանում հետևողական դադարեցրեց քաղաքականություն էր վարում, իր իննսուներես տարվա տիրապետության ընթացքում շատ քիչ փոփոխություններ կատարեց: Խախտելու և թե՛ մանավանդ նրա արտաքինը: Խախտելու էր, որ 1914 թվին Երևան քաղաքի ամբողջ արդյունաբերության առեկան շրջանառությունը կազմում էր 842.250 ուրբի, որից մոտ 700.000-ը գինու, կոնյակի, օղու և սպիրտի ձեռնարկությունների շրջանառությունն էր: Մինչև 1913 թվականը բնակչությունը դործ էր ածում Չանդու դեպի կեղտոտ, պղտոր ջուրը: 1913 թվին կառուցված փոքրիկ ջրմուղը սպասարկում էր բնակչության միայն մի փոքր, ունևոր մասին, որ սպրում էր քաղաքի մի քանի կենտրոնական փողոցներում:

Այսպիսի դեմք ուներ Երևանը Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելու նախօրյակին: Այն իրենից ներկայացնում էր նույն խղճուկ արևելյան քաղաքը, ինչպիսին էր պարսկական սարդարների տիրապետության ժամանակ: Քաղաքում կար ընդամենը մոտ 30 հազար բնակչություն: Տների ճնշող մեծամասնությունը կառուցված էր կավից, ավելի քիչ մասը — թրծած աղյուսից: Քարե տները, որ կառուցել էին տեղական առևտրականները և ցարական չինովնիկները, կարելի էր մասնների վրա հաշվել: Իրանք բնավ չէին կարող որևէ չափով փոխել քաղաքի ընդհանուր, «ասիական» արտաքինը:

Դաշնակիների տիրապետության ժամանակ էլ ավելի վատթարացավ քաղաքի առանց այն էլ խղճուկ դրությունը: Եղբայրասպան, ազդամիջյան կոտորածը, որ կազմակերպում էին




Մասնին ցանկանալով — քաղաքի մասը

դաշնակները, առայսցրին քաղաքի ամբողջ թաղամասեր ու ուս-
յոններ, ուր բնակվում էին ազրբեջանցիները: Քաղաքում թա-
գաւորում էր վանդալիզմը և վայրենի կամայականությունը:
Այդ բոլորը քաղաքը հասցրել էր մոռալ և անտանելի դրության:

Երևանի իսկական վերակառուցման և բարեկարգման աշ-
խատանքն սկսվեց միայն սովետական իշխանության տարիներին:
Սնցել է ընդամենը ջրան տարի, որ Երևանի պատմության
մեջ շատ կարճ ժամանակամիջոց է, սակայն այդ ժամանակվա
ընթացքում բոլշեիկները ոչ միայն վերակառուցեցին քաղաքը,
ոչ միայն փոխեցին նրա դեմքը, այլև ստեղծեցին էպպես նոր,
սոցիալիստական քաղաք: Սովետական իշխանության օրոք ար-
ժատապես վերակառուցվել է Երևանը: Իր անասական, կուլ-
տուրական և քաղաքական նշանակութամբ Երևանն այժմ իրենից
ներկայացնում է բոլորովին նոր քաղաք, որը սչ մի ընդհանուր
բան չունի պարսկական, ցարական և դաշնակցական ժամանա-
կաշրջանի Երևանի հետ:

Ստորև բերված մի քանի թվերը կարող են փայլուն կեր-
պով աղացուցել այդ: Երևանն այժմ ունի ավելի քան 200 հա-
զար բնակչութուն, այսինքն դրեթե 7 անգամ ավելի, քան ցա-
րիզմի և դաշնակների օրոք: Քաղաքում կան մոտ հիսուն խո-
չոր ֆաբրիկաներ, դործարաններ և կոմբինատներ, մի քանի
տասնյակ անայնադործական և արտելային ձեռնարկություն-
ներ, արհեստագործական միություններ և կոոպերատիվներ: Քա-
ղաքային էլեկտրոէներգիա են մատակարարում երեք հիզրո-
էլեկտրոկայաններ — 1-ին Երզեսը, 2-րդ Երզեսը և Քանաքեռ-
դեսը: Եժան էլեկտրոէներգիայի և հումքի բաղալի հիմունքով
քաղաքում մեծապես զարգացել են քիմիական, գինու, կոնյակի
և պահածոների արդյունաբերությունը, շինանյութերի արդյու-
նաբերությունը, մետաղամշակման և փայտամշակման արդյու-
նաբերությունը և այլն:

Արհեստագործական կոոպերացիայի ձեռնարկությունների
մեջ առաջատար տեղ են զբաղում գորգագործական արդյունա-
բերությունը, սպիրտական արտադրությունը, ձեռագործ իրերի
և գեղարվեստական-կենցաղային կերամիկայի արտադրու-
թյունը: Երևանում զանվող արդյունաբերական ձեռնարկու-
թյունների արտադրանքը կազմում է ռեսուրսների արդյունա-




Արմենիայի նորակառույց շենքեր

գերութեան արտադրանքի խոշոր տոկոսը: Այս փաստերը խոսում են Երևան քաղաքի չափազանց արագ արդյունաբերական զարգացման մասին:

Ինդուստրիալ զարգացման բաղայի հիման վրա և նրան շուրջահեռ աճել են քաղ-լուսավորական, կրթական և սոցիալ-կուլտուրական հիմնարկները: Ներկայումս Երևանում կան 42 գլխավորական շենքեր լրիվ միջնակարգ դպրոցների համար, դաճաղան մասնագիտութեյունների 20 տեխնիկումներ, 10 բարձրագույն ուսումնական հաստատութեյուններ, որոնց թվում՝ Պետական համալսարանը, որ հիմնվել է 1921 թվին (այդ առաջին բարձրագույն դպրոցն էր Հայաստանում): Ստալինյան հնգամյակների տարիներին Երևանում, նրա ամենապեղեկեղեկ մասում աճեց ուսանողական հիանալի թաղամասը, որտեղ, բացի խոշոր, բազմահարկ ուսումնական շենքերից, կինտրոնացված են ուսանողական հանրակացարանները, ճաշարանները, զբոսայգիները, պարտեզները, հրապարակները, փորձնական հողամասերը և պրոֆեսորական-դասախոսական կազմի բնակելի տները: 1914 թվականի համեմատութեյամբ սովորողների թիվն աճել է ավելի քան 20 անգամ: Երևանը ներկայումս հանդիսանում է համատարած գրագիտութեյան քաղաք, հաջողութեյամբ կատարվում է ՀամԿ(բ)Պ XVIII համագումարի դերեկտիվը՝ քաղաքներում ընդհանուր միջնակարգ կրթութեյուն մտցնելու մասին: Այս տարիների ընթացքում քաղաքում առաջ է եկել մեծաթիվ ինտելիգենցիա, դիտական աշխատողների և մանկավարժների միամբողջ ջոկատ, այդ բաղայի հիմունքով առանձնապես ուժեղ զարգացում է ստացել դիտական միտքը: Երևանը ներկայումս ունի ավելի քան 40 դիտական հիմնարկութեյուններ, լաբորատորիաներ և փորձակայաններ, որ աշխատում են մոտ 800 դիտական աշխատողներ: Քաղաքի դիտական հիմնարկութեյունների մեջ իրավամբ առաջատար տեղ է զբաղում ՍՍՌՄ դիտութեյունների Ակադեմիայի Հայկական Փիլիալը (Արմֆանը), որը վերջին տարիներս դարձել է թե՛ քաղաքի և թե՛ Ռեպուբլիկայի դիտական մտքի իսկական կենտրոն. այդ քանիցս մատնանշել են ՍՍՌՄ Գիտութեյունների Ակադեմիան և Ռեպուբլիկայի դերեկտիվային օրգանները:

Երևանի զարդն են հանդիսանում հնադարյան ձեռագրերի



Մարտի 1918 թվականի փետրվարի 26-ին


Պետական ձեռագրատունը (Մատենադարանը) և Մյասնիկյանի տնիսն Պետական հանրային դրադարանը, որ վերջերս ստացավ հատկապես իր համար կառուցված հիանալի շէնք: Երևա՛ի հանրային դրադարանը Մխության հարուստ, հազեցված դրադարաններից մեկն է, ունի ավելի քան մեկ ու կես միլիոն անուն գիրք, այդ թվում — բազմաթիվ արժեքավոր ունիկոմներ:

Այսպիսով սովետական իշխանության տարիներին Երևանը դարձել է գիտական կենտրոն, գիտական մտքի ֆաղափ:

Սովետական իշխանության օրոք և մանավանդ վերջին տարիներում մեծ զարգացման են հասել արվեստի հիմնարկությունները: Երևանում կան՝ Օպերայի և Բալետի թատրոն, Պետֆիլհարմոնիա, չորս դրամատիկական թատրոն, — որոնց թվում ուսական և ադրբեջանական դրամատիկական թատրոններ: Պետ. էստրադային թատրոն, Պատանի հանդիսատեսի թատրոն, Տիկնիկային թատրոն, Պետկրկես, մի շարք թանգարաններ, կուլտուրայի և հանդստի 5 պարկ, Բուսարանական այգի, Կենդանաբանական այգի և այլն: Հանդիսատեսական ձեռնարկությունների հազեցվածությունը Երևանը Սովետական Մխության մեջ բռնում է առաջին տեղերից մեկը: Սովետական Հայաստանի մայրաքաղաքը հպարտանում է նկարիչների, ճարտարապետների, արտիստների, կոմպոզիտորների, Երաժիշտների և արվեստի այլ աշխատողների հիանալի կոլեկտիվներով: Այնպիսի նկարիչների անունները, ինչպես Մարտիրոս Մարյանը, Ա. Լաջյանը, Թերլեմեզյանը, Առաքելյանը, Կոջոյանը, Գյուրջյանը, Արուստյանը, ինչպես և քանդակազործներ Արա Մարգարյանի, Ս. Մտեփանյանի, Ուրարտուռի և ուրիշների անունները հայտնի են նաև Սովետական Հայաստանի սահմաններից դուրս:

Հայաստանի սովետական նկարիչների ավանգարդում քայլում է վրձինի նշանավոր վարպետ, Ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սերգեևիչ Մարյանը, որ ստեղծել է հիանալի երկերի մի ամբողջ գալերեա, երկեր, որոնք բարձր գնահատական են ստանում ոչ միայն Սովետական Մխությանում, այլև նրա սահմաններից դուրս:

Վերջին տարիներս Երևանում ձևավորվեց կոմպոզիտորների մի սուլիդ կոլեկտիվ, — կոմպոզիտորներ, որոնք մի շարք հիանալի երաժշտական երկեր են ստեղծել: Արժանավայել սեր են




աւստրալիական քաղաքապետութիւնը

վայելում մեր անհնաժող կոմսոպոլիտոսներ Արմեն Տիգրանյանը, Արամ Խաչատրյանը, Հարո Ստեփանյանը, Տեր-Ղեվոնդյանը, Կարո Զաքարյան, Ա. Սաթյանը և ուրիշները: Նրանց մեջ ամենից երիտասարդն Արամ Խաչատրյանն է: Վերջին տարիներս նա իր ստեղծագործութիւնը հարստացրել է մի շարք տաղանդավոր երկերով: Արամ Խաչատրյանը կոմիտասի իսկական հետնորդն է, նա մեծ ճարտարութեամբ և վարպետութեամբ տրամուս է հայ ժողովրդի երաժշտական կուլտուրայի ահունքներից: Նրա մոնումենտալ պոեմը Ստալինի մասին՝ սովետական կոմսոպոլիտոսների լավագույն երկերից մեկն է: Արամ Խաչատրյանը կանգնած է Սովետական Միութեան լավագույն կոմսոպոլիտոսների շարքում:

Հիանալի կոլեկտիվ ունի Օպերայի և բալետի թատրոնը, նրա բեմը զարդարում են ՍՍՌ Միութեան ժողովրդական դերասանուհի Հայկանուշ Դանիելյանը, վաստակավոր դերասաններ Շարա-Տալյանը, Պավել Լիսիցյանը, դերասանուհի Տ. Սազանդարյանը, դիրիժորներ Սարալյանը, Թավրիզյանը, Բուզադյանը և այլն, որոնք Մոսկվայում հայկական արվեստի դեկորայի ժամանակ ըստ արժանավույն պարզեւտրվեցին Սովետական Միութեան շքանշաններով:

Դրամատիկական թատրոնների մեջ որպէս հսկա խոյանում է Սունդուկյանի անվան թատրոնը, — դա Հայաստանում առաջին սովետական թատրոնն է, որը բեմի տաղանդավոր վարպետների մի ամբողջ պլեադա է դաստիարակել: Երևանի հասարակայնութիւնը սիրում է Սունդուկյանի անվան թատրոնը և հպարտանում նրանով, թատրոնի նշանավոր դերասաններով: Այնպիսի դերասանների անունները, ինչպէս Համիկը, Վաղարշ Վաղարշյանը, Արուս Ռսկանյանը, Ալեո Ավետիսյանը, Հրաչյա Ներսիսյանը, Զանիբեկյանը, Օյրա Գուլազյանը, Գ. Ավետիսյանը, Ռուզաննա Վարդանյանը, Վալիկ Վարդանյանը, Մ. Մանվելյանը, Սուդան Գարագաշը և այլն, — իրավամբ մեծ ժողովրդականութիւն են վայելում: Իբրեւ ինչ անել է երիտասարդ, ընդունակ դերասանների մի ամբողջ նոր սերունդ:

Վերջին տարիներս զգալի հաջողութիւններ է ձեռք բերել սուսական դրամատիկական թատրոնը՝ վաստակավոր օնեխայր Լ. Բարանթարի փորձառու ղեկավարութեամբ: Հաջողութեամբ




«Մասունցի դավիթ» մարտիտայի կենտրոնը

ածուս է նաև Աղբրեջանական թատրոնը: Այդ թատրոններն արդեն բռնել են ստեղծագործական զարգացման հաստատուն ճանապարհը և հանդիսատեսների մեջ ժողովրդականություն են ձեռք բերում:

Այսօրվա Երևանը կուլտուրական և հանդիսատեսային հիմնարկությունների իր լայն ցանցով Միության առաջավոր կուլտուրական քաղաքներից մեկն է:

Քաղաքի արդյունաբերական և կուլտուրական արագ զարգացումը բնակչության անընդհատ աճով հանդերձ՝ անհրաժեշտ դարձրեց ընդարձակել նրա սահմանները և արժատապես վերահասուցել այն: Հետաքրքիր է նկատել, որ քաղաքի պլանավորման բավական համարձակ այն նախագիծը, որը դեռ 1923 թվականին կազմել էր ակադեմիկ Թամանյանը, վերջին տարիներս արդեն չէր համապատասխանում քաղաքի փաստական զարգացմանը: Ռեալ կյանքը և զարգացման տեմպերը կանխեցին նախագծային ենթագրությունները, իսկ բնակչության ենթագրական թիվը (150 հազար) դերակատարվեց ժամկետից սուաջ: Այդ իսկ պատճառներով անհրաժեշտ եղավ նորից պլանավորել քաղաքը և քաղաքների պլանավորման Լենինգրադի ինստիտուտի օգնությամբ Երևանը նոր, գլխավոր պլան ունեցավ:

Հայաստանի սովետական ճարտարապետների կոլեկտիվ աշխատի և ինտենսիվ աշխատանքի շնորհիվ մեծ աշխատանք է կատարվել այն սխալներն ու թերությունները վերացնելու համար, որ թույլ էին տրվել անցյալում, քաղաքի ճարտարապետական ձևավորման գործում: Շենքերի ճարտարապետական ձևավորումը, ինչպես և փողոցների, հրապարակների և այգիների ձևավորումը — որոնք կառուցված են վերջին ժամանակաշրջանում — խիստ տարբերվում է անցյալ տարիների կոնստրուկտիվիզմից: ճարտարապետներ Սաֆարյանի, Մարկ Գրիգորյանի, Մարգարյանի, Բախչինյանի, Հակոբյանի, Գ. Թամանյանի, Չարդարյանի, Տեր-Ավետիսյանի անունները հայտնի են մեր ռեսպուբլիկայի շինարարներին և ճարտարապետական հասարակությանը: Վերջին տարիներս ըստ նրանց պրոեկտների՝ քաղաքում կառուցված են բազմաթիվ գեղեցիկ շենքեր, որոնց թվում՝ Բիո-Բիմիական ինստիտուտը, Գրքի տունը, Արմեներգոյի շենքը, Մյասնիկյանի անվան Հանրա-



Մանուկյան երազարարի Երևանում


լին գրադարանը, Կիրովի անվան «Մկ—Սովպրեն» կոմբինատի բնակելի տունը, «Դինամոյի» ստադիոնը, Ստալինյան ուսյոնի «Սասունցի Դավիթ» կինոն, բազմաթիվ բնակելի շենքեր Ստալինյան և Հարավային պրոսպեկտների վրա և այլն: Ստալինյան հնդամյակների տարիներին մեր ԲՈՒՀ-երը ավել են մի շարք ընդունակ երիտասարդ ճարտարապետներ, որոնք ձևավորել են քաղաքի բազմաթիվ ղեկեցիկ շենքերը:

Քաղաքի ճարտարապետական ձևավորումն առանձնապես խառնախփ կերպով և հաջողությամբ է ընթացել վերջին երեք տարում: Առանց չափազանցության կարելի է ասել, որ այդ տարիները կերպարանափոխել են Երևանը: Այդ տարիների առանձնահատկությունն այն է, որ շինարարությունը կատարվում էր նախ՝ արագ տեմպերով և երկրորդ, որ ամենազլխավորն է, խիստ կարգով ու ոճով, հիմնված մի շարք փողոցներ և մադիսարալներ բանալու վրա, մի բան, որ անհրաժեշտորեն թելադրվում է քաղաքի արագ աճով: Այդ ամբողջ աշխատանքին պուզընթաց՝ քանդվել են հին տները, փակուղիներն ու նրբափողոցները: Այս տարիների ընթացքում կառուցվել են՝ Ստալինի հոյակապ պրոսպեկտը, Հարավային պրոսպեկտը, Օրջոնիկիձեի փողոցը, Կիրովի փողոցը և այլն:

Այս տարիների առանձնահատկությունն այն էր, որ ճարտարապետական առանձին օբյեկտների փոխարեն ստեղծվում էին ճարտարապետական ամբողջական անսամբլներ, և քաղաքի ընդհանուր բարեկարգման գործում խստորեն որոշված ճարտարապետական-պլանային կարգ էր ստեղծվում:

Խոշոր աշխատանք է կատարված քաղաքում առաջավոր կոմունալ տնտեսություն, ստեղծելու գծով: Ստեղծված է ըստ էության նոր կոյուղու ցանց, ուժեղացված է ջրամատակարարումը, ստեղծված է քաղաքային տրանսպորտային կայուն աղնատեսություն, տրամվայ՝ Զիս 101 շքեղ ավտոբուսները զարդարում են Երևանի փողոցները:

Քաղաքի ընդարձակմանն ու ճարտարապետական ձևավորմանը պուզընթաց՝ մեծ աշխատանք է կատարվել քաղաքի և նրա շրջակայքի բուսապատման գծով: Այժմ Երևանը և մանա-



«Սեվան» հյուրանոցը Երևանում

Վանդ այն շրջապատող քարքարոտ բլրալանջերը ծածկված են խիտ բուսականութեամբ — ծառերով ու կանաչով: Առճիշտ վերջ է արված Երևանի ցեցերին — փոշուն և մալարիային: Զարգացած արդյունաբերության քաղաքը, կուլտուրայի և գիտական մտքի քաղաքը դառնում է հիանալի մարտարապետության քաղաք:

Մեր քաղաքի ճարտարապետության ամենանշանավոր հուշարձանն է հանդիսանում մեծ առաջնորդ Լենինի արձանը, որ կառուցվում է քաղաքի կենտրոնում, Լենինի հրապարակում, քանդակադործ Մերկուրովի և ճարտարապետներ Պերեմուզովայի ու Վարդանովի նախագծի համաձայն: Շինանյութի (գրանիտ և մարմար) հիանալի որակը, արձանի հսկայական մեծությունը, դժայելի նրբությունը քանդակները քարի վրա, — (որոնք փոխառված են հայկական հնադարյան վարպետներից) և ձևով ազդային, բովանդակությամբ սոցիալիստական ճարտարապետության բարձր ոճն այդ հուշարձանը դասում են Վ. Ի. Լենինի լավագույն մոնումենտների շարքը: Որպես հսկա, խոյանում է այդ արձանը Երևանի կենտրոնում և պատկերում է սիրելի առաջնորդի և ուսուցչի հանձարեղ կերպարը: Լենինի արձանի բացումը տեղի կունենա Հայաստանում սովետական իշխանություն հաստատվելու 20-ամյակի օրը:

Երևանի վերակառուցման, նոր, սոցիալիստական քաղաքի ստեղծման ասպարիզում ձեռք բերված այդ նվաճումները հնարավոր եղան շնորհիվ Հայաստանի բոլշևիկների կոմպարտիայի ամենօրյա օպերատիվ ղեկավարության, շնորհիվ ընկեր Ստավինի և նրա ամենամոտ ղինակից ընկեր Միկոյանի ամենօրյա օգնության:

Գեղեցիկ և զբավիչ է Երևանը նաև իր գիրքով ու ուլյեֆով. նա շրջապատված է պողատու և խաղողի այգիների լայնատարած, կանաչ օղակով և սքանչելի տեսարաններով: Ո՞ւմ չեն հիացնում բուրմունքներով լի Երևանի ոսկի աշուշը, Արարատի և Արագածի հիասքանչ, հավերժ ձյունապատ զազաթների հոգեզմայլ տեսարանները, Արարատյան դաշտի

գմբուխտե հեռատանը: Հոյակապ են Երևանի թաղամասերի և փողոցների տեսարանները:


Ըստ երևույթին հիմքից զուրկ չէր, որ կենտրոնական մասում թղթակիցներից մեկը, Միխայել Ռոզենֆելդը վերջերս հրապարակված իր ակնարկում Հայաստանի մասին դրում էր.

«Ժամանակակից քարաշեն Երևանը եկվորներին ասլեցնում է իր հոյակապ փողոցներով, իսկ Ստալինյան պրոսպեկտը կարող է իբր զարդարանք ծառայել աշխարհի հռչակավոր մայրաքաղաքներից ամեն մեկի համար»:

Բայց այս հաջողությունները ոչ միայն չեն հանգստացնում Հայաստանի բոլշևիկներին և աշխատավորներին, այլև ընդհանրապես, ոգևորում են նրանց ու մղում դեպի նոր սխրագործություններ, շեպի նոր ստալինյան գործեր՝ Երևանը դարձնելու Սովետական Միության խոշոր ինդուստրիալ կենտրոններից մեկը: Դրա երաշխիքն է բոլշևիկների փառապանծ պարտիայի փորձված ղեկավարությունը՝ Մեծ Ստալինի գլխավորությամբ:

Լրացավ վերածնված, Սովետական Հայաստանի քսան տարին: Մոռադված են բազմաչարչար Ժողովրդի հին վերքերը, իսկ սովետական սերունդը նրանց մասին իմանում է մեծերի և ծերերի պատմածներից: Երջանի՛կ սերունդ:

Աղատադրված և վերածնված հայ Ժողովուրդը Սովետական Միության մեծ ընտանիքում, Ստալինյան Կոնստիտուցիայի լուսալայծառ արեղակի տակ կառուցում է իր երջանիկ, նոր կյանքը: Հայ Ժողովուրդն անցավ պայքարի և հաղթանակների քանաճյա հերոսական ուղին, որ հարթել էին նոր աշխարհի մեծ հանճարները — Լենինը և Ստալինը: Այդ 20 տարիները մեք Ժողովրդին ավելի շատ բան տվին, քան նրա պատմության անցյալ, ավելի քան քսան դարերը: Սովետական իշխանությունը Հայաստանը դարձրեց ծաղկող երկիր, բարձր ինդուստրիալ տեխնիկայի և ինտենսիվ դյուրստնտեսության երկիր, սովետական առաջավոր գիտության և սոցիալիստական կուլտուրայի երկիր: Դարավոր ճնշումից իր աղատագրությամբ, իր ազդույթն վերածնությունը և իր երջանիկ կյանքով հայ Ժողովուրդը պարտական է Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեվոլյուցիային,



Դրացարդն Գիտնական ցուցակներում

բուլլեիկները պանծալի պարտիային, հանձարեղ Լենինին և Ստա-
լինին: Մեծ և անզնահատելի յե ընկեր Ստալինի դերը
հայ ժողովրդի ազատագրութեան մեջ: Ընկեր Ստալինը
հայ ժողովրդի բախտով հետաքրքրվում էր դեռ իր ռեվո-
լյուցիոն գործունեութեան սկզբից— անցյալ դարի 90-ական
թվականներից սկսած: Տասնամյակների ընթացքում ընկեր Ստա-
լինը, որպես հարազատ հայր, հոգում էր այն մասին, որ մեր
ժողովուրդն ազատվի դարավոր ճնշումից և բարբարոսական շա-
հադործումից: Նա դառնալիքից և կոտից այնպիսի բողոքունչ
ռեվոլյուցիոններների, հայ ժողովրդի այնպիսի պանծալի գա-
վակներին, ինչպիսին են Ստեփան Շահումյանը, Սուրեն Սպան-
դարյանը և Անաստաս Միկոյանը:

Լենինի հետ միասին, այնպի ջան քառասուն տարի զխա-
վորելով բուլլեիկների կոմունիստական պարտիան, Ստալինը
ժիշտ օգնութեան ձեռք է մեկնել հայ ժողովրդին: Երկար տա-
րիներ շարունակ նա անողոք պայքար է մղել հայ ժողովրդի
թշնամիների և նրա դավաճանների դեմ, սկսած դաշնակիներից,
սպեցիֆիկներից և վերջացրած Անտանտայի իմպերիալիստական
զիչատիչներով: Իսկ երբ վրա հասավ մեր ժողովրդի ճակատա-
գրական ժամը, երբ 1920 թվի աշնանը նա ընկավ թուրքական
վանդալների անմիջական հարվածի տակ, կանոնաձև լինելով լա-
կատար Ֆիզիքական ոչնչացման սարսափելի վտանգի առաջ,—
հայ ժողովրդի կյանքում այդ ամենակրիտիկական մոմենտին
դարձյալ ընկեր Ստալինը նրան օգնութեան հասավ: Այդ ծանր
օրերին ընկեր Ստալինը ժամանեց Բաղու և իրեն հատուկ վրձ-
նականութեամբ հարց դրեց կործանվող հայ ժողովրդին օգ-
նութեան կազմակերպելու մասին: Ընկեր Ստալինը բուլլեիկյան
կազմակերպութեաններից պահանջեց ազատել Հայաստանը, հայ
ժողովրդին, ազատել անհապաղ, ինչ կերպ էլ որ լինի: Եվ կա-
տարվեց մեծ գործը: Ընկեր Ստալինը մեծագույն վարպետու-
թեամբ կազմակերպեց հայ ժողովրդի ազատագրութեան պանծա-
լի գործը: Փրկվեց Հայաստանը, փրկվեց հայ ժողովուրդը:
Թող այժմ խորը գերեզմանից իր դուրսը բարձրացնի հայ մ'ծ
լուսավորիչ Սաչատուր Աբովյանը, և մենք կպատասխանենք
նրա՝ դառնութեամբ ու երազանքով լի հարցին, որ տվել էր
նա իր ժողովրդին սրանից հարյուր տարի առաջ.

Ին ի՞նչ շունչ կըլի, որ էս նոր հողին
Փչի, վերկացնի քնից մեր ազդին.
Ին ի՞նչ ձեռք կըլի, որ մեր աշխարհին
Էլ եղ սիրա տա ու կանոնացնի կրկին:—

Աբովյանն իր ամբողջ բողոքունչ սրտով, բանաստեղծի իր
ամբողջ բյուրեղյա հողով հավաստիացնում էր:

Ա՛խ, ես էն ձեռին կյանքս դուրբան կանեմ,
Ին կոխած հողին երեսս կքսեմ,
Ապրիմ՝ իմ արինս նրան մատաղ կանեմ,
Մեռնիմ՝ հողիցն էլ միշտ նրան կ'օրհնեմ:

Այդ ուժը գտնվեց, մե՛ծ լուսավորիչ: Այդ ուժի անունն է
բուլլեիկը, որն ընդմիշտ բուժեց Հայաստանի վերքերը:

Այդ ձեռքը Ստալինի ձեռքն է,— հայ ժողովրդի անմոռանա-
լի և մեծ բարեկամի ձեռքը, որը վիթխարի ուժով երկրի երե-
օից ջնջեց նրա թշնամիներին և ճնշողներին: Դա այն ձեռքն է,
որն ամուր բռնել է կոմունիզմի մեծ նալի զեկը, այն նալի,
որը շեշտակի սլանում է դեպի կոմունիզմի լուսապայծառ դա-
պաթները: Եվ հայ ժողովուրդը պատրաստ է Ստալինի առաջին
խի կոչով իր կյանքը տալու հանուն Լենինի—Ստալինի մեծ գոր-
ծի, հանուն սոցիալիզմի Մեծ Հայրենիքի:

Սովետական Հայաստանի քանաձայնի այս երջանիկ օրը
երախտազետ հայ ժողովուրդն անսահման սիրո և չ'որհակա-
լութեան զգացումով իր առաջին հայացքը դարձնում է դեպի
եր մեծ ազատարարը և բարեկամը — հարազատ Ստալինը, և
իր պրետների շուրթերով, ամբողջ սրտով երգում է.

Մեր ձայնը քե՛զ, անմահ արև, մեր սերը քե՛զ, ո՛վ
իմաստուն,
Ողջո՛ւյն քեզ հայ ժողովրդից, որ վառ գարուն ունի
սրտում:

Մեր զետերն են լեզու առել, մեր աղբյուրներն են
կարկաչում,
Երգիչները բլբուլ դառել, անուշ երգով քե՛զ են կանչում:

Հայ ժողովուրդը սրտատրոփ իր մոտ հյուր է կանչում իր
հարազատ բարեկամին, իր հորը, իր սիրելի Ստալինին.

1914

Մեզ հավերժույ հայր Ստալին, ե՞րբ ես, ե՞րբ ես գալու
մեզ հյուր:

Երբ գաս մի օր, կամ զեթ մի ժամ, երբ որդոցդ դու
այցի գաս,

Մեր Մեանը, որպես վճիռ ու վառ զինով լիքը մի թաս,
Կբարձրացնեն ջո վառ սիրով սեզ լեռները մեր ոսկեղեն,
Եվ ի պատիվ ջո թանկ կենացն՝ երկնքի մեջ պիտի խմեն...
Արի՛, արի, օ՛ հյուր մեր վեհ, հավերժական հյու՛ւր մեր
բարի...

Հայ ժողովուրդը երգվում է իր բարեկամին, ժողովուրդնե-
րի մեծ առաջնորդին, որ ինքն անսահմանորեն նվիրված է իր
հայրենիքին.

Երգվում ենք քեզ, հայր Ստալին, երգվում կրկին,
կրկին անգամ,

Երգվում սիրով ժողովրդի վերածնված մեր հայկական,
Որ հայրենի աշխարհը մեր կալաչապանենք հերոսական,
Որ թշնամին ոտք չի դնի մեր հողերին լույս, սրբազան:
Թող շառաչեն որքան կուղեն սև ամպերը հողմաշառաչ,
Սովետական հայրենիքը մի անառիկ բերդ է կանդուն,
Գնում ենք մենք, հայր Ստալին, ջո դրոշով զեպի առաջ,
Դեպի գալիք երջանկածով կոմունիզմի պայծա՛ռ
դարուն...

Հայ ժողովուրդը բուլղերիկների գլխավորությամբ, մեծ
Ստալինի իմաստուն առաջնորդությամբ հաղթական երթով
գնում է դեպի կոմունիզմի նոր հաղթանակները: Նա չի խնա-
յի ո՛չ իր ուժերը, ո՛չ էներգիան, իսկ եթե պահանջվի—նույն-
իսկ իր կյանքը, որպեսզի կատարի ստալինյան առաջադրանքը
Սովետական Հայաստանի հետագա ծաղկման մասին, մեր եր-
կիրն անառիկ բերդ դարձնելու մասին:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ	7
ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԳԻՐԳՐ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	36
ԱՐԴՑՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ	50
ԳՑՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	60
ԿՈՒՆՑՈՒՐԱԿԱՆ ՇՆՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	84
ԳԻՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	93
ՀՍՑ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՐՎԵՍԸ	103
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	111
ԵՐԵՎԱՆԸ—ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ	119



Կողմը
Նկարիչ՝ Ա. Ն. Խոզրավերչյան

Տեխ. խմբագիր
Ս. Ս. Լիբունյան
Սրբագրիչ՝
Վ. Ավագյան

Պ. Պ. 2493, Հր. ա. 1379

Պատվեր 767, Տիրաժ 6000.

Հանձնված է արտադրության 12/XI 1940 թ.

Ստորագրված է տպագրության 21/XI 1940 թ.

Հայկահանրատի տպարան, Երեվան, Լենինի, 65

94

«Ազգային գրադարան»



NL0116734

9309